

ISSN 2579-2504

ԱՐԴԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

MODERN PSYCHOLOGY
SCIENTIFIC BULLETIN

АКТУАЛЬНАЯ ПСИХОЛОГИЯ
НАУЧНЫЙ ВЕСТНИК

ԵՐԵՎԱՆ 2018, # 1

*Հրատարակվում է ԵՊՀ փրիխոսփայության և հոգեբանության
ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

«Արդի հոգեբանություն» գիտական հանդեսը լույս է տեսնում տարեկան երկու անգամ:

Научный вестник **«Актуальная психология»** выходит два раза в год.

«Modern Psychology» Scientific Bulletin published twice a year.

«Արդի հոգեբանություն» գիտական հանդեսի խմբագրական խորհուրդ

Ավանեսյան Հ. Մ. – գլխավոր խմբագիր, Բերբերյան Ա. Ս., Մարգարյան Վ. Հ., Նաղդյան Ռ. Մ., Լոքյան Ա. Բ., Սեդրակյան Ս. Ա., Հարությունյան Ս. Ֆ., Գրիգորյան Վ. Հ., Աղուզումցյան Ռ. Վ., Բաղդասարյան Ա. Ս., Խաչատրյան Ն. Գ., Գասպարյան Խ. Վ., Բաբայան Հ. Ա., Պապոյան Վ. Ռ., Հովհաննիսյան Ս. Վ., Ասրիյան Է. Վ.:

Միջազգային գիտական խորհուրդ

Ալախվերդով Վ. Մ., Ակոպով Գ. Վ., Արյան Ա., Բասկո Լ., Երմակով Պ. Ն., Իմեդաձե Ի. Վ.

Editorial board of “Modern Psychology” Scientific Bulletin

Avanesyan H. M. – Editor-in-Chief, Berberyan A. S., Margaryan V. H., Naghdyan R. M., Harutyunyan S. F., Lokyan A. B., Grigoryan V. H., Sedrakyan S. A., Aghuzumtsyan R. V., Baghdasaryan A. S., Khachatryan N. G., Gasparyan Kh. V., Babayan H. A., Papoyan V. R., Asriyan E. V., Hovhannisyanyan S. V.

International Scientific Board

Allakhverdov V. M., Aryan A., Akopov G. V., Basco L., Yermakov P. N., Imedadze I. V.

Редакционный комитет научного вестника «Актуальная психология»

Аванесян Г. М.- главный редактор, Берберян А. С., Маргарян В. Г., Лосян А. Б., Нагдьян Р. М., Седракян С. А., Арутюнян С. Ф., Григорян В. Г., Агузумцян Р. В., Багдасарян А. С.,

Хачатрян Н. Г., Гаспарян Х. В., Бабаян А. А., Папоян В. Р., Оганесян С. В., Асриян Э. В.

Международный научный комитет

Акопов Г. В., Аллахвердов В. М., Арян А., Баско Л., Ермаков П. Н., Имедадзе И. В.

«ԱՐԴԻ ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅՈՒՆ»-Ը՝ ԳԻՏԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱՎԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԹԱԿ

Ավանեսյան Հ. Մ. (ԵՊՀ, Երևան, Հայաստան)
avanesyah@ysu.am

Հոդվածը նվիրված է արդի հոգեբանության բնագավառներում գիտական հրապարակումներին ներկայացվող չափանիշների ձևավորման և կիրառման սկզբունքներին: Աշխատանքում մասնավորապես քննարկվում են էմպիրիկ հետազոտությունների տեսական հիմնավորման, մեթոդաբանական սկզբունքների, իմաստաբանական հիմնահարցերի, տերմինաբանության կիրառման և այլ խնդիրներ, ինչպես նաև ներկայացվում է «Արդի հոգեբանություն» հանդեսի առաքելությունները և գիտակիրառական նշանակությունը:

Հանգուցային բառեր՝ Գիտական հոգեբանություն, մեթոդաբանություն, հետազոտություն, տերմինաբանություն, սկզբունքներ, հիմնախնդիրներ:

Հոգեբանության տարբեր բնագավառների էմպիրիկ և զուտ փորձարարական հետազոտությունների տեսական մոտեցումների վերլուծությունը մատնանշում է դասակարգման համակարգերի բազմազանություն, ինչը հաճախ հանգեցնում է հակասական եզրահանգումների և բազմաթիվ գիտնականներին բարդ իրավիճակի առջև է կանգնեցնում: Դա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ հոգեբանական հետազոտությունը հիմնականում ստեղծագործական գործընթաց է և յուրաքանչյուր նոր պատմական փուլում ենթակա է նոր գիտական ռեֆլեքսիայի: Այս առումով խմբագրական խորհուրդը, հիմնվելով գիտական սկզբունքների վրա, մշակել է գիտական հոդվածների ընտրության չափանիշները, որոնք հրապարակվելու են հանդեսում:

Խոսելով գիտության, և մասնավորապես՝ գիտական հոգեբանության դերի մասին՝ մեր հայրենակից և տաղանդավոր գիտնական Վիկտոր Ալխսվերդովը, ում հետ մենք տարիներ շարունակ համագործակցում ենք, նշել է կարևոր միտք. «Թեև գիտությունը երբեք չի գտնի վերջնական լուծում, միևնույն է այն կարևոր գործ է կատարում. հեռացնում է այն տարբերակները, որոնք մարդկանց սխալ տեղ են ուղղորդում» [3, էջ.12]: Եվ ավարտելով արդի հոգեբանության համար նշանակալի գիտական աշխատանքը՝ հեղինակն ընդգծում է տեսականորեն հիմնավորված հետազոտությունների նշանակությունը և նշում. «Սակայն տեսական մտահղացման ազդեցությամբ իրականացված գիտափորձերը մնում են ընդմիջտ, եթե նույնիսկ դրանք հերքում են այդ մտահղացումը: Ավելին, փորձարարական հերքումը հրաշագործ ուժ ունի» [3, էջ 503]: Մենք մշտապես համոզվում ենք դրանում՝ ուսումնասիրելով այս կամ այն՝ հիմնականում թեկնածուական կամ

դրկտորական հետազոտական աշխատանքներ, որոնց հեղինակները փորձում են ամենաօրիգինալ և ստեղծարար գաղափարները «ներդնել» գիտափորձի շրջանակներում և հետո միայն գտնել տեսական հիմք դրանց արդյունքների մեկնաբանման համար:

«Գիտական հետազոտությունների մեթոդաբանությունը» մագիստրոսական դասընթացի ժամանակ մենք ուսանողների հետ սերտում ենք Թոմաս Կունի «Գիտական հեղափոխությունների կառուցվածքը» գիրքը և համեմատական վերլուծություն տանում Օ. Կոնտի, Կ. Պոպերի, Ի. Լակատոսի և գիտության փիլիսոփայության այլ ներկայացուցիչների տեսակետների միջև՝ կիրառելով այդ գիտելիքը հոգեբանական հետազոտություններում: Որպես գիտական բանավեճերի հանրային բնույթի օրինակներ դիտարկվել են հոդվածներ և մենագրություններ, մասնավորապես՝ Թ. Կունի աշխատության թարգմանությունը ռուսական «Գիտության փիլիսոփայություն» ամսագրում [4]: Նախ հեղինակը գիտական էթիկայի տեսանկյունից թվարկում է մոտեցումների նմանությունը, այնուհետև առաջարկում վիճահարույց տեսակետներ՝ «Այն, ինչը որոշ մարդիկ համարում են ապշեցուցիչ նման իրենց տեսակետին, մյուսների համար կարող է աննկատ մնալ: Այս երևույթը հասկանալու ցանկությունը եղել է խթան՝ իմ և սրբ Կարլի հայացքների համեմատության համար: Սակայն այս համադրումը չպետք է ենթադրի դետալների պարզ համեմատություն: Ուշադրություն պետք է դարձվի ոչ թե իմաստի ծայրամասային հատվածներին, որոնցում կորսվել են մեր երկրորդական անհամաձայնությունները, այլ հենց գլխավորին, թե ինչում ենք ես և սրբ Կարլը համակարծիք» (էջ. 22): Նման բազմաթիվ օրինակներ առկա են ակադեմիական գիտական ամսագրերում, սակայն այդպիսի մոտեցումներ ժամանակակից հայ գիտական գրականության մեջ դժվար է գտնել: Անհրաժեշտ է գտնել մեր գիտնականների՝ այդպիսի առաջադեմ ճանապարհով գնալու «բանալին»:

Հոգեբանական աշխատանքների և գիտական տեղեկատվության հստակ չափանիշների «անկախության» խնդիրը երկար տարիներ հուզում են մասնագետներին, այդ թվում նաև մեզ [2]: Հիմնական տեղն զբաղեցնում է գիտական հոդվածում փիլիսոփայական և հոգեբանական բաղադրիչների թույլատրելի համաչափ համադրության խնդիրը: Ռուսական և արտասահմանյան առաջատար հոգեբանական դպրոցների գիտական ավանդույթները եղել և շարունակում են կապված մնալ փիլիսոփայական գիտելիքին: Սակայն հոգեբանական գիտելիքը չի կարող սահմանափակվել միայն փիլիսոփայության ոլորտի մտորումներով. այն՝ ա) հարստանում է բնագիտական ձեռքբերումներով՝ հիմնվելով հոգեֆիզիոլոգիայի և փորձարարական հոգեբանության հիմնարար հետազոտությունների վրա, բ) ընդլայնվում է պատմա-մարդաբանական, սոցիալ-մշակութային և մի շարք այլ հայեցակարգերի միջոցով: Հոգեբանությանը բնորոշ գիտելիքների այդպիսի կուտակումը հետազոտողի առաջ դնում է բավական բարդ խնդիր, մասնավորապես՝ այս կամ այն հոգեբանական

հիմնահարցի դիտարկում տարբեր տեսանկյուններից՝ չկորցնելով երևույթի մասին ամբողջական պատկերացումը, ինչպես նաև գիտական խնդրի շրջանակներում հմտորեն հետազոտելով և մեկնաբանելով տարբերակման և ամբողջացման գործընթացները: Դա ևս մեկ անգամ հաստատում է հոգեբանական հատուկ գիտական հրատարակությունների նշանակությունը, որոնք կարող են դառնալ բաց լսարան գիտական մտքի տարածման և հոգեբանների ժամանակակից ձեռքբերումների համեմատման համար:

Մեր կարծիքով, հոգեբանական տերմինաբանության յուրահատկությունը տարբեր տեսությունների և դպրոցների, դրանց կողմից (ազատ ոճով) առաջադրված զանազան հասկացությունների համակեցությունն է (սիմբիոզը) և թույլատրելիության սահմանների ընդլայնումը: Այս հանգամանքը, կարծում ենք, խնդրահարույց է ոչ միայն միջազգային հաղորդակցման, այլև հոգեբանական երևույթների հստակ ու միանշանակ նկարագրության համար: Բնականաբար, նոր երևույթների բացահայտման հիման վրա առաջացած հասկացություններից առաջացող նոր երևույթների ներմուծման անհրաժեշտությունը կարող են խորապես հասկանալ միայն տվյալ գիտությամբ զբաղվող մասնագետները, ովքեր հստակ պատկերացնում են նոր երևույթների առանձնահատկությունները և նրբերանգները: Սակայն հաճախ լեզվին թերի տիրապետելու պատճառով հանդիպում ենք օտարալեզու կամ անհամապատասխան եզրույթների ներմուծման երևույթին: Մյուս կողմից տվյալ գիտության մեջ մասնագետ չհանդիսացող լեզվաբանների կողմից տերմինաստեղծական աշխատանքի արդյունքում անտեսվում են նոր հասկացությունների միջոցով արտահայտվող երևույթների յուրահատկությունները: Վերջինս առավել ակնառու է դառնում հոգեբանությունում՝ գիտական գրականության թարգմանությունների դեպքում: Այդ խնդիրն էլ ավելի է լրջանում այն հանգամանքով, որ հոգեբանության մեջ կիրառվող բազմաթիվ երևույթներ ամենօրյա խոսակցական լեզվում հաճախ լրիվ այլ իմաստ են կրում [1]: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն կա որոշակի պարբերականությամբ հասարակությանը մատչելի ընկալվող գիտական նյութերի հրապարակման, ինչին կծառայի հենց «Արդի հոգեբանություն» գիտական հանդեսը:

Հանդեսի միջոցով հնարավոր կլինի՝

1. Իրազեկել հոգեբանության և դրա բնագավառների պատմության, զարգացման առանձնահատկությունների և ակնկալվող երևույթների մասին, այդ նպատակով հրավիրում ենք հանրապետության և արտերկրի առաջատար մասնագետներին (առաջին հերթին՝ խմբագրության անդամներին) տպագրության համար նախապատրաստել գիտական աշխատանքներ:
2. Հոգեբանական հետազոտությունների արդիականացման համատեքստում ստեղծել գիտական բանավեճերի և քննարկումների հարթակ, զարգացնել առողջ քննադատության սկզբունքը՝ որպես գիտության զարգացման նախապայման:

3. Ընձեռել երիտասարդ գիտնականներին (մագիստրոսներին, ասպիրանտներին, մինչև 35 տ. հետազոտողներին) օրիգինալ և ժամանակակից հետազոտությունները ներկայացնելու միջոց՝ խրախուսելով մասնավորապես փորձարարական հետազոտությունները:
4. Մեր կողմից կազմակերպվող երիտասարդական՝ «Երիտասարդ հոգեբանների միջազգային գիտաժողով» և ավանդական միջազգային՝ «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» գիտաժողովներին ներկայացված լավագույն գիտական նյութերը տպագրել հանդեսում:
5. Աջակցել թեստերի պարտադիր սոցիալ-մշակութային տեղայնացմանը՝ հայրենական հոգեդիագնոստիկայի զարգացումը խրախուսելու նպատակով:
6. Հիմք հանդիսանալ միջազգային կապերի և համագործակցության ընդլայնման և փորձի փոխանակման. դրան կնպաստեն հիմնականում խմբագրության անդամները, ովքեր արդեն մեծ փորձ ունեն և անդամակցում են մի շարք արտասահմանյան հաստատությունների (Université d'Avignon Chercheur Équipe Culture et Communication Centre Norbert Elias, Русский Университет Дружбы Народов, научно-практический журнал “Живая Психология”, научно-методический журнал “Спортивный психолог” և այլն):
7. Գիտական հանդեսը գրանցված կլինի միջազգային ստանդարտ համարակալման ISBN և ISSN համակարգերում, ինչը կհեշտացնի հղման և միջազգային հարթակում ճանաչելի լինելու հնարավորությունը:
 Հանդեսն ունի էլեկտրոնային կայք՝ psyarm.com, որտեղ ներկայացված կլինի ամբողջ տեղեկատվությունը, ինչպես նաև հետագայում տեղադրված կլինեն առցանց նյութերի ամփոփ տարբերակները և հետագա նորությունները:
 «Արդի հոգեբանություն» գիտական հանդեսը բաց է նոր մասնագետների համար և նպատակ ունի ընդգրկել նաև ուսանողական հատվածը՝ նրանց համար ծառայելով որպես ուսումնական նյութերի աղբյուր, ինչը հետագայում թույլ կտա ստեղծել ուրույն հոգեբանական դպրոց: Նպատակները ամբիցիոզ են, սակայն կարող են հիմք դառնալ հետագա առաջընթացի և զարգացման համար:

Գրականություն

1. **Ավանեսյան Հ. Մ., Հովհաննիսյան Հ. Ռ., Տաթևյան Հ. Ա.** – Հոգեբանական հայալեզու եզրույթների ձևավորման հիմնախնդիրները, / «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» միջազգային գիտաժողովի նյութեր. « Էդիտ-Պրինտ» հրատ., 2011, էջ 9-14

2. **Аванесян Г. М.** Анализ критериев научной информативности психологических публикаций. //Сборник научных статей, 3-я годовичная научная конференция РАУ, Ереван, 2009, с. 306-316
3. **Аллахвердов В. М.** Сознание как парадокс (Экспериментальная психология, т.1) – СПб, «Издательство ДНК», 2000. – 528 с.
4. **Кун Т.** Логика открытия или психология исследования? //Философия науки. Выпуск 3. Проблемы анализа знания. М., 1997. - С. 20-48.

“АКТУАЛЬНАЯ ПСИХОЛОГИЯ”- СОВРЕМЕННАЯ ПЛАТФОРМА ПУБЛИЧНОГО ПРЕДСТАВЛЕНИЯ НАУЧНЫХ ДОСТИЖЕНИЙ

Аванесян Г. М. (ЕГУ, Ереван, Армения)

Статья посвящена принципам оформления и применения критериев для научных публикаций в области современной психологии. В частности, в работе обсуждаются проблемы теоретического обоснования эмпирических исследований, использования методологических принципов, семантических и терминологических проблем, а также о предназначении и научно-прикладной направленности научного вестника «Актуальная психология».

Ключевые слова: научная психология, методология, исследование, терминология, принципы, проблемы.

“MODERN PSYCHOLOGY” - CURRENT BOARD OF PUBLIC PRESENTATION OF SCIENTIFIC ACHIEVEMENTS

Avanesyan H. M. (YSU, Yerevan, Armenia)

The article is devoted to the principles of design and application of criteria of scientific publications in the field of modern psychology. Particularly, the author discusses the problems of theoretical bases of empirical studies, the use of methodological principles, semantic and terminological problems, and also the purpose and scientific-applied direction of the scientific bulletin "Modern Psychology".

Key words: scientific psychology, methodology, research, terminology, principles, problems.

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

*Լորյան Ա. Բ. (ՀՀ պետական կառավարման ակադեմիա,
Երևան, Հայաստան)*

alokyandoc@mail.ru

*Աղուզումցյան Ռ. Վ. (ՀՀ պետական կառավարման ակադեմիա,
Երևան, Հայաստան)*

rvaghuzumtsyan@list.ru

Հոդվածում ներկայացվում է կառավարման հոգեբանության կայացման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում: Ժամանակագրական առումով անդրադարձ է կատարված կառավարման հոգեբանության զարգացմանը նպաստող գիտական աշխատություններին, գիտահետազոտական կենտրոններին և ծրագրերին: Ուրվագծված են կառավարման հոգեբանության արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև դրանց զարգացման հեռանկարային խնդիրները:

Հանգուցային բառեր. *կառավարման հոգեբանություն, կառավարիչ, գործունեության արդյունավետություն, զարգացում, հեռանկարային խնդիրներ:*

Արդի ժամանակներում կառավարման համակարգերի արագ փոփոխություններին զուգընթաց կառավարչական գործունեության հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը դառնում է անհրաժեշտություն: Որպես գիտակարգ՝ կառավարման հոգեբանությունը զարգացում է ապրում և փորձում է պատասխանել կառավարման արդի մարտահրավերներին: Կառավարման հոգեբանության հիմնարար խնդիրներից է կառավարչական գործունեության արդյունավետության ապահովումը, ինչը պայմանավորված է կառավարչի մասնագիտական և հոգեբանական որակներով: Կառավարման հոգեբանության նպատակն է կառավարչի կառավարչական հոգեբանական մշակույթի զարգացումը, հոգեբանական գիտելիքների և կարողությունների գործնական կիրառության և տեսական ըմբռնման համար կառավարման մեջ անհրաժեշտ հիմքերի ստեղծումը: Ընդգծենք, որ կառավարման հոգեբանական ասպեկտները բացահայտվում են կառավարման հոգեբանության շրջանակներում, որն ուսումնասիրում է կառավարչական գործունեությունը, դրա կազմակերպումը հոգեբանական արդյունավետության տեսանկյունից, ղեկավարի կամ կառավարչի անձի առանձնահատկությունները և նրա գործունեության պայմանների բարելավումը, գործունեության մեջ մարդկանց մոտիվացիայի հոգեբանական ասպեկտները, կազմակերպության գործունեության հարցերն

ամբողջությամբ: Ուշագրավ է, որ կառավարման հոգեբանությունն առաջացել է ոչ միայն կազմակերպության գործունեության արդյունավետության, այլև մարդու՝ աշխատանքային գործունեության մեջ ինքնազարգացման նպատակով:

Հայաստանում կառավարման հոգեբանությունն այսօր ընդլայնվում է, իրականացվում են հիմնարար հետազոտություններ, որոնք վերաբերում են կառավարման տարբեր ասպեկտների հոգեբանական առանձնահատկություններին: Ընդգծենք, որ հայ գիտական հանրության համար կառավարման հոգեբանությունը մեծ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներից է: Անդրադառնանք կառավարման հոգեբանության կայացմանը ՀՀ-ում:

Հայաստանում կառավարման և աշխատանքի հոգեբանության սկզբնավորման նախադրյալ կարող է համարվել 1979 թ. Երևանի պետական համալսարանում հիմնված ինժեներական հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիան (գիտական ղեկավար՝ Ռ. Աղուզումյան): Լաբորատորիայի ստեղծման գործընթացին մեծ օգնություն և աջակցություն ցուցաբերեց ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հոգեբանության ինստիտուտը՝ ի դեմս անվանի գիտնականներ Բ. Ֆ. Լոմովի (1984), Ա. Պ. Չերնիշևի (1980), Յ. Մ. Չաբրոդինի (2008), Լ. Մ. Դուբովոյի (2005), որոնք հետագայում անդրադարձան կառավարման հիմնախնդիրներին: Գիտական ուսումնասիրության գլխավոր ուղղություն դարձան մասնագիտական հոգեբանական ընտրության և ավտոմատիզացված կառավարման համակարգերում անձի հոգեբանական դրսևորման խնդիրները:

1993 թվականին լաբորատորիան հետազոտական գործունեություն է իրականացնում «Մասնագիտական ուսուցման մեթոդաբանական պրոբլեմները» թեմայի շրջանակներում: 1996-1999 թվականների ընթացքում լաբորատորիայում ուսումնասիրվում է «Կառավարման հոգեբանությունը փոքր և միջին բիզնեսում» թեման, որի աշխատանքներին մասնակցում էին ԵՊՀ հոգեբանության ամբիոնի և լաբորատորիայի աշխատակիցներ [14]: 1999 թվականին Երևանի պետական համալսարանում անցկացվել է միջազգային գիտաժողով «Փոքր և միջին բիզնեսի կառավարման հոգեբանական հիմքերը» խորագրով, և հրատարակվել է գիտաժողովի նյութերի ժողովածու:

Կառավարման հոգեբանության հայաստանյան պատմությունը վերջին 15 տարվա ընթացքում շարունակվեց տարբեր գիտական և ուսումնական հաստատություններում: Հարկ է նշել, որ մեր երկրում կառավարման հոգեբանության ոլորտին վերաբերող հետազոտություններն սկսվել էին մինչև դրա մասնագիտական առարկա դառնալը: Այդ ժամանակաշրջանում հրատարակված աշխատանքներից է «Կառավարման հոգեբանություն» ուսումնական ձեռնարկը (Վ. Մ. Եղիզարյան, Ս. Ա. Սեդրակյան, 2004թ.): Իբրև կառավարման հոգեբանության համակարգված ուսումնական շարադրանք՝ դա հայալեզու առաջին հրատարակությունն էր [7]: Կառավարման հոգեբանության ոլորտը հարստացնող մեծ արժեք ներկայացնող հետազոտություններից է Ս. Ռ. Գևորգյանի՝

«Դժվար կոնֆլիկտաձին իրադրություններում պետծառայողների փոխներգործության հոգեբանական հիմքերը» թեմայով հետազոտական աշխատանքը (2006թ.) [6]: Այն հանրային ծառայության համակարգի հոգեբանական ասպեկտների սակավաթիվ անդրադարձերից էր:

Կառավարման հոգեբանության ոլորտին առնչվող հետազոտություններ է իրականացրել Ռ. Հ. Պետրոսյանը 2010 թվականին (հետազոտության օբյեկտ են հանդիսացել ղեկավարի անձը և նրա՝ իշխանության ձգտելու դրդապատճառի դրսևորումները կառավարչական գործունեությունում), Ս. Գ. Ստեփանյանը՝ 2011 թվականին (հեղինակը կատարել է կադրային մենեջմենթի հոգեբանական գործոնների համալիր ուսումնասիրություն և զարգացրել գիտականորեն հիմնավորված կիրառական մոտեցում) [18, 20]: Գործարար միջավայրում կոնֆլիկտների հոգեբանական առանձնահատկություններին նվիրված հետազոտություն է իրականացրել Ա. Տ. Բեջանյանը (2012թ.): Հեղինակը բացահայտել է կոնֆլիկտները կանխարգելելու և դրանք լուծելու ուղիները, ինչպես նաև դրանց պատճառահետևանքային կապերն ու արդյունավետ կառավարման մեխանիզմները [5]:

Բազմաթիվ հետազոտություններ և գիտական աշխատանքներ են իրականացվել որոշումների կայացման, իմիջի, աշխատանքային դրդապատճառների վերաբերյալ: Այսօր էլ ոլորտի նկատմամբ գիտական հետաքրքրությունը չի նվազում, ինչը վկայում է այս գիտաճյուղի հանդեպ հանրության մեծ ուշադրության և կառավարման համակարգի հոգեբանական խնդիրներին ներկայացված պահանջի մասին: Այս ամենը նշանակում է, որ կառավարման հոգեբանությունը Հայաստանում բուռն զարգացում է ապրում: Սակայն մինչ այժմ կատարված ուսումնասիրություններից քչերն են առանձնանում պետական և մասնավոր կառավարման համակարգերի հոգեբանական յուրահատկությունների համակողմանի քննությամբ: Ուսումնասիրությունները հիմնականում կատարված են համակցված տարբերակով, և հաճախ ուսումնասիրման օբյեկտ են դարձել կառավարչի անձի հոգեբանական յուրահատկությունները՝ անկախ այն բանից, թե որտեղ է իրականացվում գործունեությունը՝ պետակա՞ն, թե մասնավոր համակարգում: Սակայն հոգեբանական գրականության մեջ բազմիցս շեշտվում են գործունեության պայմանների դերն ու նշանակությունը անձի այս կամ այն հատկության դրսևորման հարցում [22]:

Հայաստանում կառավարման հոգեբանության զարգացմանը նպաստեցին հայ հետազոտողների մի շարք աշխատություններ: Դրանցից են՝ «Անձի հոգեբանական անվտանգության հիմնախնդիրները» կոլեկտիվ մենագրությունը (2009թ.), «Իշխանության մոտիվացիայի դրսևորումը կառավարչական գործառույթներում» ուսումնական ձեռնարկը (Ռ. Պետրոսյան, 2012թ.), «Մասնագիտական պատրաստման համակարգում հոգեբանական պրոյեկտավորման սկզբունքները» աշխատությունը (Ռ. Աղուզումցյան, 2013թ.) [4, 18, 20]:

Կառավարման հոգեբանության բնագավառին է վերաբերում նաև Դ. Ս. Ամիրյանի «Գործարարության հոգեբանական նախադրյալները» մենագրությունը (2010թ.): Այն նվիրված է քիչ ուսումնասիրված այնպիսի հիմնահարցի, ինչպիսին է գործարարության ոլորտի մասնագետների հոգեբանական պատրաստությունը: Այն ներկայացնում է շուկայական տնտեսության պայմաններում ապագա ձեռներեցներին կրթելու և հոգեբանորեն պատրաստելու խնդիրները, զուգահեռներ է անցկացնում գործող և ապագա ձեռներեցների վարքի ռազմավարությունների, աշխարհընկալման, գործնական հատկությունների և գործելաոճի սկզբունքների միջև [2]:

Կիրառական տեսանկյունից կարևորվում է մարդկային ռեսուրսների կառավարմանը վերաբերող ձեռնարկը («Անձը և պաշտոնը», Մ. Գ. Պետրոսյան, Ա. Ս. Զավադյան, Դ. Ս. Ամիրյան, 2013թ.), որտեղ հոգեբանական տեսանկյունից վերլուծված են անձի և պաշտոնի համապատասխանությանը, անձնակազմի ընտրությանը, գնահատմանը, խրախուսմանը, անձնակազմին հարմարվելուն առնչվող հարցեր: Այս աշխատությունը հարուստ է կիրառական նշանակության նյութերով, ինչպիսիք են պաշտոնի վերլուծության հարցաթերթիկը, պրոֆեսիոգրամայի օրինակը, պաշտոնի գնահատման սանդղակը և այլն [19]:

Հրատարակված գործնական ձեռնարկներն իրենց հերթին նպաստեցին կառավարման հոգեբանության լայն կիրառմանը՝ հնարավոր դարձնելով մասնագիտական ընտրության, աշխատակազմի ընտրության և կառավարման տարբեր բնագավառներում անձի հոգեբանական խնդիրների լուծումը կամ կանխարգելումը: Դրանցից է «Մասնագիտական կողմնորոշման հիմունքներ. գործնական հոգեբանություն» ուսումնական ձեռնարկը (Ս. Հովհաննիսյան, 2014թ.), որտեղ համառոտ շարադրված է կենսական և մասնագիտական ինքնորոշման հայեցակարգը: Ձեռնարկը հազեցած է տեղայնացված մեթոդիկաներով, որոնք թույլ են տալիս մասնագիտական ընտրությունը համապատասխանեցնել անձի առանձնահատկություններին [17]:

Հետագայում խնդրի հանդեպ մեծ հետաքրքրությունը ուսումնական հաստատությունների առջև հարցն ավելի կանոնակարգված դիտարկելու պահանջ դրեց, և ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնում իրականացվեց «Կառավարման հոգեբանություն» մագիստրոսական ծրագիրը (2006 թվականից սկսած):

ՀՀ պետական կառավարման ակադեմիան նույնպես, 2004 թվականից սկսած, մագիստրոսներ է պատրաստում «Կառավարման հոգեբանություն» մասնագիտությամբ:

Այսպիսով, կառավարման հոգեբանության հիմնական կենտրոններն են՝

- ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման հոգեբանության ամբիոնը և «Կառավարչական գործունեության հոգեբանություն» գ/հ լաբորատորիան:

- ԵՊՀ մագիստրոսական ծրագիրը և «Անձի և մասնագիտական գործունեության հոգեբանություն» գ/հ լաբորատորիան:

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման հոգեբանության ամբիոնում վերջին յոթ տարվա ընթացքում տպագրվել են կառավարման հոգեբանության հիմնահարցերն ընդգրկող ուսումնական ձեռնարկներ, մենագրություններ, մեթոդական ուղեցույցներ: Կազմակերպություններում կոնֆլիկտների կառավարման խնդիրն է նվիրված Ռ. Վ. Աղուզումցյանի, Ա. Բ. Լոքյանի և Լ. Հ. Պետրոսյանի «Կոնֆլիկտի կառավարումը կազմակերպություններում» աշխատությունը (2012թ.) [1]: Այստեղ վերլուծված են կազմակերպություններում կոնֆլիկտային իրավիճակների առաջացման պատճառները, դրանց կանխարգելման ուղիները: Դիտարկված են հանձնարարականներ, որոնք նպատակահարմար է կիրառել՝ ելնելով իրավիճակից, անձնային հատկություններից և բնավորությունից: Կառավարման հոգեբանության շրջանակներում լիդերության հիմնախնդիրն է նվիրված Գ. Հարությունյանի՝ «Լիդերության հիմնական հոգեբանական դպրոցներն ու տիպաբանությունները» ձեռնարկը (2012թ.), որտեղ ներկայացված են լիդերության սոցիալ-հոգեբանական արդի հիմնահարցերը, դիտարկված են լիդերության ուսումնասիրման պատմական հիմքերը, դասական և ժամանակակից ազդեցիկ տեսությունները [13]: «Մարդ-օպերատոր» գործունեության վերաբերյալ բազմամյա հետազոտությունների արդյունքները ներկայացված են Ռ. Վ. Աղուզումցյանի հեղինակած «Մասնագիտական պատրաստման համակարգում հոգեբանական պրոյեկտավորման սկզբունքները» ուսումնամեթոդական ձեռնարկում (2013թ.) [20]:

Հանրային ծառայողների մասնագիտական գործունեության հոգեբանական առանձնահատկությունները լուսաբանված են Ա. Լոքյանի մենագրությունում (2015թ.) [8]: Ա. Լոքյանի կողմից մշակված է հանրային ծառայողների հոգեբանական պատրաստման հայեցակարգային մոդել:

Անձի մասնագիտական զարգացման հոգեբանական օրինաչափություններին է նվիրված Լ. Պետրոսյանի մենագրությունը (2016թ.): ՀՀ ՊԿԱ կառավարման հոգեբանության ամբիոնում գործող թեմայի շրջանակում տպագրվել է կոլեկտիվ մենագրություն, որը նվիրված է կառավարչական գործունեության հոգեբանական անվտանգությունն ապահովող գործոններին [9]:

Ինչպես արդեն նշել ենք, 2014 թվականից կառավարման ակադեմիայում գործում է «Կառավարչական գործունեության հոգեբանություն» գիտահետազոտական լաբորատորիա, որի գործունեության ընթացքում տպագրվել են երեք կոլեկտիվ մենագրություններ՝ «Կառավարչական գործունեության հոգեբանական նկարագիրը», «Կառավարիչների հոգեբանական ընտրության առանձնահատկությունները», «Կառավարչական որակների զարգացման հոգեբանական օրինաչափությունները» [10, 11, 12]:

ՀՀ ՊԿԱ «Կառավարչական գործունեության հոգեբանություն» գիտահետազոտական լաբորատորիայի շրջանակներում իրականացվել են տարբեր

մակարդակի կառավարիչների կառավարչական գործունեության հոգեբանական նկարագիր կազմելու աշխատանքները: Հաջորդ փուլում տրվել է կառավարչական գործունեության հոգեբանական բնութագիրը, որի արդյունքում կազմվել են փսիխոգրամաներ՝ ներառելով անհրաժեշտ մասնագիտական կարևոր հոգեբանական որակներ: Լաբորատորիայի գործունեության ընթացքում ստեղծվել է բացահայտված հոգեբանական հատկությունների գնահատման համակարգ: Կազմվել է հոգեբանական մեթոդիկաների փաթեթ, և այդ մեթոդիկաները տեղայնացվել են ՀՀ-ում: Մշակվել է կառավարիչների հոգեբանական որակների զարգացման գործնական դասընթացի ծրագիրը: Պետական և մասնավոր ոլորտի կառավարիչների համար նախատեսված գործնական դասընթացի նպատակն է՝ ձևավորել և զարգացնել մասնակիցների անձնային ու կառավարչական որակները, որոնք կապահովեն կառավարչական գործունեության արդյունավետ իրականացումը:

Երևանի պետական համալսարանում գործող «Անձի և մասնագիտական գործունեության հոգեբանություն» գիտահետազոտական լաբորատորիայի հետաքրքրությունների առանցքում «Անձի հոգեբանական անվտանգությունը» թեման է: Անձի հոգեբանության հիմնահարցերի վերաբերյալ լաբորատորիայում լայնածավալ հետազոտություններ են իրականացվում, տպագրվել են մի շարք կոլեկտիվ մենագրություններ [3, 4, 24]:

Կառավարման հոգեբանությունը զարգանում է նաև ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման հոգեբանության ամբիոնում, ՀՌՍ և ԵՊՀ-ում գործող կառավարման հոգեբանության մագիստրոսական ծրագրերի շնորհիվ, որտեղ մագիստրանտներն իրականացնում են կառավարման տարբեր հիմնահարցերին առնչվող տեսական և փորձարարական ուսումնասիրություններ: Նրանց կողմից իրականացված հետազոտությունների շնորհիվ բացահայտվում են կառավարման ոլորտի հիմնախնդիրները, որոնք կարող են լուծվել կառավարման հոգեբանության գործնական ուղղությունները կիրառելու շնորհիվ: ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման հոգեբանության ամբիոնի մագիստրանտների մագիստրոսական թեզերի շրջանակներում իրականացված հետազոտություններն ընդգրկում են և արդիական, կատարված եզրակացությունները և գիտական առաջարկներն օգտակար են կառավարիչների, կառավարման համակարգի աշխատակիցների համար: Այդ հետազոտությունների հիման վրա տպագրվել են հոդվածների ժողովածուներ [15, 16]:

ՀՀ պետական կառավարման ակադեմիայում իրականացվում են նաև հանրային ծառայողների վերապատրաստումներ, որտեղ դասընթացների 80%-ը հոգեբանության գիտակարգերն են (դասընթացները վերափոխվել են հանրային ծառայողների շրջանում անցկացված հարցումների արդյունքում): Վերապատրաստումների ընթացքում ոչ միայն տեսական գիտելիքներ են տրվում, այլև ձևավորվում և զարգանում են արդյունավետ կառավարում

իրականացնելու համար անհրաժեշտ հոգեբանական հնտություններ ու կարողություններ:

Ակնհայտ է, որ կառավարման հոգեբանության զարգացմանը զուգընթաց առկա են մի շարք խնդիրներ: Այդ խնդիրներն են.

- ՀՀ-ում դեռևս լիարժեք չի գիտակցվում կառավարման հոգեբանության դերակատարությունը գործունեության տարբեր ասպեկտներում, հատկապես՝ կառավարչական:
- Կառավարչի անձի նկատմամբ պահանջը ոչ միշտ է գիտակցվում անձնային և հոգեբանական առանձնահատկությունների տեսանկյունից: Գործատուների կողմից ոչ միշտ է գիտակցվում այն հանգամանքը, որ «լավ կառավարիչը» կամ «լավ կառավարումը» պայմանավորված է ոչ միայն ղեկավարի կամ կառավարչի նեղ մասնագիտական կոմպետենցիաներով, այլև մի շարք հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական անհրաժեշտ հատկանիշների հանրագումարով:
- Արդյունավետ կառավարումը շատ հաճախ դիտարկվում է միայն ղեկավարի անձով պայմանավորված գործընթաց, այնինչ կարևոր են նաև արհեստավարժ անձնակազմի առկայությունը կամ դրան հասնելուն ուղղված հոգեբանական աշխատանքները:
- Դեռևս չի ձևավորվել կամ պասիվ ձևավորման փուլում է մասնագիտական ընտրության և հոգեբանական ընտրանքի համապարփակ պահանջը հանրության լայն շերտերի կողմից:
- Բազմաշերտ լուսաբանման կարիք ունեն կառավարչական գործունեության սոցիոմշակութային և էթնոհոգեբանական առանձնահատկություններն ու խնդիրները:
- Մասնավոր և հանրային ծառայության սեզմենտում չկան դեռևս լիարժեք ներդրված մեխանիզմներ ղեկավարների հոգեբանական որակների բացահայտման և դրան համահունչ վերապատրաստում իրականացնելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ ուրվագծվում են կառավարման հոգեբանության հեռանկարային խնդիրները:

Կառավարման բովանդակությունը և ձևերը: 21-րդ դարում լուրջ փոփոխություններ են ակնկալվում կառավարման ձևի և բովանդակության մեջ: Դրանք ամենից առաջ վերաբերելու են կառավարման ոճերին, կառավարման մակարդակների քանակի նվազեցմանը: Կրնդլայնվի ենթակայաներին լիազորությունների պատվիրակման պրակտիկան, իսկ անձնակազմի դաժան հաշվետվողականությունն իր տեղը կգիջի նոր, առավել լայն գործնական ազատությանը: Ղեկավարներն առավել մեծ նշանակություն կհատկացնեն թիմային աշխատանքին ինչպես կազմակերպության ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս:

Ղեկավարի դերը կառավարման մեջ: Կառավարման ժամանակակից հոգեբանական հայեցակարգերում կենտրոնական օղակ է դառնում անձը, նրա հոգեֆիզիոլոգիական, մասնագիտական, բարոյական ներուժը: Դրանցում ղեկավարի անձը դիտարկվում է իբրև բարձրագույն արժեք, իսկ հմուտ աշխատակիցները՝ իբրև արժեքավոր կապիտալ:

Ղեկավարի պատրաստումը: Կառավարման մեջ մարդկային գործոնի արդյունավետ օգտագործման հոգեբանական առանձնահատկությունների, կառավարման կոլեկտիվ սուբյեկտների ուսումնասիրությունը, ղեկավարների պատրաստումն ու ուսուցումը նրանց կրթության ամբողջ համակարգը դարձնում են գործնական հաջողության ամենաորոշիչ գործոնը: Կառավարչական կադրերի ձևավորման համակարգի նախագծման ժամանակ առաջնահերթ է համարվում դրա հոգեբանական հիմնավորումը, ինչը սերտորեն առնչվում է տնտեսական, տեխնոլոգիական, տեղեկատվական և այլ ասպեկտների:

Կառավարչական գործունեության սոցիոմշակութային և էթնոհոգեբանական առանձնահատկությունների հետ կապված խնդիրների լուծումը: Այս հիմնահարցը վերջերս է գրավել կառավարման տեսաբանների և պրակտիկ գործիչների ուշադրությունը: Թեև ակնհայտ է, որ ոչ կառավարման տեխնիկական, ոչ նրա կազմակերպման նորագույն մեթոդները չեն կարող գոյություն ունենալ սոցիոմշակութային, էթնոհոգեբանական միջավայրից դուրս:

Ղեկավարների՝ նորամուծությունների, անկանխատեսելի իրադարձությունների (տեխնոլոգիական աղետներ, անսպասելի փոփոխություններ շուկայում և այլն) պայմաններում աշխատելու հոգեբանական պատրաստվածության հետ կապված խնդիրների վերհանումն ու դրանց վերլուծությունը: Նման պայմաններում ղեկավարը և նրա կողմից ղեկավարվող կազմակերպությունը պետք է ունակ լինեն հաղթահարելու արտակարգ իրադրություններում աշխատելու հոգեբանական և այլ բնույթի պատնեշները: Խոսքը սթրեսային գործոնների նկատմամբ ղեկավարի հոգեհուզական կայունության մասին է:

Նոր տիպի ղեկավարների հաղորդակցվելու պատրաստվածության արդիականացումը: Ղեկավարի հաղորդակցվելու հմտությունը կազմակերպության գործունեության արդյունավետության կարևոր գործոն է:

Կառավարման միջազգայնացման հիմնահարցի ուսումնասիրությունը, աշխատանքի միջազգային բաժանման խորացման, տեղեկատվության համաշխարհային համակարգերի ստեղծման հետ կապված նոր իրողությունների իմաստավորումը: Ղեկավարների և կազմակերպությունների զարգացման վրա ազդող էական գործոնների թվում է գլոբալիզացիան (համաշխարհայնացում)՝ իբրև կառավարչական չափորոշիչների էական բարելավման նախադրյալ, նրա միջազգային և համաշխարհային առանձնահատկությունների հաշվառումը, կառավարչական մշակույթում էթիկական կանոնների պահպանումը և այլն:

Այսպիսով, կառավարման հոգեբանությունը ՀՀ-ում, լինելով բավական երիտասարդ գիտաճյուղ, ընդլայնում է իր հետազոտությունների շրջանակները, բացահայտվում են ուսումնասիրության նոր հիմնահարցեր, որոնք էլ հարստացնում են կառավարման հոգեբանության տեսական և փորձարարական հիմքերը: Այդ նոր հիմնահարցերի լուսաբանումը հնարավորություն կընձեռի մշակելու կառավարման հոգեբանության նոր հարացույցներ և սկզբունքներ:

Գրականություն

1. **Աղուզումցյան Ռ. Վ., Լոքյան Ա. Բ., Պետրոսյան Լ. Հ.,** Կոնֆլիկտի կառավարումը կազմակերպություններում, Երևան, «Պետական ծառայություն» հրատ., 2012, 76 էջ:
2. **Ամիրյան Դ. Ս.,** Գործարարության հոգեբանական նախադրյալները, Եր., «Լիմուշ», 2010, 156 էջ:
3. Անձի կենսագործունեության հոգեբանական անվտանգություն, կոլեկտիվ մենագրություն, **Ռ. Վ. Աղուզումցյան, Ե. Բ. Մուրադյան, Վ. Ռ. Պապոյան** և ուր., Եր., ԵՊՀ հրատ., 2015թ., 142 էջ:
4. Անձի հոգեբանական անվտանգության հիմնախնդիրները. կոլեկտիվ մենագրություն/ Հեղ. **Ռ. Վ. Աղուզումցյան** և ուր., Եր., ԵՊՀ հրատ., 2009, 164 էջ:
5. **Բեջանյան Ա. Տ.,** Գործարար միջավայրում կոնֆլիկտների ծագման և հաղթահարման յուրահատկությունները, սեղմագիր, Եր., 2012:
6. **Գևորգյան Ս. Ռ.,** Դժվար կոնֆլիկտածին իրադրություններում պետծառայողների փոխներգործության հոգեբանական հիմքերը, Եր., 2006:
7. **Եղիզարյան Վ. Մ., Սեդրակյան Ս. Ա.,** Կառավարման հոգեբանություն (ուսումնական ձեռնարկ), Եր., Զանգակ-97, 2004, 236 էջ:
8. **Լոքյան Ա.,** Հանրային ծառայողների մասնագիտական գործունեության հոգեբանական առանձնահատկությունները, Եր., ՀՀ պետական կառավարման ակադեմիա, 2015, 240 էջ:
9. Կառավարչական գործունեության հոգեբանական անվտանգություն, **Ռ. Վ. Աղուզումցյան, Լ. Հ. Պետրոսյան, Ա. Ռ. Խաչատրյան, Լ. Ն. Բոդյան,** Եր, 2017, 128 էջ:
10. «Կառավարչական գործունեության առանձնահատկությունների հոգեբանական նկարագիրը», **Ռ. Վ. Աղուզումցյան, Լ. Հ. Պետրոսյան, Ս. Հ. Պողոսյան, Ա. Ռ. Խաչատրյան,** Կոլեկտիվ մենագրություն, Եր., 2015, ՀՀ ՊԿԱ, 232 էջ:
11. Կառավարիչների հոգեբանական ընտրության գործընթացի առանձնահատկությունները, **Ռ. Վ. Աղուզումցյան, Լ. Հ. Պետրոսյան, Ս. Հ. Պողոսյան, Ա. Ռ. Խաչատրյան,** Կոլեկտիվ մենագրություն, Եր. 2016, 208 էջ:

12. Կառավարչական որակների զարգացման հոգեբանական օրինաչափությունները, **Ռ. Վ. Աղուզումցյան, Լ. Հ. Պետրոսյան, Ս. Հ. Պողոսյան, Ա. Ռ. Խաչատրյան**, Կոլեկտիվ մենագրություն, Եր., 2017, 140 էջ:
13. **Հարությունյան Գ.**, Լիդերության հիմնական հոգեբանական դպրոցներն ու տիպարանությունները (ուսումնական ձեռնարկ), Եր., «Պետական ծառայություն» հրատ., 2012, 92 էջ:
14. «Հոգեբանություն. դեմքեր, փաստեր (ուսումնական ձեռնարկ)», խմբ. **Հ. Մ. Ավանեսյան**, Եր., ԵՊՀ հրատ., 2010, 204 էջ:
15. Հոդվածների ժողովածու.- Եր.: ՀՀ պետական կառավարման ակադեմիա, 2015.-Հ 735 205 էջ:
16. Հոդվածների ժողովածու.- Եր.: ՀՀ պետական կառավարման ակադեմիա, 2016, 166 էջ:
17. **Հովհաննիսյան Ս. Վ.**, Մասնագիտական կողմնորոշման հիմունքներ. գործնական հոգեբանություն (ուսումնամեթոդական ձեռնարկ), Եր., ԵՊՀ հրատ., 2014, 332 էջ:
18. **Պետրոսյան Ռ. Հ.**, Իշխանության մոտիվացիայի դրսևորումը կառավարչական գործառույթներում (ուսումնամեթոդական ձեռնարկ), ՀՊՄՀ, Եր., - հեղինակային հրատ., 2012, 70 էջ:
19. **Պետրոսյան Մ. Գ., Զավաղյան Ա. Ս., Ամիրյան Դ. Ս.**, Անձր և պաշտոնը, Եր., «Պետական ծառայություն» հրատ., 2013, 344 էջ:
20. **Ստեփանյան Ս. Գ.**, Կառավարչական գործունեության ազդեցությունը աշխատակազմի ընտրության չափանիշների վրա, սեղմագիր, Եր., 2011:
21. **Агузумцян Р.**, Принципы психологического проектирования системы профессиональной подготовки: (Учебно-методическое пособие). Ереван, Изд-во «Асогик», 2013, 242 с.
22. **Бодров В. А.**, Психология профессиональной деятельности, Теоретические и прикладные проблемы, М., РАН, 2006, 624 с.
23. **Бурганова Л. А.**, Теория управления, учебное пособие, М.Инфра-М, 2009, 153 с.
24. Проблемы психологической безопасности личности: теоретические и экспериментальные исследования, **Агузумцян Р. В., Амирян С. С., Папоян В. Р., Мурадян Е. Б., Галстян А. С. Саргсян Д. Ю.**, Издательство ЕГУ, Ереван, 2013, 134с.
25. **Розанова В. А.**, Психология управления. М., 2010, 420 с.
26. **Урбанович А. А.**, Психология управления, Минск, Харвест, 2007, 640 с.

СТАНОВЛЕНИЕ ПСИХОЛОГИИ УПРАВЛЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Лосян А. Б. (АГУ РА, Ереван, Армения)

Агузумцян Р. В. (АГУ РА, Ереван, Армения)

В статье представлена история становления психологии управления в Республике Армения. Хронологически представлены научные работы, научно-исследовательские центры, программы, способствующие развитию психологии управления. Отмечены современные задачи психологии управления в Армении, также перспективные задачи развития.

Ключевые слова: *психология управления, управленец, эффективность деятельности, развитие, перспективные задачи.*

THE FORMATION OF PSYCHOLOGY OF MANAGEMENT IN THE REPUBLIC OF ARMENIA

Lokyan A. B. (PAARA, Yerevan, Armenia)

Aghuzumtsyan R. V. (PAARA, Yerevan, Armenia)

The article presents the history of the development of management psychology in the Republic of Armenia. We present chronologically scientific works, research centers, programs that promote the development of management psychology. The article cover the modern issues of management psychology in Armenia, as well as the long-term objectives of development.

Keywords: *management psychology, manager, efficiency of activity, development, long-term objectives.*

ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ СИСТЕМЫ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ АРМЕНИИ: ГУМАНИЗАЦИЯ ИЛИ ГУМАНИТАРИЗАЦИЯ?

Берберян А. С. (Российско-Армянский университет, Ереван, Армения)

aspsy@inbox.ru

В статье рассматриваются гуманистические подходы к образовательной политике Армении. Утверждается идея о том, что более продуктивное личностное и профессиональное развитие специалистов может быть обеспечено введением в образовательный процесс вуза составляющей личностноразвивающего образования. Целью нашего исследования является выявление готовности субъектов образовательной деятельности к гуманизации, лично ориентированной деятельности. Результаты проведенных эмпирических исследований свидетельствуют о необходимости выявления параметров сформированности готовности гуманистической позиции субъектов образовательной деятельности.

Ключевые слова: *гуманизация, гуманитаризация, система высшего образования, преподаватели и студенты, сформированность готовности гуманистической позиции.*

В последнее время образование в Армении, особенно высшее, начинает рассматриваться как ведущий, наиболее действенный фактор, определяющий результативность всех процессов выживания общества - не только духовных, но и социально-экономических. Причиной такого внимания является понимание того, что в нынешних условиях образование может обеспечить возрождение интеллектуального и творческого потенциала нации. Образовательная сфера - это та основа, которая в развитых странах приносит до 45-45 % прироста валового национального продукта и в конечном счете обеспечивает поступательное развитие государства [8]. Армения, имея ограниченные природные и инвестиционные ресурсы, должна опираться на образование как на источник и самое эффективное средство прогресса, самый мощный инвестиционный ресурс.

В системе высшего профессионального образования республики за последние годы, как и в остальных странах Содружества Независимых Государств, объективные экономические процессы, связанные с развитием рыночных отношений и их активным внедрением в образовательную сферу, стимулируют рост спроса образовательных услуг. Все более широкие слои населения осознают, что высшее образование дает наиболее реальную возможность иметь престижную и высокооплачиваемую работу, занимать более достойное место в обществе.

Армения пошла по пути осуществления реформ в области образования. Основной целью проводимых реформ является приведение системы образования в Армении в соответствие с европейской системой, формирование национальной системы квалификации образования и формирование институциональных изменений.

Новые, гуманистические подходы к образовательной политике Армении нашли отражение в законе «Об образовании», принятом в 1999 году, который дает определенный вектор образовательной политики, создает гуманистическую основу для формирования современной системы высшего образования. Закон РА «Об образовании» установил принципы государственной политики в области образования: гуманистический характер образования, приоритет общечеловеческих ценностей, жизни и здоровья человека, свободного и всестороннего развития личности, воспитание гражданского сознания, национального достоинства, патриотизма, законности и экологического мировоззрения и др. [10].

Переход к новой парадигме образования, несмотря на общую «принятость» и декларируемость, остается во многих образовательных учреждениях лишь позитивным вектором развертывания работы. Ее углубленная разработка в соответствии с задачами конкретного образовательного учреждения затруднена в связи с тем, что большая часть педагогов, работающих в системе высшего образования, получили профессиональную подготовку и приобрели опыт работы в традиционной, «знаниевой» парадигме, и поэтому они испытывают затруднения в осуществлении личностно-развивающего образования. В практическом исследовании, проведенном с преподавателями высшей школы государственных и негосударственных учреждений (общим количеством 186 человек) 87 % признали приверженность традиционной системе обучения, невозможность, непривычность нетрадиционных, инновационных методов преподавания [1].

Анализ государственных стандартов и учебных программ по подготовке специалистов: психологов, журналистов, экономистов и др. и реального состояния преподавания позволяет сделать выводы о значительных расхождениях между образовательной ситуацией в Армении, сложившейся к началу XXI века, и уровнем отражения в ней личностно-развивающей парадигмы образования. Попытки разрешить это противоречие в Армении неоднократно предпринимались теоретиками и практиками образовательной сферы.

Более продуктивное личностное и профессиональное развитие специалистов может быть обеспечено введением в образовательный процесс вуза составляющей личностно-развивающего образования. Наиболее фундаментальной и конструктивной концепцией, выступающей как внутренняя система саморегуляции, представляется личностно-центрированный подход К. Род-

жерса к развитию личности. Реализация образовательного сценария модели личностно-центрированного образования для Армении является оптимальным способом развития. По формальным признакам Армения принадлежит к православной ветви евро-атлантической цивилизации. Геополитическое положение Армении рассматривается как форпост христианской цивилизации. Истинно христианские ценности, такие, как милосердие, доброта, гуманизм, принятие человека, любовь к ближнему - изначально являются присущими, значимыми и ключевыми для армянской ментальности.

По нашему мнению, ценностной основой, содержанием образовательной системы, в частности, высшей школы, для Армении может стать гуманистическое образование, которое направлено на развитие нравственных ценностей личности и ориентирует преподавателя на самоорганизацию педагогической деятельности, позволяющей наполнить личностным смыслом [2].

Главная причина психолого-педагогических погрешностей и упущений - отсутствие четкой цельной структуры гуманистической, по преимуществу самоорганизуемой учебно-воспитательной системы. Высшее образование традиционно расценивает студентов как объектов деятельности, на которых оказывается воздействие; не доверяет студентам и не верит в их возможность самостоятельно мыслить, быть креативной личностью, предпочитает «загружать» память, а не развивать самосознание.

В основе существующих личностно-центрированных технологий являются концепции известных психологов Б. Г. Ананьева, А. Г. Асмолова, А. Н. Леонтьева, Д. А. Леонтьева, в том числе экзистенциально-гуманистические концепции А. Маслоу, К. Роджерса, Г. Оллпорта Г., В. Франкла, Э. Фромма, Дж. Бьюджентала и др. Вопросы перехода от традиционной парадигмы к личностно-центрированному обучению отражены в работах А. В. В. Серикова, И. С. Якиманской, Г. К. Селевко, И. В. Абакумовой, П. Н. Ермакова.

Дело заключается в том, что новые веяния, такие, как информатизация и технократизация, именуемая «фундаментализацией», принципиально не меняют содержательное наполнение системы образования. Однако гуманизация (лат. *humanitas* — «человечность») — жизненная позиция, согласно которой люди имеют право на личностное самоопределение и свободное волеизъявление.

Гуманизация образования подтверждает факт, что ядром личности является ее субъектная, нравственно-творческая составляющая, а сам педагогический процесс – гуманистический феномен [5,7]. Создаваемые в настоящее время творческие образовательные модели являются свидетельством становлении гуманистической парадигмы образования. Данная парадигма ориентирована на развитие личности, на раскрытие потенциала человека творческого, мыслящего, активного субъекта деятельности.

Парадоксальность феномена заключается в путанице понятий «гуманизация» и «гуманитаризация». Система реформирования утверждает гуманистические ориентиры в основном и прежде всего посредством предметоцентризма, т.е. путем увеличения в учебном плане количества дисциплин, называемых гуманитарными. Следовательно, гуманизация образования разворачивается в логике учебного предмета, учебной дисциплины, т.е. в логике передачи информации. К. Ясперс называл этот феномен – «вялая гуманитаризация». Данный способ решения проблемы – экстенсивный, при котором радикально не пересматриваются и не обновляются образовательные компоненты, ключевые компетенции, стиль взаимоотношений «преподаватель-студент», образовательная среда, приобщение субъектов учебного процесса к духовным ценностям, к мировой культуре, обучению смыслов.

Традиционная парадигма трактует содержание образования как дидактически предъявляемый обучающимся «сгусток» научного знания. Такое предъявление не побуждает студентов к анализу материала, творчеству и рефлексии. Однако реальная практика образовательного процесса разрушает иллюзии усвоения в результате подобного подхода и показывает, что содержание процесса образования не может быть только транслированием готовых фрагментов знания из учебников и учебных пособий.

Сложность гуманизации содержания образования заключается в том, что оно традиционно игнорирует личностное знание, культуру педагогического процесса. В чем же заключается суть проблемы?

Дело в том, что в рамках традиционного образования в принципе проблема гуманизации не решаема. Никак не могут быть оправданы надежды на повышение качества образования преимущественно за счет увеличения в учебном плане блока гуманитарных дисциплин, так как гуманитарная база образования не рассматривается в качестве онтологического основания образовательного процесса. Дело даже не в том, что поиск ответов на вопросы гуманизации сдерживается довольно распространенным мнением: «Нам нужны интеллектуалы – люди, которые исповедуют прагматику, а не интеллигенты, занимающиеся метафизикой и поэтикой бытия». Заявленный в полемике этот тезис отражает основную позицию значительной части преподавательского корпуса.

Для гуманизации учебного процесса не столь важно, по какой дисциплине – гуманитарной или естественнонаучной – происходит усвоение того или иного знания. По большому счету не существует самих по себе гуманитарных или негуманитарных знаний. Знания становятся таковыми в отношении человека к процессу познания в соответствии с гуманитарной или технократической образовательной моделью. Существует единственный критерий, который определяет, насколько любое знание о познающем объекте является гуманитарным:

обретает или нет оно личностный смысл. Гуманитарные знания – это знания субъективные, имеющие эмоциональный оттенок: негуманитарной может быть литература либо география, а математика может быть вполне гуманитарной. Области познания: технократическая либо гуманитарная - однозначно не определяют характер процесса познания. Априори не существует познания гуманитарного; не область познания, а подход является индикатором гуманизации. Парадоксальным кажется наше утверждение о том, что гуманитарные знания могут оказаться негуманитарными, не соответствующими «гуманизации». «Образование без души убивает душу», - утверждает известный психолог Зинченко В. П. [4].

Традиционный подход, назовем его «технократический круг», по которому движется и «гуманитарный» в своей предметности учебный процесс, разрывает стиль педагогического мышления. Гуманизация педагогического процесса дает о себе знать, пробивая себе дорогу в опыте лично-ориентированных преподавателей [3]. Для такого рода преподавателей занятия не только фрагмент учебного процесса, педагогическое событие, но и со-бытие, совместная деятельность и «проживание» индивидуальностей в горизонте личности. Смысл, как личностное образование субъектов педагогического взаимодействия, к учебному процессу может существовать только на рубеже двух сознаний, двух личностных смыслов, в драматургии педагогического действия как взаимного, равноправного мыслетворчества между ними в системе координат стиля инновационного мышления: сотрудничества, диалогичности, взаимопонимания, рефлексивности, эмпатии [6].

Для преподавателя важна направленность на Другого, т.е. на студента, именно направленность задает ориентиры профессионального педагогического самосознания, мышления и рефлексии, что выражается в способности к самостоятельному ценностно-смысловому самоопределению, которое способствует самореализации обучающихся. Учебный процесс – это прежде всего личностные взаимоотношения субъектов, которые выражают свою сопричастность через ценности и смыслы образования, через многомерную сложность субъективного мира человека. В этом случае социально-ролевое воздействие трансформируется в межличностное равноправное взаимодействие.

Преподаватель сумеет осуществить проектирование собственной деятельности и лично ориентированный подход, лишь исходя из собственных ценностей и смыслов, построенных на гуманистических основаниях [9].

Мы разработали модель гуманизации образования, включающую в себя следующие компоненты:

- формирование гуманистической позиции у субъекта образовательной деятельности;

- формирование и развитие фасилитативных, наставнических установок у преподавателей вуза;
- изменение среды учебно-педагогического взаимодействия;
- разработка и внедрение технологий и приемов обучения, «центрированных» на студенте;
- создание и полноценное функционирование психологической службы в вузе.

Одним из основополагающих компонентов в нашей гуманистической модели образования является компонент формирования гуманистической позиции. Реализация этой модели способствует развитию нравственно-ценностной, мотивационно-смысловой сфер, субъектного типа взаимодействия, развитию структурно-регуляторных механизмов целенаправленной деятельности.

Гипотезы исследования заключается в предположении о том, что:

1. существуют различия в ценностях, связанных с личностной и профессиональной самореализацией, у студентов городского и сельского населения;
2. существует связь уровня сформированности гуманистической позиции студентов с их мотивационно-волевыми качествами, целевой установкой на осмысление материала, отсутствием академических умений работы;
3. существует связь параметров сформированности готовности преподавателей к проектированию гуманистически ориентированной образовательной среды, предполагающей информационно-организационную подготовку, в умении проектировать образовательную среду с личностной сформированностью таких компонентов «Я-концепции», как креативность, интенциональность, аутентичность, стремление к самоактуализации.

Целью нашего исследования является выявление готовности субъектов образовательной деятельности к гуманизации, личностно ориентированной деятельности. Мы провели исследование со студентами РАУ в количестве 296 человек по выявлению ценностных ориентаций, социально-психологических характеристик личности преподавателя и студента. Для выявления готовности преподавателей к проектированию личностно-центрированной образовательной среды мы использовали: анкету по определению уровня готовности преподавателя к проектированию гуманистически ориентированной среды вуза; опросник инновационной готовности для определения уровня сформированности гуманистической позиции студентов, а также методика «Ценностные ориентации М. Рокича».

Результаты исследования показывают, что армянская молодежь сохранила ценности, культуру и традиции собственного народа, а именно семьи,

уважение к старшим, добра и справедливости, ценности труда, образования, независимости, морально-нравственных принципов, патриотизма и религиозности. Возможно, продиктованная социально-экономическими условиями необходимость выжить, способность самосохранения усилили направленность на удовлетворение собственных, личных потребностей. По результатам проведенных нами исследований, ценности профессиональной самореализации значимее ценностей личной самореализации. У студентов РАУ, которые проживают в городской и сельской местности, ведущие инструментальные ценности незначительно различаются. Различия кроются в мотивировании, а именно – в образованности как ценности, в возможности следования и достижения профессиональных и жизненных целей, в том числе профессиональной карьеры и материального благосостояния. Однако для городских жителей важнее не только быть профессионалом, но и проявлять высокую нравственную, гражданскую позицию. У сельских жителей – специфическая социальная ситуация: у них более силен Институт семьи, приобщенность к этнокультурным традициям, национальным обычаям, к труду. Из инструментальных ценностей доминируют ценности принятия других, незначительно выражены ценности профессиональной самореализации.

Данные проведенных нами исследований и их анализ приводят к следующим выводам:

1. Студенты недостаточно адекватно сознают особенности обучения в вузе. На младших курсах не понимают специфики вуза и не в состоянии связать ее с возросшей самостоятельностью, с необходимостью самоконтроля, саморегулируемого обучения.
2. Было обнаружено, что трудности в учении студенты связывают преимущественно с недостатками мотивационно-волевых качеств (неорганизованность, отсутствие силы воли, неустойчивость внимания и настроения).
3. Анализируя полученные результаты, можно констатировать незнание рациональных способов и приемов учебной работы, конкретных способов выполнения учебных действий, отсутствие академических умений работы с огромным массивом учебного материала.
4. У большинства студентов отсутствует целевая установка на осмысление материала в процессе его усвоения.
5. У значительной части студентов установлено отсутствие установки на самостоятельное исследование и критический, творческий анализ проблемы в процессе усвоения материала.
6. Формирование успешной учебной деятельности зависит от умения ставить и решать творческие задачи.
7. Можно констатировать стремление студентов развить: а) нравственные качества – отзывчивость, заботливость и т.д.; б) самостоятельность; в) трудо-

любие и усидчивость; г) уверенность; д) профессионально важные психологические качества; е) эмоциональную устойчивость; ж) уверенность. Обследование студентов показало, что система нравственного знания не имеет глубокого смыслового наполнения.

По параметру сформированности готовности преподавателей к проектированию гуманистически ориентированной образовательной среды мы выделили компоненты: 1. мотивационно-ценностный, 2. когнитивный, 3. творческий, 4. операционально-деятельностный, 5. оценочно-рефлексирующий, которые мы выявили по опроснику. По результатам опросника доминируют операционально-деятельностный (50%), когнитивный (25%), оценочно-рефлексирующий (14%) компоненты, минимально выражены: творческий (4%), мотивационно-ценностный (7%) составляющие.

Система психокоррекционных занятий в форме специального тренинга в значительной степени окажет влияние на конструктивные изменения в уровне развития профессионального самосознания преподавателей. Отработка способов преодоления трудностей педагогической деятельности и обучение приемам самоконтроля и саморегуляции в процессе психологического тренинга могут стимулировать развитие поведенческого компонента в структуре профессионального самосознания преподавателей. В процессе социально-психологического тренинга можно выявить динамику «Я-концепции» по результатам методики самооценок.

Результаты проведенных исследований свидетельствуют о необходимости выявления параметров сформированности готовности преподавателей к проектированию гуманистически ориентированной образовательной среды, предполагающей информационно-организационную подготовку, умение проектировать образовательную среду, а также личностную сформированность таких компонентов «Я-концепции», как креативность, интенциональность, аутентичность, стремление к самоактуализации. Исследование характеристик личности позволило нам определить «вектор» развития личности - принятие ценностей других и своего «Я» - ценностей творчества, свободы выбора, ответственности - ценностей самоактуализации. Этот вектор развития определил путь самосовершенствования и личностного роста. Процесс объективации принципов психологической готовности преподавателей к личностно-развивающему взаимодействию может быть обеспечен путем создания оптимальных условий, адекватных гуманистической модели образования.

Процесс гуманизации образования является сложным динамичным явлением, в сущности, личностно-профессиональным образованием, направленным на осуществление преподавателем личностно-развивающей деятельности по созданию ситуаций, способствующих интегральному развитию личности студентов и в то же время самосовершенствованию личности самого

преподавателя в целях раскрытия потенциальных творческих способностей и стимулирования самопознания и познания окружающей реальности.

Литература

1. **Берберян А. С.** Психология высшего образования в контексте гуманизации. Учебное пособие. - Прага: Vedecko vydavateľske centrum «Sociosfera –CZ. 2014. 288 с.].
2. **Берберян А. С.** Экзистенциально-гуманистическая психология как фундаментальное основание концепции личностно-центрированного обучения в системе высшего образования. Монография. Прага: Vedecko vydavateľske centrum «Sociosfera –CZ., 2018. 299 с
3. **Бойко Л. И.** Трансформация функций высшего образования и социальные позиции студенчества // Социол. Исслед. 2002. №3.
4. **Зинченко В. Д.** Размышления о душе и ее воспитании Международном симпозиуме “Духовность детства”, г. Мачида (Япония) 21—22 августа, 2001 г. [http://psychlib.ru/mgppu/Zro-001/Zro-001.htm#\\$p3](http://psychlib.ru/mgppu/Zro-001/Zro-001.htm#$p3)
5. **Лаврентьев Г. В.** Инновационные обучающие технологии в профессиональной подготовке специалистов / Г.В. Лаврентьев, Н.Б. Лаврентьева. Ч.1.– Барнаул: Изд-во Алт. ун-та, 2002. – 156с.
6. **Ляудис В. Я.** Инновационное обучение: стратегия и практика. – М., 1994.
7. **Сенько Ю. В.** Гуманитарные основы педагогического образования: Курс лекций : учеб. пособие для студ. высш. пед. учеб. заведений. – М., 2000.
8. **Смирнов С. Д.** Психология и педагогика для преподавателей высшей школы. – М: Издательство МГТУ им. Баумана. 2014, 423 с.
9. **Rogers C. R.** On Becoming a Person. – Boston: Houghton Mifflin, 1961.
10. <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1494&lang=rus>
Закон РА «Об образовании».

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ. ՀՈՒՄԱՆԻԶԱՑԻԱ ԿԱՄ ՀՈՒՄԱՆԻՏԱՐԻԶԱՑՈՒՄ

*Բերբերյան Ա. Ս. (Հայ-ռուսական համալսարան,
Երևան, Հայաստան)*

Հոդվածում ուսումնասիրվում են Հայաստանի կրթական քաղաքականությանը վերաբերող հումանիզացիայի մոտեցումները: Հաստատվում է գաղափարը այն մասին, որ մասնագետների ավելի արդյունավետ անձնային եւ մասնագիտական զարգացումը կարող է ապահովվել բուհի կրթական գործընթացին ներդնելով անձնային զարգացման կրթության բաղադրիչը: Մեր հետազոտության նպատակն է կրթական գործունեության, անձնային կողմ-

նորոշված գործունեության սուբյեկտների հումանիզացիայի պատրաստականության բացահայտումը: Կատարված էմպիրիկ հետազոտությունների արդյունքները վկայում են կրթական գործունեության սուբյեկտների հումանիզացիայի պատրաստվածության պարամետրերի պարզելու անհրաժեշտության մասին:

Հանգուցային բառեր. *հումանիզացիա, հումանիզարիզացիա, բարձրագույն կրթության համակարգ, ուսուցիչ եւ ուսանող, հումանիստական դիրքորոշման պատրաստականության ձեւավորում:*

PERSPECTIVES OF DEVELOPMENT OF THE HIGHER EDUCATION SYSTEM OF ARMENIA: HUMANIZATION OR HUMANITARIZATION?

Berberyan A. S. (Russian - Armenian University, Yerevan, Armenia)

The article examines humanistic approaches to Armenia's educational policy. The idea is stated that more productive personal and professional development of specialists can be ensured by introducing the component of personal development education into the educational process of the university. The purpose of our research is to identify the readiness of subjects of educational activity for humanization, personally oriented activities. The results of the conducted empirical studies testify to the need to identify the parameters of the preparedness of the humanistic position of the subjects of educational activity.

Keywords: *humanization, humanitarization, the system of higher education, teachers and students, the formation of readiness for a humanistic position.*

ՍՊՈՐՏԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ, ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ՈՒ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Բաբայան Հ. Ա. (Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և
սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան)*

kafpedpsy@mail.ru

Հոդվածում ներկայացված է սպորտի հոգեբանության ծնավորման և զարգացման հիմնահարցերը Հայաստանում: Այն պայմանավորված է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի հիմնադրման ու հոգեբանության և մանկավարժության ամբիոնի կազմավորման պատմական գործառույթներով և աշխատակիցների երկար տարիների ուսումնագիտական, տեսամեթոդական, մարզական, կիրառական աշխատանքների արդյունքներով: Ըստ զարգացման փուլերի և ուսումնագիտական աշխատանքների նկարագրման ներկայացված է սպորտի հոգեբանության ձեռքբերումները Հայաստանում և նրա հեռանկարները:

Հանգուցային բառեր. *զարգացում, գիտագործնական, սպորտ, հոգեբանություն, տեսամեթոդական, կիրառական, գիտաժողով*

Սպորտի հոգեբանության, զարգացման պատմությունը Հայաստանում սկսվում է երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո 1945 թվականին, ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի (ներկայիս Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ (ՀՖԿՍՊԻ)) հիմնադրումից ի վեր:

Ինստիտուտի հոգեբանության ամբիոնը (ներկայիս սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոն) հիմնադրվել է 1953 թվականին: 30 տարի անընդմեջ (1953-1983) նրա ղեկավարն է եղել սպորտի հոգեբանության ոլորտի նշանավոր մասնագետ, Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Արծրունու Լալայանը (1925-1983թթ.): Նրա ակտիվ գործունեության ու նախաձեռնությունների արդյունքում ինստիտուտում ստեղծվեց գիտամեթոդական խորհուրդ և ինքը դարձավ նրա առաջին նախագահը: Միաժամանակ հիմնադրվեց Հայաստանում ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի գիտական լաբորատորիան և առաջինը ինքը ղեկավարեց այն [4, էջ 5]:

Այդ ժամանակվանից է սկսվում սպորտի հոգեբանության սկզբնավորման ու զարգացման տարեգրությունը ՀՀ-ում: Մեծ ներդրում են ունեցել հայ հոգեբանները սկսած ԽՍՀՄ տարիներից, մեր օրերը արժարժելով ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հոգեբանության հիմնահարցերը:

Մեծանուն հոգեբան Հովսեփ Մովսեսի Թութունջյանը (1918-1994), աշխատելով Կահիրեյի Գալուստյան ազգային վարժարանում որպես ուսուցիչ, 1947թ. ավարտելով նույն քաղաքի ամերիկյան համալսարանը հայրենադարձվել է Հայաստան: Հայ գիտնականներից նա առաջինն է 1956թ. Մոսկվայի մարզային մանկավարժական ինստիտուտում պաշտպանել հոգեբանությունից թեկնածուական ատենախոսություն «Ավագ դպրոցականների կամքի ձևավորումը ֆիզիկական վարժություններով պարապմունքների գործընթացում» (մարզադպրոցի աշխատանքի փորձով) թեմայով [2, էջ 221]:

Սպորտի հոգեբանության հայկական դպրոցի հիմնադիր պրոֆեսոր Ա.Ա. Լալայանի գիտական ուղին նշանավորվել է 1956թ. նրա մեծագույն առաջարկով, ինչի վերաբերյալ իր հուշերում մեծանուն գիտնական, սպորտի հոգեբանության միջազգային գործիչ - Ավկեսենտիյա Յեզարի Պունին 1970 թվականին գրել է. «Մարզիկի հոգեբանական պատրաստության հիմնախնդիրը սպորտում ծագել է մեկուկես տասնամյակ առաջ: Առաջինը, ով առաջադրել է այդ հիմնահարցը, հանդիսանում է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա.Ա.Լալայանը: 1956 թվականին սպորտի հոգեբանության Համամիութենական առաջին խորհրդաժողովին Լենինգրադում նա ելույթ ունեցավ «Մրցմանը մարզիկի հոգեբանական պատրաստության վերաբերյալ հարցի շուրջ» զեկուցմամբ [3, էջ 6]:

1963 թվականին Ա. Ա. Լալայանի հեղինակությամբ հրատարակվել է մայրենի լեզվով սպորտի հոգեբանության առաջին մենագրությունը «Սպորտային մրցման հոգեբանական առանձնահատկությունները» անվանումով, որը երկար տարիներ հանդիսացել է հանրապետության հավաքական թիմերի մարզիչների և սպորտի հոգեբանների սեղանի գիրքը:

Ա. Ա. Լալայանի գրչին են պատկանում 200-ից ավելի գիտական աշխատություններ, ուսումնամեթոդական ձեռնարկներ, մենագրություններ որոնք հրատարակվել են ամբիոնի աշխատակիցների համատեղ ջանքերով ու հնարավորություն ստեղծել ամբիոնում դասավանդել հետևյալ ուսումնական առարկաները՝ «Ընդհանուր հոգեբանություն», «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հոգեբանություն», «Մանկավարժություն», «Պրոֆեսիոնալ կողմնորոշում» և այլն: Առանձին գրքերով լույս են տեսել նրա «Ակնարկներ բասկետբոլի հոգեբանության վերաբերյալ», «Սպորտի հոգեբանություն», «Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը», «Մարզիկը և մարզիչը», «Սպորտային մրցման հոգեբանական առանձնահատկությունները», «Անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները», «Պրոֆեսիոնալ կողմնորոշում», «Կոնկրետ մրցմանը մարզիկի հոգեբանական պատրաստություն», «Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի և մարզիչի պրոֆեսիայի հոգեբանական առանձնահատկությունները», «Հոգեբանության մի քանի հարցեր», «Սպորտի հոգեբանության մատենագրություն» (երկու հատորով) և այլ աշխատությունները:

Սպորտի հոգեբանության գիտության զարգացմանը զուգընթաց Հայաստանում նոր թափ ստացավ ազգային հավաքական թիմերի մարզիկների պատրաստության հոգեբանական սպասարկման գործընթացը: 1961 թվականին Ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտին կից հիմնադրվեց պրոբլեմային գիտահետազոտական լաբորատորիան (ՊԳՀԼ) հոգեբանական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Ալբերտ Հովհաննեսի Կոստանյանի (1927-1996) նախաձեռնությամբ, որտեղ ուրույն գործունեություն էր իրականացվում սպորտի հոգեբանության ոլորտով: Հետագայում այդ լաբորատորիան ղեկավարեցին 1976-82 թթ. Վ. Քարամյանը և 1984-90թ.թ. Հ. Մ. Ավանեսյանը:

Ա.Ա. Լալայանի ակտիվ ղեկավարությամբ ինստիտուտի հոգեբանության ամբիոնի դասախոսները և գիտահետազոտական լաբորատորիայի գիտաշխատողները ներգրավվեցին համատեղ գիտահետազոտական աշխատանքներում, իրականացնելով մարզիկների պատրաստության գիտագործնական աշխատանքներ:

Սպորտի հոգեբանության հայկական դպրոցի «Ոսկյա ֆոնդը» կազմում են նրա հիմնադիրի հետևյալ գաղափարներն ու տեսակետերը.

- Սպորտային գործունեության ընդհանուր և յուրահատուկ պայմանների հոգեբանական բնութագիրը:
- Մի շարք մարզաձևերի (բասկետբոլ, ըմբշամարտ, բռնցքամարտ, սուսերամարտ, ֆուտբոլ և այլն) հոգեբանական պատրաստության և հոգեբանական վերլուծության խնդիրների իրագործում:
- Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի և մարզիչի մասնագիտության հոգեբանական բնութագիրը [1,4, էջ 8]:

Նմանատիպ աշխատանքներում իրականացվում էին հոգեախտորոշիչ, հոգեկանոնավորող մեթոդների մշակում ու ներդրում, սերտ համագործակցելով ԽՍՀՄ առաջավոր ֆիզկուլտուրայի և սպորտի բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների, լոբորատորիաների ու գիտնականների հետ (Ա. Յ. Պունի, Տ. Տ. Ժամհարով, Յու. Յու. Կիսեյով, Պ. Ա. Ռուդիկ, Լ. Դ. Գիսեն, Ն. Ա. Խուդատով, Ա. Վ. Ռոդիոնով, Ա. Վ. Դաշկևիչ և ուր.):

Այսպիսով սպորտի հոգեբանությունը աստիճանաբար տեսական առարկայից, որը մատուցվում էր ուսանողներին և մարզիչ մանկավարժներին, վերածվեց նաև կիրառական ոլորտի, գործնական օգնություն մատուցելով ինչպես մարզիկներին, այնպես էլ մարզիչներին, բարձրացնելով սպորտային վարպետության գործընթացի արդյունավետությունը:

Նախաօլիմպիական տարիներին (Մոսկվա 1980թ.) նոր թափ ստացան հավաքական թիմերի նախապատրաստության գիտական սպասարկման գործընթացները ԽՍՀՄ-ում, այդ թվում նաև Հայաստանում:

Պրոբլեմային գիտահետազոտական լաբորատորիայի բազայի վրա ձևավորվեցին մեկ տասնյակից ավելի համալիր գիտական սպասարկման խմբեր, որոնցում գործում էին բժշկակենսաբանական, կենսամեխանիկական,

հոգեբանամանկավարժական ոլորտի սպասարկող գիտաշխատողներ, որոնք սպասարկում էին Հայաստանի 14 հավաքական թիմեր, ինչպես նաև ՍՍՀՄ ջրագնդակի հավաքական թիմը (ղեկ. Ա.Օ. Կոստանյան) [3, էջ 63]:

Սպորտի հոգեբանության գիտությունը Հայաստանում զարգացման նոր հնարավորություն ստացավ հատկապես անցյալ դարի 80-ական թվականներից ի վեր, երբ երիտասարդ մասնագետների նոր սերունդ գործուղվեց ուսանելու Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի և ԽՍՀՄ մյուս հանրապետությունների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի առաջավոր գիտահետազոտական ինստիտուտներ, լաբորատորիաներ և բուհեր:

Մեկ տասնյակից ավել մասնագետներ պաշտպանեցին գիտական թեզեր սպորտի հոգեբանությունից ու լրացրեցին ոչ միայն հայկական սպորտի հոգեբանների շարքերը, այլ նաև որպես առաջավոր փորձագետներ, գործուղվել են աշխատելու արտերկրներում (Հնդկաստան, Լիբանան, Սիրիա, Ֆրանսիա, ԱՄՆ) արժեքավոր առաջարկերով հանդես են եկել միջազգային տարբեր գիտաժողովներում, ֆորումներում և այլն (Հ. Մ. Ավանեսյան, Հ. Ա. Բաբայան, Ա. Ա. Արարատյան):

Հայաստանում սպորտի հոգեբանության բնագավառում արժեքավոր գիտական ներդրում ունեն ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի աշխատակիցներ Ս. Պ. Չաթաբաբայանը, Ա. Բ. Արարատյանը, Ք. Կ. Մարգարյանը, Հ. Ա. Բաբայանը, Հ. Մ. Ավանեսյանը, Մ. Պ. Մկրտումյանը, Ա. Գ. Ստեփանյան, գիտական կենտրոնի աշխատակիցներ Մ. Հայրապետյանը, Լ. Բաղայանը, Ա. Շախատունին, Մ. Օսիպյանը, Ռ. Եսայանը:

Հայաստանի սպորտի հոգեբանները երկար տարիներ հանդիսացել են միջազգային տարբեր մասնագիտական կազմակերպությունների անդամ: Այսպես, պրոֆեսոր Ա. Ա. Լալայանը 1976թ. ընտրվել է Սպորտի հոգեբանների եվրոպական ֆեդերացիայի (FEBSAC) անդամ, պարզևատրվել է «Եվրոպայում սպորտի հոգեբանության զարգացման համար» մեդալով, իսկ երկու տարի անց ընտրվել է Սպորտի հոգեբանության միջազգային ընկերության (ISSP) անդամ:

Հ.գ.դ. պրոֆեսոր Հ. Մ. Ավանեսյանը 1992թ. ընտրվել է ISSP, իսկ 1996 թ.՝ AAASP, 1988 թ. ԽՍՀՄ Սպորտի հոգեբանության ֆեդերացիայի (ФСП) նախագահության անդամ:

Հ.գ.թ., պրոֆեսոր Հ. Ա. Բաբայանը 1990 թվականին ընտրվել է Սպորտի հոգեբանների Ասիական ֆեդերացիայի անդամ:

Ա. Ա. Լալայանից հետո ամբիոնի ղեկավարումը ստանձնել են հ.գ.թ., պրոֆեսոր Ա. Հ. Կոստանյանը (1983-1984թ.թ.), հ.գ.թ., դոցենտ Ա. Բ. Արարատյանը (1984-1990թ.թ.), հ.գ.դ., պրոֆեսոր Հ. Մ. Ավանեսյանը (1990-2003թ.թ.), 2003 թվականից մինչ ներկա ժամանակը ղեկավարում է հ.գ.թ., պրոֆեսոր Հ. Ա. Բաբայանը:

Սպորտի հոգեբանության գիտության զարգացմանը Հայաստանում նպաստել են տարբեր միջազգային գիտաժողովներին և կոնգրեսներին Հայաստանի մասնագետների մասնակցությունն ու տարբեր միջազգային կազմակերպություններին անդամագրումն ու համագործակցությունը:

1998 թ. Հայաստանում հիմնադրվեց Հայաստանի սպորտի հոգեբանների ֆեդերացիան: Առաջին նախագահ է ընտրվել հ.գ.դ., պրոֆեսոր Հ. Մ. Ավանեսյանը: Հասարակական այդ կազմակերպության հիմնական խնդիրն է հանրապետության սպորտի հոգեբանների գործնական աշխատանքների համակարգումը, միջազգային գիտաժողովների անցկացումն ու փորձի փոխանակումը:

Ա. Ա. Լալայանի նախաձեռնությամբ և հանրապետության Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեի աջակցությամբ, Մոնրեալի Օլիմպիական խաղերից հետո Հայաստանում առաջին անգամ, 1976 թվականին անցկացվեց ԽՍՀՄ-ի նշանավոր հոգեբանների Համամիութենական խորհրդակցություն, որին մասնակցեցին ԽՍՀՄ Հանրապետությունների 100-ից ավելի պատվիրակներ: 1986թ. Ծաղկածորում կազմակերպվեց ևս մեկ «Սպորտի հոգեբանության համամիութենական գիտաժողով»:

ԽՍՀՄ տարիներին և Հայաստանի անկախացումից ի վեր Հայաստանի սպորտի հոգեբաններից 12-ը պաշտպանել են հոգեբանական գիտությունների թեկնածուական և 2 դոկտորական ատենախոսություններ: Նույնիսկ արտերկրների երկու ասպիրանտներ՝ Սիրիայից և Իրանի Իսլամական Հանրապետությունից պաշտպանել են սպորտի հոգեբանությունից թեկնածուական ատենախոսություններ: Ներկայումս Հայաստանի սպորտի հոգեբանության նշանավոր գիտնականներ հ.գ.դ., պրոֆեսորներ Հ. Մ. Ավանեսյանը, Մ. Պ. Մկրտումյանը և հ.գ.թ. պրոֆեսոր Հ. Ա. Բաբայանը ղեկավարում են համապատասխանաբար ԵՊՀ, ՀՊՄՀ և ՀՖԿՍՊԻ հոգեբանության ամբիոնները և հանդիսանում են ՀՀ ԲՈՀ-ի Հոգեբանության մասնագիտական խորհրդի անդամ:

Հատկապես Հայաստանի անկախացումից ի վեր հոգեբանության ամբիոնի և Սպորտի հոգեբանության ֆեդերացիայի համատեղ ջանքերով անցկացվել են միջազգային գիտական կոնֆերանսներ, կոնգրեսներ և սեմինարներ.

- 1992թ. «Բարձրագույն սպորտում հոգեբանական պատրաստության հիմնահարցերը» միջազգային սեմինար:
- 1996թ. Միջազգային սեմինար «Սպորտի հոգեբանության կիրառական մեթոդները»:
- 2000թ. Միջազգային գիտաժողով «Սպորտի կիրառական հոգեբանություն»:
- 2015թ. Միջազգային կոնգրես «Օլիմպիական սպորտ և սպորտ բոլորի համար»:
- 2017թ. Միջազգային գիտաժողով «Հոգեբանական սպասարկման հիմնախնդիրները բարձր նվաճումների սպորտում» և գործնական սեմինարներ ու դասախոսություններ հանրապետության հավաքական

թիմերի մարզիչների, բարձրակարգ մարզիկների, մարզական ոլորտի մասնագետների համար:

Նշված գիտաժողովներին մասնակցել են Ռուսաստանի Դաշնության, ԱՄՆ-ի, Ուկրաինայի, Բելոռուսի, Մոլդովայի, Ղազախստանի, Տաջիկստանի, Վրաստանի, Իրանի, Լիտվիայի և այլ երկրների առաջատար սպորտի հոգեբաններ:

Նշված երկրներում կայացած նմանատիպ գիտաժողովներին ու սեմինարներին մասնակցել են նաև մեր հանրապետության մարզական ոլորտի ու բուհերի հոգեբան մասնագետները:

Տարիների ընթացքում փոխվել են ամբիոնի դասախոսական և գիտական կադրերը, իսկ սպորտի հոգեբանական դպրոցը զարգացել ու ամրացել է, դրսևորելով իր կենսունակությունը: Ներկայիս հանրապետական ազգային հավաքականների, հենակետային մարզաձևերի առաջատար մարզիկներ ստանում են հոգեբանական սպասարկման անհրաժեշտ օգնություն (բուժքնամարտ, ըմբշամարտ, սուսերամարտ, հրաձգություն, ծանրամարտ, շախմատ և այլն):

«Սպորտի և երիտասարդության նախարարությունը, Ազգային օլիմպիական կոմիտեի համատեղ նախաձեռնությամբ առանձնահատուկ միջոցներ է ձեռնարկում բարձրակարգ մարզիկների սպորտային պատրաստության գործընթացում մարզական գիտությունների՝ այդ թվում սպորտի հոգեբանության ներդրման ուղղությամբ:

Այդ ուղղությամբ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի բազայի վրա կազմակերպվում է ՀՀ ազգային հավաքական թիմերի, մարզադպրոցների առաջավոր մարզիչների համար վերապատրաստման ու որակավորման ամենամյա դասընթացներ, ինստիտուտի բարձրորակ դասախոս-գիտնականների դասավանդմամբ: Ունկնդիրներին մատուցվում է հոգեբանական պատրաստության համակարգին վերաբերվող բոլոր տեսակի գիտագործնական, ուսումնամեթոդական և կիրառական հոգեբանամանկավարժական գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ:

2016-2017 ուստարվանից ինստիտուտում բացվել է «Սպորտի հոգեբանություն» մասնագիտությամբ մագիստրատուրայի մեկամյա դասընթաց: Ավարտողները կարող են իրենց մասնագիտական գիտելիքներով ու գործնական հմտություններով իրականացնել հոգեբանական սպասարկման աշխատանքներ մարզադպրոցներում, տարբեր մարզաձևերի հավաքական թիմերում, և ֆիզիկական կուլտուրայի ուսումնական գործընթացում:

Ներկայումս Հայաստանում գրեթե առկա են մայրենի լեզվով սպորտի հոգեբանության բավարար ուսումնական և գիտահետազոտական աշխատություններ՝ այդ թվում ուսումնական ձեռնարկներ, գիտամեթոդական նյութերի ժողովածուներ, մենագրություններ և այլն;

Դրանց թվին են դասվում՝

1. Ա. Ա. Լալայանի հեղինակությամբ (ըստ տարիների),

- Սպորտային մրցման հոգեբանական առանձնահատկությունները: Երևան, 1963, 63 էջ:
 - Բասկետբոլի հոգեբանական ուրվագծերը (Կ. Ն. Վարդանյան համահեղինակ): Երևան, 1964, 76 էջ:
 - Սպորտի հոգեբանություն: Երևան, 1966, 122 էջ:
 - Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը: Երևան, 1969, 177 էջ:
 - Անձի անհատական հոգեբանական առանձնահատկություններ: Երևան, 1971, 105 էջ:
 - Կոնկրետ մրցմանը մարզիկի հոգեբանական պատրաստությունը: Երևան, 1975, 52 էջ:
 - Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մարզչի պրոֆեսիայի հոգեբանական առանձնահատկությունները: Երևան, 1975, 39 էջ:
 - Հոգեբանության մի քանի հարցեր: Երևան, 1980, 166 էջ:
 - Սպորտի հոգեբանության մատենագրություն: Երևան, 1980, 225 էջ:
 - Մարզիկի հոգեբանական պատրաստություն: Երևան, 1985, 166 էջ:
2. Ա. Հ. Կոստանյան Ֆիզիկական դաստիարակության և սպորտի հոգեբանության ուրվագծերը (ուս. ձեռնարկ): Երևան 1988, 112 էջ:
 3. Հ. Մ. Ավանեսյան Սպորտի կիրառական հոգեբանության մեթոդները: Երևան, 2000, 127 էջ:
 4. Հ. Ա. Բաբայան Հոգեբանական պատրաստության հիմնախնդիրները բարձր նվաճումների սպորտում: Երևան, 2007, 127 էջ:
 5. Ա. Գ. Ստեփանյան Հոգեկարգավորման հիմնախնդիրները սպորտում: Երևան, 2012, 162 էջ:
 6. Հ. Ա. Բաբայան, Ա. Գ. Ստեփանյան, Վ. Ղ. Գեղամյան, Թ. Շ. Սոֆյան Հոգեբանության գիտահետազոտական մեթոդները սպորտում: Երևան, 2016, 235 էջ
 7. Վ. Ղ. Գեղամյան Սպորտային պատրաստության հոգեբանական առանձնահատկություններն ըմբշամարտում: Երևան, 2018, 123 էջ:

Գրականություն

1. **Բաբայան Հ. Ա.**, Սպորտի հոգեբանության հիմնախնդիրները Հայաստանում 21-րդ դարաշեմին: Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ: Գիտական հոդվածների ժողովածու: Հոբեյանական: Երևան 2007, էջ 89-97
2. Սովետահայ հոգեբանություն: Ընտիր էջեր: կազմող **Հ. Մ. Թուրունջյան**: Երևան, ԵՊՀ հրատ., 1988, 527 էջ
3. **Аванесян Г. М.** Развитие спортивной психологии в Армении (истоки, развитие и современное состояние) В журн. Спортивный психолог. М., 2015. №2, с. 62-63.

4. **Бабаян А. А., Аракелян В. Б.** В память великого ученого Александра Арцруновича Лалаяна. Материалы первой международной научной конференции. Ереван 2017. с. 4-11.

ИСТОКИ СПОРТИВНОЙ ПСИХОЛОГИИ, РАЗВИТИЕ И НЫНЕШНЕЕ СОСТОЯНИЕ В АРМЕНИИ

Бабаян А. А. (Государственный Институт физической культуры и спорта Армении, Ереван, Армения)

В статье раскрыты вопросы формирования и развития психологии спорта в Армении. Они обусловлены основанием Армянского государственного института физической культуры и спорта, формированием кафедры педагогики и психологии спорта, а также многолетней и плодотворной учебной, научно-методической работой сотрудников кафедры.

В соответствии с этапами развития и описанием учебно-научных работе представлены достижения и перспективы развития психологии спорта в Армении.

Ключевые слова: *развитие, наука, психология, спорт, теория, методология, прикладная, конференция.*

THE ORIGIN OF SPORTS PSYCHOLOGY ITS DEVELOPMENT AND CURRENT STATE IN ARMENIA

Babayan H. A. (The Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia)

The article considers the issues of formation and development sports psychology in Armenia. They are due to the foundation of the Armenian State Institute of Physical Culture and Sport and the formation of the dep. Of Sports Pedagogy and Psychology, as well as to the long-term and fruitful academic, scientific and methodical works of the department staff. Achievements and prospects of the development of Sports Psychology in Armenia are presented in accordance with the description. Of the academic and scientific work and the stages of its development.

Keywords: *development, science, psychology, sport, theory, methodology, applied, conference.*

ԱՆՁԻ ԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դավթյան Ա. Գ. (ԵՊՀ, Երևան, Հայաստան)

araqsyadavtyan@gmail.com

Աշխատանքի նպատակն է տեսականորեն ուսումնասիրել անձի աշխատունակությունը պայմանավորող գործոնները, կարգավորման մեխանիզմների բազմակողմանի և ամբողջական ուսումնասիրումը, որոնք պայմանավորում են աշխատունակության ձևավորումն ու արտահայտումը հատուկ պայմաններում մարդու գործունեության և հարմարման ընդհանուր հոգեբանական տեսության կոնտեքստում: Աշխատանքային գործունեության ընթացքում վերակառուցվում, ձևափոխվում և զարգանում են ոչ միայն մասնագիտական, այլև անձնային մի շարք որակներ: Գործունեության արդյունավետությունը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնց դրսևորման որոշիչ պայմանը հանդիսանում է օրգանիզմի աշխատունակությունը: Որոշակի աշխատանքային պայմաններում աշխատանքին թույլ ֆիզիոլոգիական պատրաստվածությունը կարող է փոխարինվել ուժեղ աշխատանքային մոտիվացիայով, որն իր հերթին հանգեցնում է աշխատունակության բարձրացման:

Հանգուցային բառեր՝ աշխատունակություն, մասնագիտական պիտանելիություն, ֆունկցիոնալ վիճակ, պահանջմունք, մոտիվացիա:

Տվյալ թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ ներկայիս հասարակական և քաղաքական կյանքում տեղի ունեցող դինամիկ գործընթացները, մարդու կենսագործունեության պայմաններում էական փոփոխությունները, որոնք կապված են լարված իրավիճակների թվի մեծացման հետ, հատուկ պահանջներ են ներկայացնում մարդու աշխատունակությանը: Գործունեության արտակարգ իրավիճակների պայմաններում մարդու աշխատունակության խնդիրը և նրա արտահայտման համապատասխանության կարգավորումը հատուկ հետաքրքրություն է ներկայացնում հոգեբանության համար:

Մարդու գործունեության հիմնական տեսակներից մեկն աշխատանքն է, որտեղ վերակառուցվում, ձևափոխվում և զարգանում են ոչ միայն մասնագիտական, այլև անձնային մի շարք որակներ: Աշխատանքային գործունեության արդյունավետությունը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնց դրսևորման որոշիչ պայմանը հանդիսանում է օրգանիզմի աշխատունակությունը: Աշխատունակությունը մարդու օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակների մեծությունն է, որը բնութագրվում է աշխատանքի որակով և քանակով, որը կատարվում է որոշակի ժամանակում:

Մարդկային գործունեության պահանջունքները, մարդու գործունեության հուսալիության և արդյունավետության բարձրացման խնդիրները աշխատանքային գործունեության ոլորտում՝ հատկապես պոտենցիալ վտանգավոր տեխնոլոգիաների զարգացման հետ կապված, արտակարգ պայմաններում մասնագիտական գործունեության բարդացման և սթրեսածին ազդեցությունների աճի հետ կապված, երբ աշխատանքի սուբյեկտի հոգեկան վիճակները հանդես են գալիս նրա գործունեության արդյունավետության կարևորագույն պայմաններ, պահանջում են տվյալ խնդրի ակտիվ մշակում:

Այս խնդրի լուծման հոգեբանական մոտեցման կարևորությունը որոշվում է նրանով, որ ներկայումս շատ մասնագիտությունների համար սահմանափակ են ֆունկցիոնալ հարմարավետության բարձրացման տեխնիկական և էրգոնոմիկ հնարավորությունները և գործունեության պայմանների բարելավումը: Այս իսկ պատճառով գործունեության արդյունավետության և հուսալիության բարձրացման հիմնական պահուստները գտնվում են աշխատանքի սուբյեկտի ֆունկցիոնալ վիճակի բարելավման գիտականորեն պայմանավորված հոգեբանական մեթոդների մշակման ճանապարհին, որոնք էական չափով որոշում են նրա աշխատունակությունը և հուսալիությունը: Կառավարման և կարգավորման արտաքին մեթոդների հաշվին ֆունկցիոնալ վիճակների բարելավման հնարավորությունները բավական լավ են ուսումնասիրված, դասակարգված և լայնորեն կիրառվում են պրակտիկ հոգեբանության տարբեր ոլորտներում [3, էջ 15]: Բայց գործունեության պայմանները ոչ միշտ են թույլ տալիս նրանց կիրառումը, և այդ ժամանակ սթրեսի հաղթահարման և ոչ բարենպաստ ֆունկցիոնալ վիճակների բարելավման գլխավոր դերը պատկանում է հոգեկան ինքնակարգավորմանը, որի ընթացքում բացահայտվում են մարդու ներքին հոգեֆիզիոլոգիական և անձնային ռեսուրսները, որոնք նրան տալիս են հարաբերական ազատություն այն պայմաններից, որոնք ապահովում են նույնիսկ ամենաբարդ պայմաններում ինքնակայացման հնարավորությունը: Արտակարգ և բարդ պայմաններում մարդը կարող է կառավարել իր վիճակը՝ օգտագործելով ինքնազդեցության և ինքնակարգավորման տարբեր եղանակներ: Այս իսկ պատճառով հոգեկան ինքնակարգավորումը դառնում է ֆունկցիոնալ վիճակի կառավարման միջոց, իսկ ֆունկցիոնալ ինքնակարգավորման եղանակներին տիրապետումը որոշում են սուբյեկտի մասնագիտական պիտանելիությունը և մասնագիտական որակները [3, էջ 16]:

Անձի աշխատունակության խնդիրն իրեն է միացնում մի շարք հարցեր, որոնք կապված են գործունեության բոլոր ոլորտների հետ: Հոգեբանության մեջ առկա է մշտական հետաքրքրություն և մի շարք մոտեցումներ աշխատունակության հասկացության որոշման հետ կապված (Գ. Ս. Աբրամովա, Ի. Պ. Վոլկով, Վ. Պ. Զոտով, Ե. Պ. Իյին, Ա. Լ. Պոպով և այլն), որտեղ հիմնականում այն ուսումնասիրվում է որպես մարդու առանձնահատկություն, որն արտահայտում է նրա՝ որոշակի աշխատանք կատարելու ունակությունը, և որոշ

չափով նման բան օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակին՝ որպես գործունեության, նրա արդյունավետության որոշակի մակարդակի ապահովման ունակություն և որպես մարդու որոշակի ընդունակություն [1, էջ 16]: Մինևույն ժամանակ մարդու աշխատունակությունը որոշվում է նրա մասնագիտական, ֆունկցիոնալ և հոգեբանական գործոնների ամբողջությամբ, այսինքն՝ օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակով և նրա պահուստային հնարավորությունների մեծությամբ, ավելի հստակ՝ գործունեության պահանջմունքների, դիրքորոշումների և մոտիվների արտահայտվածության բնույթով և աստիճանով:

Աշխատունակությունն հանդիսանում է անձի կարևոր սոցիալական և ֆիզիոլոգիական հատկություն, որը հնարավոր է դարձնում իրականացնել որոշակի աշխատանք տրված ժամանակահատվածում և որոշակի արդյունավետությամբ: Ներկայումս բավական լայն տարածում է ստացել աշխատունակության բնորոշումը որպես բարդ և բազմագործոնային երևույթ, որը կախված է մոտիվների ուժից, որոնք դրդում են մարդուն գործունեության, և աշխատանքի պայմաններից և առողջական վիճակից, ինչպես նաև աշխատանքի կատարման ընթացքում մարդու տրամադրությունից և հուզական վիճակից: Սակայն, ինչպես նշում են հեղինակները (Ն. Վ. Գոլուբեևա, Լ. Բ. Երմոլևա-Տոմինա, Բ. Ֆ. Լոմով, Վ. Ի. Ռոժդեստովենսկայա) աշխատունակությունը, հանդիսանալով ամբողջական հատկություն, ենթադրում է ընդհանուր օրինաչափությունների արտահայտում, որոնք ընթանում են ամենատարբեր մակարդակներում՝ սոցիալական, հոգեբանական, ֆիզիոլոգիական և այլն: Մարդու աշխատունակությունը պայմանավորող էական պայմաններից մեկը հանդիսանում է նրա նյարդային համակարգի ֆունկցիոնալ վիճակի մակարդակը և, ինչպես նշում է Վ. Ի. Ռոժդեստովենսկայան, աշխատունակությունը բարձրանում է նյարդային կառույցների գործառութավորման որոշակի պայմանների օպտիմալ մակարդակի դեպքում և նվազում է այդ մակարդակից որոշակի շեղումների դեպքում: Նման շեղումներն արհատայտվում են մարդու բնավորության և զարգացման էական հոգեկան վիճակների մեջ [1, էջ 17]:

Գործունեության պայմանների առանձնահատկությունները էական ազդեցություն են գործում մարդու աշխատունակության մակարդակի վրա, քանզի ոչ բարենպաստ պայմաններում օրգանիզմում լարվածությունների բաշխումը տեղի է ունենում միաժամանակ համապատասխան ֆիզիոլոգիական, հոգեկան, իսկ որոշ դեպքերում նաև միջավայրի քիմիական գործոններին հարմարմամբ:

Ֆունկցիոնալ վիճակը հանդիսանում է այն միավորներից մեկը, որն ապահովում է արդյունավետ մասնագիտական գործունեությունը: Օպտիմալ ֆունկցիոնալ վիճակից շեղումը հանգեցնում է գործունեության արդյունքների նվազեցման:

Ա. Ն. Զինկովսկին դիտարկում է ֆունկցիոնալ վիճակը որպես գործառույթների և որակների ամբողջություն՝ ապահովող գործողությունների կատարման արդյունավետությունը:

Մարդու ֆունկցիոնալ վիճակը մարդու վիճակի ընդհանուր բնութագիրն է նրա կողմից իրականացվող գործունեության արդյունավետության տեսանկյունից: Առանձնացնում են օպտիմալ և ոչ օպտիմալ, հարմարավետ և անհարմար ֆունկցիոնալ վիճակներ, հոգնածություն, մոնոտոնիա, ֆիզիոլոգիական և հոգեբանական սթրեսի տարբեր տեսակներ, արտակարգ վիճակներ [4, էջ 441]:

Ֆունկցիոնալ վիճակը մի շարք բաղադրիչների համախումբ է, որն իրեն է միավորում հետևյալ ֆունկցիոնալ պրոցեսները՝ մարմնակառուցվածք, սրտանոթային փոփոխություններ, միմիկա (դիմախաղ) և պանտոմիմիկա (նստելաձև, քայլվածք, ժեստեր), խոսակցական հնչերանգ, շնչառական ռիթմ և եղանակ, մտածողության ոճ, վարքային դիրքորոշումներ և ծրագրեր, այս ամբողջությունը ֆիքսող կինեսթետիկ զգացողություններ:

Ֆունկցիոնալ վիճակը նյարդային համակարգի ֆոնային ակտիվությունն է, որի պայմաններում իրականացվում են կենդանիների և մարդու այս կամ այն վարքային գործողությունները: Ֆունկցիոնալ վիճակը կախված է իրականացվող գործունեության բնույթի առանձնահատկություններից՝ դրդապատճառների նշանակությունը, որոնք դրդում են որոշակի գործունեության կատարման, սենսորային ծանրաբեռնվածության մեծությունից, որը կարող է հասնել մեծ նշանակությունների կամ կտրուկ ընկնել սենսոր դեպրիվացիայի պայմաններում, նյարդային համակարգի սկզբնական մակարդակից, նյարդային համակարգի անհատական առանձնահատկություններից, օրգանիզմի բնական միջավայրի պայմաններից դուրս ազդեցություններից՝ դեղամիջոցներ, քիմիական, էլեկտրական գրգռիչներ [8]:

Հոգեբանության մեջ առավել տարածված է վիճակների մասին որպես համեմատաբար կայուն հոգեկան երևույթների մասին պատկերացումը, որոնք ունեն սկիզբ, ընթացք և ավարտ, այսինքն՝ դինամիկ կազմավորումների: Հոգեկան վիճակն արտացոլում է նյարդային համակարգի գործառութավորման և որոշակի ժամանակահատվածում մարդու հոգեկանի առանձնահատկությունները:

Ն. Դ. Լևիտովը տվել է հոգեկան վիճակի հետևյալ սահմանումը՝ «Հոգեկան գործունեության ամբողջական բնութագիր է որոշակի ժամանակահատվածում, որը ցույց է տալիս հոգեկան պրոցեսների ընթացքի յուրահատկությունը՝ կախված արտացոլվող առարկաներից և իրականության երևույթներից, անձի հոգեկան առանձնահատկություններից»:

Հոգեկան վիճակը սովորաբար արտացոլում է ոչ թե բոլոր, այլ առանձին հոգեկան պրոցեսների առանձնահատկությունները: Օրինակ՝ տագնապայնության վիճակը մոտիվների պայքար է, այդ պատճառով այն բնութագրում է կամային պրոցեսները, միաժամանակ բնութագրում է ճանաչողական և հուզական վիճակների գործունեությունը: Ֆունկցիոնալ վիճակները կարելի է բաժանել մի քանի տարբեր հիմքերով՝ անձնային և իրավիճակային վիճակներ, խորը և մակերեսային վիճակներ, դրական և բացասական վիճակներ,

երկարատև և կարճատև վիճակներ, առավել կամ քիչ գիտակցված վիճակներ, հոգեֆիզիոլոգիական և հոգեկան վիճակներ:

Ֆունկցիոնալ վիճակն արտացոլում է ինչպես առանձին համակարգերի գործառույթավորման մակարդակը, այնպես էլ ամբողջական օրգանիզմի: Պ. Կ. Անոխինը համարում էր, որ ցանկացած համակարգի կենտրոնական կորիզը հանդիսանում է նրա գործառույթավորման արդյունք: Ամբողջական օրգանիզմի համար նման համակարգաձևավորող գործոն է հանդիսանում ադապտացիան: Ֆունկցիոնալ վիճակը որոշակի ժամանակահատվածում օրգանիզմի համակարգերի գործառույթավորման մակարդակի բնութագիր է, որն արտահայտում է հոմեոստազի և ադապտացիայի պրոցեսների առանձնահատկությունները:

Մարդկանց միջև կան էական անհատական տարբերություններ միևնույն ֆունկցիոնալ վիճակների արտահայտման և դինամիկայի մեջ: Բնավորության մեջ տարբերությունները, շրջապատող աշխարհում տեղի ունեցող իրավիճակների նկատմամբ տարբեր վերաբերմունքը հանդիսանում են միևնույն պայմաններում տարբեր ֆունկցիոնալ վիճակներում գտնվելու պատճառ [7]: Ֆունկցիոնալ վիճակի դրսևորման առանձնահատկություններով է պայմանավորված այն, թե ինչու են որոշ մարդիկ կարողանում աշխատել ցերեկային և գիշերային հերթափոխային ժամանակահատվածով, իսկ մյուսները՝ ոչ:

Առանձին մարդու ֆունկցիոնալ վիճակի առանձնահատկությունները կախված են մի շարք գործոններից՝ նյարդային համակարգի հատկություններ, խառնվածքի տեսակ, ընդհանուր հուզական ուղղվածություն, բացասական հուզական հետքերը չեզոքացնելու ընդունակություն, այս կամ այն կամային որակների զարգացման աստիճան, սեփական հոգեկան վիճակի կառավարման տեխնիկաներ, ինտելեկտուալ զարգացվածություն:

Այսպիսով՝ հիմնվելով մի շարք հեղինակների կարծիքի վրա, կարելի է նկատել, որ ֆունկցիոնալ վիճակը ձևավորվում է այն համակարգերի ցուցանիշների ազդեցության տակ, որոնք ունենում են անմիջական ազդեցություն գործունեության արդյունավետության վրա և ավելի հաճախ ուսումնասիրվում են հոգեբանական և ֆիզիոլոգիական ցուցանիշները: Սրանից հետևում է, որ ֆունկցիոնալ վիճակները և գործունեության արդյունավետությունը փոխկապակցված են, և մարդու հոգեֆիզիոլոգիական վիճակը հանդես է գալիս հոգեբանական սրթեսի, անձի, մոտիվների ամբողջական բնութագրի ձևով:

Ֆիզիոլոգները հաստատել են, որ աշխատունակությունը փոփոխական մեծություն է և կապված է օրգանիզմում ֆիզիոլոգիական և հոգեկան ֆունկցիաների ընթացքի բնույթի փոփոխությունների հետ: Բարձր աշխատունակությունը գործունեության ցանկացած տեսակի դեպքում ապահովվում է միայն այն դեպքում, երբ աշխատանքային ռիթմը համընկնում է օրգանիզմի ֆիզիոլոգիական գործընթացների օրական ռիթմի բնական հաջորդականության հետ: Մարդու աշխատունակությունն աշխատանքային օրվա ընթացքում

բնութագրվում է փուլային զարգացմամբ: Օրվա տարբեր ժամերին մարդու օրգանիզմը տարբեր կերպ է հակազդում ֆիզիկական և նյարդահոգեկան լարվածությանը:

Աշխատունակությունը որոշվում է բազմաթիվ պայմաններով, որոնք կարող են փոխվել ժամանակի ընթացքում և կարող են փոխազդել միմյանց հետ: Այստեղ են մտնում մարմնակառուցվածքը, սեռը, փորձը, հիմնական ընդունակությունները, գիտելիքները և ձեռքբերված ունակությունները:

Աշխատանքի պատրաստվածության կարևոր բաղադրիչներից է հանդիսանում աշխատանքի հոգեբանական պատրաստվածությունը, ինչպես նաև աշխատանքային մոտիվացիան: Որոշակի սահմաններում աշխատանքին թույլ ֆիզիոլոգիական պատրաստվածությունը կարող է փոխարինվել համապատասխան ուժեղ աշխատանքային մոտիվացիայով: Նմանատիպ կամ նման աշխատանքների պարբերական կատարման դեպքում դա հանգեցնում է աշխատունակության բարձրացման, որն արտահայտվում է աշխատակիցների լարվածության նվազեցման մեջ, աշխատանքի համար անհրաժեշտ ժամանակի կրճատմամբ և աշխատանքի որակի բարելավմամբ:

Անձնակազմի բարձր մոտիվացիան ցանկացած կազմակերպության կարևոր պայմանն է: Ի՞նչն է մարդկանց դրդում նախընտրել մեկ աշխատանքը մյուսին: Ի՞նչն է և ինչու՞ դրդում մարդկանց դրդապատճառավորված աշխատանքի, և ինչպե՞ս անել, որ նրանք հետաքրքրված լինեն ստացված աշխատանքի վերջնական արդյունքների ստացման մեջ և ամբողջական ուժերով աշխատեն [5, էջ 457]:

Մոտիվացիան մարդու ներքին վիճակն է, որը կապված է պահանջմունքների հետ, որը ակտիվացնում է, դրդում և ուղղորդում է նրա գործողությունները դրված նպատակին:

Պահանջմունքը մարդու կողմից ինչ-որ բանի անբավարարվածության ապրումն է, որը գտնվում է նրանից դուրս, որն անհրաժեշտ է նրան նորմալ կենսագործունեությունն ապահովելու համար: Աշխատանքի ընթացքում մարդիկ ձգտում են տարբեր պահանջմունքների բավարարման, ինչպես ֆիզիոլոգիական, այնպես էլ սոցիալական: Շատերի համար աշխատանքը գումար վաստակելու եղանակ է, որի օգնությամբ նրանք կարող են բավարարել հիմնական կենսաբանական պահանջմունքները (սննդի, հագուստի, կենցաղի և այլն) [5, էջ 458]:

Աշխատանքը թույլ է տալիս մարդուն բավարարել ոչ միայն կենսաբանական, այլև սոցիալական պահանջմունքները: Բացի գումար աշխատելուց մարդը ձգտում է լավ տպավորություն գործել շրջապատի վրա, լավ հարաբերություններ հաստատել նրանց հետ, ինքնահաստատվել, զարգանալ, մարդկանց վրա ազդեցություն գործել: Ոչ բոլոր պահանջմունքներն են մարդու կողմից գիտակցվում:

Մոտիվացիան մարդու վարքը դարձնում է նպատակաուղղված: Այստեղ նպատակը այն է, ինչը կարող է հանգեցնել մարդու կողմից ապրվող ինչ-որ բանի կարիքի չեզոքացմանը: Նպատակին հասնելը հանգեցնում է լարվածության թուլացման կամ անհետացման: Նպատակին հասնելը վերականգնում է ֆիզիոլոգիական և հոգեբանական հավասարակշռությունը:

Դրդապատճառները մարդուն ստիպում են գործել որոշակի ձևով կամ հանդիսանում են գործողության հիմնական դրդիչներ: Ա. Մասլոուն տվել է պահանջմունքների հստակ դասակարգում և համակարգ, որը մոդելի ձևաչափով գտել է լայն տարածում նաև տնտեսագիտության մեջ: Աշխատանքային մոտիվացիայի կարևորագույն տարր է հանդիսանում մարդու՝ աշխատանքային վայրով և իրականացվող աշխատանքով բավարարվածությունը: Աշխատանքով և ստացված աշխատավարձով չբավարարվածությունը կարող է հանգեցնել կազմակերպության համար լուրջ հետևանքների երկարատև ժամանակահատվածում [5, էջ 464]:

Աշխատակազմի կառավարման կարևորագույն խնդիրներից է հանդիսանում դրդապատճառային մեխանիզմի ձևավորումը, որը մարդկանց դրդում է արդյունավետ աշխատանքի (մարդիկ կաշխատեն լավ, եթե միայն ցանկանան) [2, էջ 562]: Նմանատիպ մեխանիզմի կառուցման սկզբունքները հանդիսանում են՝ աշխատակիցների նպատակների հետ, նրանց նշանակալիության հետ կապը, պարզություն, հստակություն, արդարություն, իրականացման անհրաժեշտ պայմանների առկայություն, շտկման հնարավորություն, ինչպես նորի ստեղծման ապահովում, այնպես էլ նրա ընդունմանն ուղղվածություն, տարրերի միջև փոխապայմանավորվածություն, ռացիոնալություն:

Դրդապատճառային մեխանիզմի կառուցման հիմք են հանդիսանում պահանջմունքները՝ մարդու ներքին վիճակը, որն արտահայտում է որևէ բանի ֆիզիոլոգիական կամ հոգեբանական պակասը, անհարմարության զգացումը: Նրա ապրումն ազդում է մարդկանց զգացմունքների, վարքի և մտածողության վրա:

Մարդկանց մոտ բարձրանում է աշխատանքի դրդապատճառվածությունը, եթե նրանք համապատասխանում են աշխատանքի պահանջներին և դրական են վերաբերում նրան, հստակ պատկերացնում են իրենց խնդիրները և դերը, կոլեկտիվի կողմից ստանում են աջակցություն, ունեն ուսուցման հնարավորություն, զգում են ղեկավարի կողմից իրենց նկատմամբ հարգանք և հետաքրքրություն, ստանում են ինքնուրույն գործելու իրավունք, արդարացիորեն պարգևատրվում են, օժտված են անհրաժեշտ տեղեկատվությամբ:

Առանձնացնում են նյութական և ոչ նյութական մոտիվացիա կամ տնտեսական և ոչ տնտեսական մոտիվացիա: Տնտեսական դրդիչները կապված են լրացուցիչ օգուտների հետ, որոնք մարդը կարող է ստանալ իր աշխատանքային պահանջների կատարման արդյունքում: Օգուտը կարող է լինել ուղիղ (գումար) կամ միջնորդավորված, որոնք հեշտացնում են ուղիղի

ստացումը (ազատ ժամանակ, որը հնարավորություն կտա աշխատել այլ վայրում): Տնտեսական դրդիչների օրինակ կարող են լինել բռնուսային համակարգը, պարզևատրումը, որոնց նպատակն է աշխատակիցների ներգրավումը, նրանց աշխատանքի արդյունավետության բարձրացումը [2, էջ 566]: Մոտիվացիայի ոչ տնտեսական եղանակներին պատկանում են կազմակերպչական և բարոյահոգեբանական եղանակները: Նման եղանակների ավելի լավ կիրառումը պայմանավորված է ոչ միան նյութական պարզևատրում ստանալով, այլև մասնավորապես՝ հասնել բարձր արդյունքների, հարգանք վայելել՝ լավ կատարված աշխատանքի արդյունքում, իրականացնել անձնային և մասնագիտական նպատակները, ունենալ բովանդակային աշխատանք, կարիերա կառուցել, ունենալ աշխատանքի և գումարի երաշխիք, չենթարկվել պատժի [2, էջ 575]:

Աշխատանքի ընթացքում աշխատողների մոտիվացիան բարձրացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել և գործադրել և՛ տնտեսական, և՛ ոչ տնտեսական միջոցները՝ աշխատանքի արդյունավետությունը և աշխատողների աշխատունակությունը բարձր և օպտիմալ մակարդակի վրա պահելու համար:

Այսպիսով՝ հիմնախնդրի տեսական վերլուծության արդյունքներից երևում է նրա արդիականությունը, մասնավորապես՝ անձի աշխատունակությունը պայմանավորված է բազմաթիվ հոգեբանական գործոններով, որոնք կապված են մասնագիտական գործունեության առանձնահատկությունների հետ:

Գրականություն

1. **Аванесян Г. М.** Психологические закономерности регуляторных механизмов работоспособности человека в напряженных условиях деятельности – Ереван, 2004
2. **Веснин В. Р.** Управление персоналом. Теория и практика.– Москва: Проспект, 2011.– 688с.
3. **Дикая Л. Г.** Психология саморегуляции функционального состояния субъекта в экстремальных условиях деятельности / <http://www.dissercat.com/content/psikhologiya-samoregulyatsii-funktionalnogo-sostoyaniya-subekta-v-ekstremalnykh-usloviyakh->
4. **Маклаков А. Г.** Общая психология. СПб: Питер, 2001.
5. Психология управления: Хрестоматия. – Самара: Изд. дом «Бахрах-М», 2006-768с.
6. **Урбанович А. А.** Психология управления: Учебное пособие.— Мн.: Харвест, 2003. - 640с.
7. **Фетискин Н. П., Козлов В. В., Мануйлов Г. М.**– Социально-психологическая диагностика развития личности и малых групп. - М., Изд-во Института Психотерапии. 2002 -с.490

8. **Цыбульская М. В.** Конфликтология: Учебное пособие, руководство по изучению дисциплины, практикум по курсу, учебная программа/Московский государственный университет экономики, статистики и информатики. – М., 2007. – 150 с.

ОСОБЕННОСТИ ПСИХОЛОГИЧЕСКИХ ФАКТОРОВ ОБУСЛАВЛИВАЮЩИХ РАБОТОСПОСОБНОСТЬ ЧЕЛОВЕКА

Давтян А. Г. (ЕГУ, Ереван, Армения)

В течении рабочей деятельности реконструируются, изменяются и развиваются не только профессиональные, но и личностные качества человека. Продуктивность деятельности обусловлена рядом факторов, основное условие проявления которых является работоспособность организма. В некоторых рабочих условиях слабая физиологическая готовность организма может заменяться сильной рабочей мотивацией, которая в свою очередь приводит к повышению работоспособности.

Ключевые слова: работоспособность, профессиональная пригодность, функциональное состояние, потребность, мотивация.

THE FEATURES OF PSYCHOLOGICAL FACTORS DETERMINING THE WORKABILITY OF HUMAN

Davtyan A. G. (YSU, Yerevan, Armenia)

During the working process not only professional but also some amount of personal qualities are being reconstructed, modified and developed. The efficiency of the activity is due to several factors, which are reflected by the working capacity of the body. In some working conditions weak physiological readiness to work can be replaced with strong work motivation which itself leads to the increment of productivity.

Key words: workability, professional competence, functional state, need, motivation.

**ԱՊՐԻԼՅԱՆ ՔԱՌՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԶԼՄ-
ՆԵՐՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿՈՒՅԹԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ջեյնայյան Ն. Ա. (ՀՀ ՊԿԱ, Երևան, Հայաստան)

nanezelyan@gmail.com

Հոգեբանական օպերացիաների ոլորտում կան հաղորդումներին ներկայացվող մի շարք պահանջներ: ԶԼՄ-ների կողմից դրանց կիրառության մարտավարությունների ուսումնասիրության նպատակով իրականացրել ենք լրատվական կայքերում ներկայացված տեղեկույթի բովանդակային վերլուծություն: Մենք վերլուծել ենք հայկական և արբեջանական որոշ կայքերում Ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքում ներկայացված տեղեկույթը: Հոդվածում ներկայացված են հետազոտության արդյունքերը, կիրառված մանիպուլյատիվ տեխնիկաների վերլուծության արդյունքները:

Հանգուցային բառեր: *բովանդակային վերլուծություն, Ապրիլյան պատերազմ, հոգեբանական ազդեցության մեխանիզմներ:*

Տեղեկության ներգործության հնարների մեծ մասը թեև նոր չէ, սակայն ներկայումս դրանց արդյունավետությունը կտրուկ աճել է, ինչը մասնագետները բացատրում են կապակցված աշխարհի ձևավորմամբ: Հոգեբանական պատերազմի եղանակներից մեկը ԶԼՄ-ների կիրառությամբ կատարվող քարոզչությունը և ագիտացիան են: Այս կամ այն հանրության դիրքորոշումներն էապես կախված են առկա տեղեկատվական դաշտի բովանդակությունից, որն էլ ձևավորում են ԶԼՄ-ները՝ կիրառելով բազմաբնույթ մեթոդներ: ԶԼՄ-ում ներկայացված իրադատություններն անմիջապես դառնում են հանրային քննարկումների, այն է՝ մարդկանց մտածողության առարկան [2]:

Վ. Մարգարյանն իրավացիորեն նշում է, որ մարդու գիտակցության վրա կանոնավոր կերպով կատարվող նպատակաուղղված ներգործությունը կարող է հանգեցնել այդ մարդու աշխարհայացքային կողմնորոշումների, նրա հոգևոր արժեքների էական փոփոխման, ինչը վերջին հաշվով ազդեցություն կգործի նաև նրա վարքային և հուզական կողմնորոշումների վրա [3]: Հանրային քննարկումներից ելնելով՝ առանձին անհատներ փորձում են տեղավորվել ընդհանուր թեմատիկ շրջանակներում, «ապրել» գլոբալ իրադարձություններով, այսինքն՝ սկսում է աշխատել «Մենք կարևորում են այն, ինչ կարևորում է մեդիան» սկզբունքը [6]:

Համաձայն տեղեկատվության ոլորտի մասնագետ Մ. Մք Լուիանի՝ «Հաղորդագրությունն է մեդիան», որովհետև այն ձևավորում և վերահսկում է մարդու զուգորդությունները և գործողությունները [7], ինչը բնութագրում է


հասարակության և իրականության միջև կապի միջնորդավորվածությունը: ՄքԼուիանը գրում է, որ եթե նշանավոր հույն մտածող Արքիմեդը երբևէ ասել է. «Տվեք ինձ հենման կետ, և ես կշրջեմ երկիրը», ապա այսօր նա կասեր. «Ես կկանգնեմ ձեր աչքերի, ձեր ականջների, ձեր նյարդերի և ձեր ուղեղի վրա, և աշխարհը կպտտվի այն տեմպով, որը ես կընտրեմ» [7]:

Այսպիսով, վերլուծության ենթարկելով Լեռնային Ղարաբաղում 1994 թվականի հրադադարի պայմանագրի ստորագրումից հետո ամենամասշտաբային ռազմական գործողությունները՝ կարևոր է հասկանալ երկրի լրատվական հարթակների կողմից կոնֆլիկտը լուսաբանելու համար կիրառվող մարտավարությունները, հասարակության շրջանում իրադարձությունների ընկալումը ուսումնասիրելու համար: Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել Ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքում մեդիա ծածկույթում ներկայացված հոդվածներում կիրառվող հոգեբանական ազդեցության մեխանիզմները: Բովանդակային վերլուծության համար նախանշվել է 2016 թ. մարտի 15-ից ապրիլի 15-ն ընկած ժամանակահատվածը: Առանձնացվել են 4 լրատվական կայք. 2 հայկական, 2 ադրբեջանական: Կայքերի ընտրությունը կատարվել է ըստ այցելությունների վրա հիմնված վարկանիշի: Կայքերի ընտրության համար հիմք ենք ընդունել similarweb.com [8] կայքի տվյալները: Կայքում ներկայացված են գլոբալ ցանցի վարկանիշային և վիճակագրական անկախ և հավաստի տվյալներ աշխարհի ավելի քան ութսուն միլիոն կայքերի այցելությունների վերաբերյալ: Ներկայացված կայքը համացանցային տիրույթի վերլուծության միակ հավաստի աղբյուրն է: Այսպիսով, բովանդակային վերլուծության են ենթարկվել այն կայքերը, որոնք ունեն նշված երկրում այցելությունների բարձր ցուցանիշ և հակամարտող երկրից այցելություններ: Ադրբեջանական կայքերից վերլուծության համար ընտրվել են haqqin.az (այցելությունների տոկոսը Հայաստանից՝ 11.64%) և vesti.az (5.12%) լրատվական կայքերը: Հայկական կայքերից բովանդակային վերլուծության են ենթարկվել news.am (այցելությունների տոկոսը Ադրբեջանից 1.81%) և 1in.am (2.33%) կայքերը:

Բովանդակային վերլուծության համար ընտրված ժամանակահատվածը բաժանել ենք երկու մասի՝ նախքան Ապրիլյան քառօրյա պատերազմը 15 օր և պատերազմական գործողությունների սկզբից 15 օր ընկած միջակայքերը, ինչը նպատակ էր հետապնդում վերլուծել լրատվական դաշտում ակտիվությունն արտակարգ իրավիճակների ընթացքում և համեմատել տվյալները հարաբերական խաղաղության պայմաններում ստացված նույն ցուցանիշների հետ: Այդ ցուցանիշները հնարավորություն են տալիս դուրս բերել ժամանակագրական օրինաչափություն հոգեբանական օպերացիաների և իրական պատերազմական գործողությունների ծագման միջև:

Կատարված հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ նախքան պատերազմական գործողությունները Ղարաբաղյան հակամարտությանը և

տարածաշրջանին առնչվող լուրերը քանակական առումով զգալիորեն զիջում են պատերազմական գործողությունները սկսվելուց հետո ներկայացված լուրերին: Մարտի 15-31-ն ընկած ժամանակահատվածում մեր կողմից ընտրված հայկական լրատվական կայքերում ներկայացված են տարածաշրջանի վերաբերյալ 39, իսկ ադրբեջանական մամուլում՝ 24 հոդված: Համեմատության համար ներկայացնենք ապրիլի 1-15-ն ընկած ժամանակահատվածի համար նույն ցուցանիշները. մեր կողմից ուսումնասիրության ենթարկված հայկական լրատվական կայքերում՝ 619 հոդված, ադրբեջանական կայքերում՝ 196 հոդված: Այս ցուցանիշները ցույց են տալիս հայկական լրատվական դաշտի բաց լինելը՝ ադրբեջանական կայքերի համեմատությամբ:



Հիստորիան 1. Բովանդակային վերլուծության ենթարկված հոդվածների քանակական վերլուծություն

Մեր կողմից իրականացվել է վերլուծության ենթարկված հոդվածների սենտիմենտային վերլուծություն՝ հիմնվելով բառերի կոնոտացիայի վրա, ինչը ներկայացնում է հոդվածների հուզականության բաղադրիչը. դրական, չեզոք և բացասական: Կոնոտացիան այն զգացողությունն է, որը բառն առաջացնում է անձի մոտ՝ իր իրական, նախնական նշանակությանը զուգահեռ: Կոնկրետ կոնոտացիան հաստատվում է կոնտեքստին համապատասխան: Բովանդակային վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ թե՛ հայկական, թե՛ ադրբեջանական կայքերում գերակշռում են բացասական երանգավորում ունեցող հոդվածները:

Իրականության մասին պատկերացումների ձևավորումն էապես կախված է մատուցման եղանակներից: Ֆրեիմների (շրջանակների) միջոցով ավելի հեշտ է հասարակության գիտակցությունը կենտրոնացնել կոնկրետ իրադարձության կամ դրա որոշակի ասպեկտների վրա [5], այդ իսկ պատճառով մենք հետազոտության միավորները ենթարկել ենք ֆրեիմային վերլուծության: Միևնույն հոդվածը հաճախ համապատասխանում է միաժամանակ երկու

շրջանակի: Ֆրեիմներն առանձնացնելուց հետո կատարել ենք հողվածներում կիրառվող մանիպուլիատիվ տեխնիկաների վերլուծություն:

1. *Տեղեկության ֆրեիմները* տեղեկության աղբյուրի կողմից օգտագործվում են լսարանի շրջանում վստահություն ձևավորելու նպատակով: Այս կատեգորիան ուղղված է անձի կոգնիտիվ ոլորտին ազդեցություն ունենալուն և ներառում է հարաբերականորեն օբյեկտիվ ներկայացված տեղեկությամբ իրադարձության մասին: Այս կատեգորիայի մեջ ներկայացվում են լուրեր պաշտոնական աղբյուրներից, ինչպես օրինակ՝ Լեռնային Ղարաբաղի ՊԲ-ի կամ ՀՀ Պաշտպանության նախարարության ՀՀ ԱԳՆ և այլ պետական կառույցների, ինչպես նաև ստեղծված օպերատիվ իրազեկման կենտրոնի փոխանցած մամուլի հաղորդագրությունները, միջազգային կառույցների գործունեության մասին լուրերը, ինչը նպաստում է, որ տեղեկության ընկալողի համար այն լինի վստահելի ու հեղինակավոր: Այս ֆրեիմը ներառում է նաև կապ նախկինում տրված տեղեկության միջև, օրինակ՝ «ինչպես հաղորդել էինք ավելի վաղ, ...», կամ հետագա նորությունների հետ կապ ստեղծելով՝ «Իրադարձությունների զարգացումը և մանրամասները կներկայացնենք մեր հետագա հրապարակումներում»:

Հայտնի է, որ հաղորդագրությունը բազմիցս կրկնվելու դեպքում ընդունվում է լսարանի կողմից և ամրապնդվում հասարակության գիտակցության մեջ: Հետևաբար այստեղ գործ ունենք *«տեղեկության կրկնողություն»* մանիպուլիատիվ տեխնիկայի հետ:

Այս ֆրեիմի շրջանակներում երկու կողմերի լրատվական կայքերում օգտագործվող բառերից են՝ իրադրության սրացում, թեժ մարտեր, բախումներ, ինտենսիվ հրետակոծություն, բարդ իրադրություն, հրադադարի ռեժիմի խախտում, զինված դիմակայություն, լարվածություն, ուժերի հավասարակշռություն, արտակարգ դրություն, զինադադարի ռեժիմի լայնածավալ խախտումներ: Աղբյուրներից կողմը հաճախ ներկայացնում է հերքում ծանր զինտեխնիկայի օգտագործման, սեփական կորուստների կամ հակառակորդի բնակավայրերը ռմբակոծելու մասին:

2. *Գործողության ֆրեիմները* ցույց են տալիս՝ ինչպես են մարտական գործողությունները պիտակավորվում երկու կողմերի լրատվական կայքերի կողմից: Այս կատեգորիայում ներառված բառերը յուրային կողմի գործողությունները ներկայացնում են որպես պաշտպանական, «հետ շարտել», ճնշել, հավատարիմ մնալ հրադադարի պահպանման պայմանավորվածությանը, «վստահաբար իրականացնում են իրենց առջև դրված մարտական խնդիրները», «վստահորեն վերահսկում է իրավիճակը», «մենք կովում ենք մեր հողի համար», համախմբվել, հակաքայլեր, հուսալի պաշտպանական մարտեր, ագրեսիայի զսպում, իրավիճակը հանդարտեցնել, հակահարված: Մինչդեռ հակառակ կողմի գործողությունները ներկայացվում են հետևյալ բնորոշումներով՝ ագրեսիվ, նախահարձակ, հարձակում, բռնու-

թյուն, սադրանք բառերով, Ադրբեջանի իշխանությունների կազմակերպած վայրագություններ, Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված լայնածավալ պատերազմական գործողություններ, արկակոծել հայկական խաղաղ բնակավայրերը, մոբիլիզացրել էր իր ողջ ռազմական ներուժը և այլն: Այսպիսի բնորոշումներն առաջացնում են հակառակորդի հանդեպ բացասական ընկալումներ:

Ադրբեջանական մամուլում համեմատաբար քիչ ենք հանդիպում գործողության ֆրեիմը: Մարտերի առաջին երկու օրերին Ադրբեջանական մամուլում ներկայացվում էր բացահայտ տեղեկույթ հարձակման մասին: Օրինակ՝ «Ինչ է ցույց տալիս Ադրբեջանի հարձակումը Ղարաբաղում», հայերը հակահարձակման են անցել, Ադրբեջանն առաջին անգամ օգտագործում է ծանր հրետանային տեխնիկա, Ադրբեջանի հաջողված հարձակումը և այլն: Հետագա օրերին տեղեկատվական դաշտում մարտավարությունը փոխվում է՝ անցնելով պաշտպանական մարտավարության և մեղադրելով հակառակորդին խաղաղ բնակավայրերը գնդակոծելու մեջ: Հայտարարվում է կրակը միակողմանի դադարեցնելու և պատասխան գործողությունների անցնելու մասին:

3. *Նույնականացման ֆրեիմը* ներառում է այնպիսի բնորոշումներ, որոնք ներկայացնում են որոշակի խմբին պատկանելությունը: Նույնականացումը հնարավորություն է տալիս անձին վերաբերմունք ձևավորել ինքն իր և այն խմբի հանդեպ, որին ինքը պատկանում է: Հոդվածների այս խումբն ուղղված է խմբային ինքնության ձևավորմանը և ամրապնդմանը, որտեղ կարևոր դեր է խաղում հակադրվածությունն արտաքին օտար միջավայրին: Այստեղ կարևորվում է անհատական ինքնության ձևավորումը, որը թույլ չի տալիս ընկալել օտար հաղորդագրությունները:

Այստեղ հանդիպում ենք «կարծրադիպերի օգտագործում» մանիպուլյացիոն տեխնիկան, ինչը ենթադրում է նույնական հատկանիշներով անհատների խմբին որոշակի «սոցիալական տիպեր» վերագրելը: Ժամանակի ընթացքում այդ պատկերը, ամրապնդվելով մարդկանց գիտակցության մեջ, փորձնական ստուգման այլևս չի ենթարկվում: Մյուս մանիպուլյատիվ հնարքը, որի հետ գործ ունենք *պիտակավորումն* [1, 2, 4] է. դրանք ստեղծվում և շրջանառության մեջ են դրվում (օրինակ՝ կոռումպացված պետական ապարատ)՝ հաճախ փոխարինելով ավելի չեզոք երանգավորում ունեցող ու պակաս ագրեսիվ արտահայտություններին:

Այս ֆրեիմն ուղղված է անձի հուզական ոլորտին: Հայկական կողմի ներկայացվող բնորոշումներ հետևյալն են՝ Արցախի պաշտպանության բանակ, պաշտպանական ստորաբաժանումներ, հայկական զորքեր, ազգ-բանակ: Հակառակ կողմը ներկայացվում է «Ադրբեջանական կողմ», վարձկաններ, գրո-հայիներ, ադրբեջանական հրոսակախումբ, ահաբեկչական խմբավորումներ, ադրբեջանական հատուկ նշանակության ջոկատ, ահաբեկչական ու հանցագործ պետություն, հազվադեպ՝ ադրբեջանական զինուժ բնորոշումներով:

Ադրբեջանական մամուլում հանդիպում ենք Ղարաբաղյան սեպարատիստներ, օկուպանտներ, հանցավոր ռեժիմ, հայ տեռորիստներ, ղարաբաղյան կլան, կոռումպացված պետական ապարատ, ագրեսոր, հանցավոր միավորումներ, Ռուսաստանի նահանգ և այլն: Փոխարենը՝ յուրայինների նույնականացումը արտահայտվում է հետևյալ կերպ՝ «Ադրբեջանը խաղաղ պետություն է», Ադրբեջանական կանոնավոր բանակ:

4. *Նկարագրողական ֆրեհմը* նույնպես ուղղված է անձի հուզական ոլորտի վրա ազդեցություն ունենալուն: Ներառում է հուզական բնորոշումներ, կարծրատիպային բառեր և պիտակներ, որոնք հակադարձ վալենտականություններով օգտագործվում են երկու կողմերին բնորոշելու համար: Այստեղ ՋԼՄ-ները դիմում են «ցեխ շարտելու» և «ծաղրելու» հնարքներին: «Ցեխ շարտելու» էությունն այնպիսի պիտակների և տերմինաբանության ընտրությունն է, որոնք խնդրո առարկային խիստ բացասական գնահատական են տալիս: Ադրբեջանական մամուլում կիրառվում է «ծաղրի» հնարքը, որի ազդեցությունը հիմնվում է որևէ սուբյեկտի առանձին արտահայտություններն ու վարքի տարրերը ծաղրելուն, ինչի արդյունքում վերջինիս նկատմամբ անլուրջ վերաբերմունք է ձևավորվում ու տարածվում է նաև նրա հետագա հայացքների ու արտահայտությունների վրա [2]:

Այս կատեգորիայում հաճախ կիրառվում է հակառակորդի իշխանությունների վարկաբեկման, ՋՌԻ ղեկավարության հեղինակազրկման տեխնիկան, սեփական զինված ուժերի մարտունակության շեշտադրում: Այս ֆրեհմը հնարավորություն է տալիս ձևավորել «թույլ թշնամու», ագրեսորի, ահաբեկչական պետության կերպար և վստահություն «իզոր ու մարտունակ» սեփական զորքերի հանդեպ: Հայկական լրատվական կայքերում հակառակ կողմին ներկայացնելիս օգտագործվում են հետևյալ արտահայտությունները՝ հակառակորդ, թշնամի, ձախուված դիվերսիոն հետախուզական ներթափանցման փորձ, տապալված, մարդու իրավունքների կոշտ խախտումներ, Ադրբեջանի բլից-կրիգը ձախողվեց, ադրբեջանական զինուժի վայրագություններ, ահաբեկչական քաղաքականություն, ապակառուցողական քայլեր, թշնամու ոտնձգություններ, հյուժման մարտեր, բռնապետ Ալիև, Ադրբեջանի բռնապետ, մեկ անձի քմահաճույք, զոհվածների մարմինների նկատմամբ անարգանքի ու դիակապտության բազմաթիվ դեպքեր, անմարդկային արարքներ, խաղաղ բնակչության հանդեպ բռնարարքների, վայրագ սպանություններ, ադրբեջանաթուրքական հակահայ ռազմատենչ բանաձև, հանցավոր գործողություններ, ռազմական հանցագործություններ: Մինչդեռ հայկական կողմի գործողությունները նկարագրվում են որպես՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բանակի հմուտ գործողություններ, զորքերի և ռեզերվների մարտական բարձր ոգի, հաջողություն, հաղթանակ, պատճառելի ծանր կորուստներ, ապահովել անվտանգությունը, օրինակելի միասնություն, արիություն, մասսայական քաջության դեպքեր, մինչև վերջ կռվել են ու զոհվել

բազմապատիկ ուժերի դիմաց, կառավարման բարձր մակարդակ, պատրաստված ու վճռական հրամանատարների ու լավ փորձի շնորհիվ, մեր զինվորների հերոսական գործողությունները, ազգի ոգի, մեր տղաները միշտ էլ ուժեղ են եղել: Ադրբեջանական մամուլում հանդիպում ենք հուզական երանգավորում ունեցող այնպիսի նկարագրողական արտահայտություններ, ինչպես՝ պրովոկացիոն ակտիվություն, թշնամական պրովոկացիա, թշնամի, հակառակորդ, ռազմական անհաջողություն, հայկական լրբինգի ապակառուցողական գործունեություն, գենոցիդի քաղաքականություն:

5. *Կորուստ-հաղթանակ ֆրեիմը* ներկայացնում է հիմնականում յուրային կողմի ձեռքբերումները, ավելի քիչ ներկայացնելով կորուստների մասին տեղեկույթ: Ձեռքբերումների մասին տեղեկույթի գերակայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ անձը հակված է կենտրոնանալ բացասական երևույթների վրա, իսկ մեդիա մարտավարությունն այս դեպքում կարելի է մեկնաբանել որպես դրական հուզական ֆոն ստեղծելուն ուղղված:

ՁԼՄ-ների կողմից կիրառվող մանիպուլյատիվ հնարքն այս դեպքում *փաստերի ընտրանքն է կամ «լռեցում և ընդգծումը»*. սա նույնպես կիրառվում է հանրության վստահությունն ապահովելու համար, օբյեկտիվ և հանգամանալից, սակայն ոչ նշանակալի մանրամասնությունների հաղորդման և կարևոր փաստերի քողարկման կամ առհասարակ իրադարձությունների ոչ ճշմարտացի մեկնաբանման տեխնիկա է: Այս տեխնիկայի միջոցով հանրությանը ուշադրությունը կենտրոնացվում է մի երևույթի վրա՝ շեղելով մեկ այլ երևույթից [2]: Հայկական լրատվական դաշտում, օրինակ՝ Ապրիլյան քառօրյա պատերազմի առաջին օրերին տեղեկույթ չէր տրամադրվում հակառակորդի կողմից դիրքեր գրավելու մասին, կամ լինում էր թռուցիկ ակնարկ, որը ներկայացվում էր հակառակորդի մեծաթիվ կենդանի ուժի և զինտեխնիկայի կորուստները շեշտելու ֆոնին: Ավելի ուշ, խոսելով գրավված դիրքերի մասին, պաշտոնատար անձինք տալիս են այսպիսի բնորոշում՝ «ընդամենը մի փոքրիկ տարածք հարավում և մի փոքրիկ հատված հյուսիսում, ... ընդամենը 200-300 մետր տարածք են գրավել ադրբեջանցիները՝ տալով ամեն մետրի համար մեկից ավելի զոհ»:

Այս դեպքում հայկական լրատվական դաշտում ներկայացվում է հիմնականում հակառակորդի տեխնիկային հասցված վնասները, շեշտվում է, որ հայկական կողմը վնաս չի հասցնում բնակավայրերին և չի թիրախավորում խաղաղ բնակչությանը: Միևնույն ժամանակ արձանագրվում են փաստեր հակառակորդի կողմից հայկական խաղաղ բնակավայրերի գնդակոծման և խաղաղ բնակիչների մահվան, դիակների անարգանքի և սրբապղծության դեպքերի: Հայկական զինված ուժերում տեխնիկայի և կենդանի ուժի կորուստների մասին տեղեկույթը կրում է միասնական բնույթ և հաղորդվում է պաշտոնական աղբյուրից ներկայացված ու պարբերաբար թարմացվող տվյալներ:

Ադրբեջանական մամուլում հաղորդվում է ընդհամենը 12 զինվորի մահվան մասին, հերքվում են շուրջ 200 զոհ ունենալու և հսկայաձավալ ռազմական տեխնիկայի կորուստների մասին համացանցում տարածված լուրերը: Փոխարենը ներկայացվում է տեղեկույթ ադրբեջանական բնակավայրերի գնդակոծման մասին և հայկական կողմի մեծաթիվ կորուստների մասին:

6. *Հեղինակության վկայակոչում/փորձագետի կարծիք* ֆրեիմը առանձնացրել ենք հիմք ընդունելով, որ մարդիկ, գաղափարները, գրիշխող ՋԼՄ մեկնաբանությունները սկսում են հաղթել միայն այն պարագայում, երբ գտնվում են գաղափարական և բարոյական առումով առաջատար դիրքերում [2]: Այս կատեգորիայի հոդվածները կարող ենք համարել նաև վերամեկնաբանման (ռեֆլեկտիվ) միջոց, որը հնարավորություն է տալիս արժեքներն այնպես փոխել և մեկնաբանել, որ դրանք ավելի շատ համապատասխանեն ստեղծված նոր պայմաններին: Գ. Պոչեպցովն, անդրադառնալով օտար տեղեկատվական հոսքերին և արժեհամակարգային խնդիրներին, նշում է, որ տեղեկատվական պատերազմն ուղղված է ոչ այնքան նոր փաստեր տրամադրելուն, որքան արդեն առկա փաստերի մեկնաբանմանն ու վերամեկնաբանմանը: Մեկնաբանությունը միշտ կառուցվում է որոշակի հաշվարկման կետից, վերամեկնաբանությունը փոխում է այդ հաշվարկման կետը, որպեսզի այն այլ գնահատական ստանա զանգվածային գիտակցության մեջ: Եթե մատուցվում են նոր փաստեր, ապա դրանք ծառայում են այդ նույն նպատակին՝ աշխարհի այլ մոդելի կառուցմանը [2]:

Հեղինակության վկայակոչումը հաճախ կիրառվող ներշնչման մեթոդներից մեկն է: Այս ֆրեիմում հանդիպում ենք նաև *«ապավինում կարծիքի առաջադարձներին»* մեխանիզմի հետ: Այս մեթոդը տվյալ հարցում իրազեկ անձանց՝ փորձագետներին ներգրավելու տեխնիկա է, որը կիրառվում է որպես անհատի արժեքային կողմնորոշումների և հասարակական կարծիքի վրա ազդեցության արդյունավետ մեխանիզմ:

Հատկանշական է, որ այս բաժինը ներառում է ամենամեծաքանակ հոդվածները: Հայկական մամուլում մեծամասամբ ներկայացվում է միջազգային հանրության կողմից հրադադարի ռեժիմը պահպանելուն ուղղված կոչեր, բանակցային գործընթացի վերականգնմանն ուղղված ԵԱՀԿ Մինսկի խմբի ջանքերը ներկայացնող նյութեր, ինչպես նաև քաղաքական գիտությունների ոլորտում փորձագետների, ռազմագետների կարծիքներ տարածաշրջանում իրադրության մասին: Բուռն քննարկումներ է առաջացրել BBC-ի անդրադարձը Ապրիլյան քառօրյա մարտերին, որը հենց Արցախյան ռազմաճակատից տեսանյութ էր ներկայացրել: Ադրբեջանական մամուլում այս ֆրեիմը հիմնականում ներառում է ռուս քաղաքագետների կամ ադրբեջանցի ներկայիս ու նախկին քաղաքական գործիչների կարծիքները խնդրի վերաբերյալ:

7. *ԼՂՀ կարգավիճակը* ներկայացնող ֆրեիմն ընդգրկում է այնպիսի բառեր, ինչպես՝ Արցախի անկախության ճանաչում, ինքնորոշման իրավունք,

վերականգնել Լեռնային Ղարաբաղին որպես բանակցությունների լիիրավ կողմ, Լեռնային Ղարաբաղը դարձնել քաղաքական բանակցությունների մասնակից, Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը պայքարում է իր ազատության համար և այլն:

Ադրբեջանական մամուլում Լեռնային Ղարաբաղը ներկայացվում է որպես օկուպացված տարածք, չճանաչված, ինքնակոչ և դե-ֆակտո Հայաստանին միացված տարածք:

8. *Կոչ միջազգային հանրությանը* ֆրեիմը ներառում է քիչ քանակությամբ հողվածներ, որոնք ներկայացնում են խնդրի խաղաղ կարգավորմանն ուղղված հայկական կողմի դիրքորոշումը: Այս բնույթի հաղորդագրությունները ձևավորում են խաղաղարարի, պատերազմի թակարդում պարտադրված կերպով լինելու կերպար: Այստեղ ընդգրկված են այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են՝ Թուրքիան պետք է դադարեցնի ահաբեկչությանն աջակցելն, այս հակամարտությունը չունի ռազմական լուծում, հակամարտությունը պետք է լուծվի բանակցային ճանապարհով: Առկա են նաև հողվածներ տարբեր երկրներում հայ համայնքների կողմից անցկացված բողոքի ցույցերի մասին, ինչպես նաև հակառակորդի կողմից դիակների անարգանքի դեպքերով Մարդու Իրավունքների Եվրոպական դատարանին դիմելու մասին տեղեկույթ:

Ադրբեջանական կողմը դիմում է միջազգային հանրությանը հետևյալ կոչով. «Հայաստանը պետք է հանի զորքերը գրավված տարածքներից»:

9. *Դաշնակցային հարաբերություններ* ֆրեիմը ներկայացնում է Հայաստանի և Ադրբեջանի՝ դաշնակիցների հետ ունեցած հարաբերությունները և մեկնաբանում մարտական գործողությունների ընթացքում իրավիճակի շտկմանն ուղղված դաշնակիցների գործողությունները: Հայկական կողմը ներկայացնում է որոշակի հակառուսական տրամա-դրություններ՝ Ադրբեջանին զենք մատակարարելու առնչությամբ, շեշտվում է, որ Ադրբեջանը կռվում է հայերի դեմ Ռուսաստանից գնված զենքով և զինտեխնիկայով: Միևնույն ժամանակ, ներկայացվում է տեղեկույթ Հայ-Ռուսական երկկողմ հանդիպումների, պաշտոնական հեռախոսազրույցների մասին, ներկայացվում է պաշտոնական Ռուսաստանի տարածած հայտարարությունները իրավիճակով մտահոգվածության վերաբերյալ:

Ադրբեջանական մամուլում նույնպես հանդիպում ենք նյութեր դաշնակցային հարաբերությունների վերաբերյալ, որոնք մի կողմից մեղադրանքներ են Ռուսաստանին՝ Հայաստանին պաշտպանելու համար, մյուս կողմից՝ Իսլամական համագործակցության և Ադրբեջանին աջակցություն հայտնած այլ երկրների մասին:

Տեղեկատվական ներխուժման դեմ հնարավոր պաշտպանական հակազդեցություն կարող է դառնալ նրա այսպես կոչված փակ լինելը: Սակայն կարող ենք փաստել, որ բովանդակային վերլուծության համար ընտրված հայկական ԶԼՄ-ները, ինչն արտացոլում է պաշտոնական ռազմավարությունը, բաց

լինելով օտար տեղեկույթի առջև՝ հենվում են իրադարձությունների սեփական մոդելը ստեղծելու վրա: Այս դեպքում առաջարկվող մոդելին հակասող տեղեկույթը մերժվում է թիրախային լսարանի կողմից: Լրատվական դաշտի բաց լինելը ստեղծում է վստահելիության մթնոլորտ, ներկայացվող բովանդակությունը նպատակային լսարանի կողմից ընկալվում է որպես վստահելի և ձեռնարկող գործողությունների սպասվող հետևանքների առումով տագնապ չի առաջացնում:

Այսպիսով, Ապրիլյան քառօրյա պատերազմի մեղիա լուսաբանման բովանդակային վերլուծության արդյունքները հնարավորություն են տալիս առանձնացնել տեղեկության ֆրեյմների մի քանի կատեգորիա, որոնցից յուրաքանչյուրն ունի ազդեցության որոշակի թիրախ: Կարող ենք եզրակացնել, որ ներկայացվող հաղորդումները համապատասխանում են հոգեբանական օպերացիաներում կիրառվող հաղորդումների արդյունավետության պահանջներին, այն է՝ գտնվում են նպատակային լսարանի համար մատչելիության սահմաններում, հայտնվում են նպատակային լսարանի ուշադրության դաշտում, բառերն ու արտահայտությունները հասկանալի են, բովանդակությունն ուղղված է վստահության առաջացմանը: Ներկայացվող հաղորդումներում առաջնությունը ռացիոնալ բաղադրամասի նկատմամբ տրվում է հուզականին:

Այսպիսով, կատարված հետազոտության արդյունքները հնարավորություն են տալիս եզրակացնել, որ հայկական և ադրբեջանական մամուլում տեղեկատվական պայքարի մարտավարություններում տարբերությունները զգալի չեն: Նշենք դրանցից հիմնականը. ադրբեջանական մամուլում մեծ տեղ են գրավում ծաղրի և լռեցման մանիպուլյատիվ հնարքները, իսկ հայկական մամուլում տեղեկույթի կրկնողությունը և հեղինակության վկայակոչումը:

Իրականացված հետազոտությունը հնարավորություն է տալիս բացահայտել տեղեկույթի հոգեբանական ազդեցության մեխանիզմները, ինչը մեծապես կարող է ազդեցություն ունենալ անձի արժեքային կողմնորոշումների փոխակերպման հարցում: Հետագա հետազոտություններում հարկ է ուսումնասիրել զուգորդությունները, որոնք առաջանում են ներկայացվող հաղորդումների առընչությամբ, ինչպես նաև ուսումնասիրության ենթարկել անձի արժեքային համակարգը և բացահայտել տեղի ունեցող փոխակերպումները:

Գրականություն

1. **Հարությունյան Գ., Քոթանջյան Հ.** և համահեղինակներ, Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը, Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2009, 114 էջ:
2. **Հարությունյան Գ.** և համահեղինակներ, Տեղեկատվական անվտանգություն. – Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2017. – 320 էջ:

3. **Մարգարյան Վ. Հ.**, Մարտական գործունեության հոգեբանություն: Եր.: ՀՀ ՊՆ ազգային ուսումնական հետազոտությունների ինստիտուտ, 2009, 436 էջ
4. **Кара-Мурза С., Смирнов С.**, Манипуляция сознанием -2, М., Эксмо, Алгоритм, 2009, 529 с.
5. **Goffman E.**, Frame analysis. An essay of the organization of experience. Northeastern University Press, United States, 1986, 600 p.
6. **Griffin E.**, A First Look at Communication Theory. N.Y.: McGraw-Hill, Inc. 1996, 560 p.
7. **McLuhan M.**, Medium is the message, United Kingdom, 1967, 159 p.
8. <https://www.similarweb.com/>

ОСОБЕННОСТИ ИНФОРМАЦИИ О ЧЕТЫРЕХДНЕВНОЙ АПРЕЛЬСКОЙ ВОЙНЕ В СМИ

Зейналян Н. А. (АГУ РА, Ереван, Армения)

Информация, представленная в СМИ должна соответствовать ряду требованиям в сфере психологических операций. Нами был проведен контент-анализ для выявления стратегий, используемых в средствах массовой информации в течение четырехдневной апрельской войны в Нагорном Карабахе. Была предпринята попытка интерпретировать методы манипуляции, используемые в выбранных нами армянских и азербайджанских сайтах в течение четырехдневной апрельской войны. Результаты исследования представлены в статье.

Ключевые слова: контент анализ, Апрельская война, психологические механизмы влияния

INFORMATION FEATURES OF FOUR DAY APRIL WAR IN MASS MEDIA

Zeynalyan N. A. (PAARA, Yerevan, Armenia)

There are many requirements to the messages in the sphere of psychological operations. Content analysis has been conducted to reveal strategies used in Mass media during four day April War. An attempt has been made to interpret manipulation techniques used in chosen Armenian and Azerbaijani websites during this time period. Results of the study are presented in the article.

Keywords: content analysis, April War, psychological mechanisms of influence.

ՔՈՓԻՆԳ ՎԱՐՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Կարապետյան Ն. Ի. (ԵՊՀ, Երևան, Հայաստան)

nare_karapetyan@ysu.am

Սույն հոդվածը նվիրված է ղեկավար-աշխատող փոխհարաբերություններում աշխատակցի քոփինգ վարքի դրսևորման առանձնահատկությունների վերլուծությանը: Այդ նպատակով կատարվել է պիլոտաժային հետազոտություն, որին մասնակցել են 23-65 տարեկան աշխատանքային փորձ ունեցող անձիք: Բացահայտվել են աշխատողների քոփինգ վարքի և սոցիալական ինքնավերահսկման կապը՝ կախված աշխատանքային փորձի և տարիքային առանձնահատկությունների հետ:

Հանգուցային բառեր՝ հոգեվիճակ, քոփինգ, վերահսկում, կառավարում, ղեկավար, ինքնավերահսկում:

Աշխատանքի արդյունավետ կառավարման բազմաթիվ գիտական հայեցակարգեր և մոտեցումներ կան: Արտասահմանյան հետազոտությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ աշխատակազմի կառավարում և վերահսկում եզրույթները միանշանակ բացասական ընկալում ունեն աշխատակիցների կողմից, դա է պատճառը, որ մարդկային ռեսուրսների կառավարման ժամանակակից գրականության մեջ սկսել է կիրառվել ինքնակառավարում և ինքնավերահսկում եզրույթները, քանի որ դրանք ընկալվում են որպես ինքնուրույնության և կամքի դրսևորման ցուցանիշ: Այսինքն աշխատանքային գործունեության կազմակերպման մեջ նոր միտում կա ոչ թե աշխատակցին ենթարկել ղեկավարին, այլ՝ ձևավորել որոշակի մեխանիզմ, որը կնպաստի ինքնավերահսկման ձևավորմանը: Այստեղ առաջ է գալիս երկկողմանի գործընթաց: Մի կողմից՝ ստեղծվում են աշխատանքային իրավիճակներ, որում դրսևորվում է քոփինգ ռազմավարությունը, մյուս կողմից՝ ռազմավարության վրա ազդում է և՛ ղեկավարի կառավարման ոճը, և՛ աշխատակցի ինքնավերահսկումը:

Սույն հոդվածի նպատակն է՝ բացահայտել աշխատանքային գործընթացում աշխատակցի քոփինգ վարքի և սոցիալական ինքնավերահսկման առանձնահատկությունների կապը:

Նախ անդրադառնանք աշխատանքային գործընթացում ղեկավար-աշխատող փոխհարաբերությունների ներքո աշխատակցի քոփինգ վարքի ռազմավարության ուսումնասիրման տեսամեթոդաբանական հիմքերի բացահայտմանը:

Քոփինգ վարքի ուսումնասիրությունը հոգեբանական գրականության մեջ հիմնականում կապվում է սթրեսի և դրա հաղթահարման հետ (Ս. Լազարուս,

Ռ. Ֆոլկման): Մի շարք գիտնականների կարծիքով (Է. Ֆրայդենբերգ, Պ. Վիտալիանո): Կյանքի տարբեր բնագավառներում քրփինգի դրսևորման արդյունավետությունն ունի գնահատման տարբեր չափանիշներ: Օրինակ՝ աշխատակցի քրփինգ վարքի դրսևորման դրական պատասխանը կարող ենք համարել նրա արդյունավետ գործունեությունը:

Ժամանակակից մոտեցումներն առավել համալիր պատկերացում ունեն քրփինք հասկացության վերաբերյալ: Որոշ հեղինակներ այն կապում են սոցիալական ինքնավերահսկման հետ, որոշները՝ դաստիարակության, կան նաև շատ հետազոտություններ, որոնք ապացուցում են քրփինգի դրսևորման իրավիճակային գործոնը:

Արտասահմանյան պրակտիկայում, ինչպես նաև Հայաստանում քրփինգի (հաղթահարող և ինքնավերահսկող վարքի) ուսումնասիրությունները սակավաթիվ են, այդ պատճառով նրա յուրաքանչյուր բաղադրիչի ուսումնասիրությունն էլ կարևոր է աշխատանքային գործընթացում: Քրփինգի բաղադրիչներից մեզ առավել հետաքրքիր է սոցիալական ինքնավերահսկողությունը: Հայտնի է, որ մարդու սոցիալականացումը ընթանում է մի քանի օղակներով և այդտեղ շատ է կարևորվում հասարակության մեջ նորմերին համապատասխան վարքի դրսևորումը: Նորմերն էլ երբեմն խախտելու մեծ ցանկություն է առաջանում, սակայն մարդու ինքնավերահսկման մեխանիզմն առավել ուժեղ է գտնվում: Այստեղ կարելի է նկատել, որ և՛ քրփինգը, և՛ սոցիալական վերահսկողությունը գործի են դնում մարդու մոտ նույն ինքնավերահսկող և հաղթահարող մեխանիզմը:

Դիտարկենք մի քանի հասկացություններ, որոնք սերտորեն կապված են քրփինգ վարքի ձևավորման հետ և կարելի է ասել համարվում են նրա բաղադրիչը:

Ինքնավերահսկումը՝ աղեկվատ, նպատակադուրոված հոգեկանի նախապայման է: Անձի ինքնադաստիարակությունը և կատարելագործումը, ուսուցումը և պրոֆեսիոնալ գործունեությունը, հասարակության մեջ նրա վարքը ենթադրում է նաև ինքնավերահսկում: Այն համարվում է մարդու գիտակցության և ինքնագիտակցության պարտադիր նախանշաններից [2]:

Ինքնավերահսկումն անմասն չի մնում մարդկային գործունեության ոչ մի տեսակից՝ խաղային, ուսումնական, աշխատանքային, գիտական, սպորտային և այլն: Ըստ գործունեության առանձնահատկության կարող են լինել՝ ժամանակային, տարածական, կառուցվածքային, ինչպես նաև՝ կամաժին ինքնավերահսկում:

Երբ խոսում ենք ինքնավերահսկման մասին, չենք կարող չանդրադառնալ նրա հուզական բաղադրիչին: Աշխատակցի ինքնավերահսկման գործընթացը սերտորեն կապված է նրա հույզերի արտահայտման, տարբեր իրավիճակներում համարժեք ռեակցիայի և հաղորդակցական հմտությունների ցուցաբերման հետ: Հույզերի դրսևորումը ևս համարվում է քրփինգ վարքի մի մասը: Դրանց արտահայտման մեջ մեծ կարևորություն ունի ոչ միայն իրավիճակին

համարժեք հույզի ցուցաբերումը, այլ նաև հույզի հասկացվածությունը տվյալ աշխատակցի կողմից: Ամերիկյան հետազոտություններից մեկը ցույց է տվել, որ մարդկանց միայն 36%-ն ունի հուզական բարձր ինտելեկտ: Այդ մարդիկ կարողանում են հասկանալ իրենց հույզերը, ինչն առավել դյուրին է դարձնում դրանց արտահայտումը կամ կառավարումը [5]:

Իրականում, եթե աշխատանքային ամբողջ գործընթացը հիմնվի աշխատակցի ինքնավերահսկման վրա, անհաջողության ռիսկերը կտրուկ ավելանում են: Տասնամյակներ շարունակ ստեղծվել են կառավարման կառուցվածքային մոդելներ, որոնք տարբեր օրենքներով և պարտավորություններով կառավարել են աշխատակցին: Դա նվազեցրել է անձնային գործունը, մի գուցե, ազդելով նաև ստեղծագործական մտածողության կամ խնդրի անհատական լուծման վրա: Սակայն այս դեպքում, արդյունավետության որոշակի ցուցանիշը միշտ պահպանվել է:

Երբ աշխատակցին տրվում է առաջադրանք, որը պետք է իրականացվի առանց արտաքին վերահսկման, նրանից պահանջվում է համարժեք կերպով մեկնաբանել տրված տեղեկատվությունը, զարգացնել բարենպաստ նախադրյալներ կազմակերպության գործունեությանը համապատասխանելու և տրրված առաջադրանքը արդյունավետ կատարելու համար [3]:

Ու. Շեֆերի կարծիքով, պետք է հաշվի առնել, որ եթե տրված ներքին ատրիբուտներին զուգահեռ ներմուծվում է լրացուցիչ արտաքին վերահսկողություն, իսկ ինքնավերահսկումը ձգտում է դոմինանտ լինել, դա կարող է հանգեցնել արտաքին վերահսկման ընկալման փոփոխության և ինքնավերահսկման մոտիվացիայի առաջացմանը՝ դրված խնդիրը լուծելու համար: Այս պարագայում, աշխատակցի մոտիվացիան ուղղվում է ոչ թե աշխատանքի կատարմանը, այլ կատարման ընթացքում կառավարման և ինքնակառավարման ձևավորմանը [4, էջ 61-63]:

Վերոնշյալ տեսակետների և դրանցում քննարկվող հասկացությունների կապը որոշակի տեսանելի դարձնելու և հստակեցնելու համար կատարվել է պիլոտաժային հետազոտություն 84 աշխատակիցների հետ, որոնցից 34-ը ունեն 15-38 տարվա աշխատանքային փորձ, իսկ 50-ը՝ 3-8 տարվա աշխատանքային փորձ: Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդիկաները՝

1. «Սնայդերի սոցիալական ինքնավերահսկման սանդղակը», որը բացահայտում է ինքնավերահսկման երեք մակարդակ՝ բարձր, միջին և ցածր;
2. Պրոակտիվ վարքի վերահսկման հարցարանը, որը բացահայտում է հետազոտության մասնակցի քրփինգ վարքի դրսևորման տեսակը: Վերջին մեթոդիկայում առանձնացվում են.
 - պրոակտիվ հաղթահարում, որը ներառում է կոգնիտիվ և վարքային բաղադրիչներ,

- ռեֆլեքսիվ հաղթահարում՝ համեմատման և արդյունավետության գնահատման միջոցով վարքային հնարավոր այլընտրանքների որոշման գործընթաց,
- ռազմավարական պլանավորում՝ իրենից ենթադրում է մանրակրկիտ մտածված, նպատակաուղղված գործողությունների պլանի ստեղծման գործընթաց, որում առավել մասշտաբային նպատակները բաժանվում են ենթանպատակների, որոնց ձեռքբերման կառավարումը դառնում է առավել հասանելի,
- կանխարգելիչ հաղթահարում՝ իրենից ներկայացնում է պոտենցիալ սթրեսների կանխատեսում և բացասական հետևանքների վերացման գործողությունների նախապատրաստում մինչև հնարավոր սթրեսային իրավիճակի առաջացումը: Նման անորոշությունը մղում է մարդուն օգտագործել հաղթահարող վարքի մի ամբողջ փաթեթ՝ դրամային միջոցների կուտակում, ապահովագրություն, առողջ ապրելակերպի վարում և այլն,
- գործիքային աջակցության փնտրտուք՝ սթրեսային իրավիճակի հաղթահարման ընթացքում ինֆորմացիայի, խորհուրդների և հետադարձ կապի ապահովում շրջապատի միջոցով,
- հուզական աջակցության փնտրտուք՝ ուղղված է հուզական դիսթրեսի կարգավորմանը՝ այլ մարդկանց հետ զգացմունքները կիսելու միջոցով: Փնտրում է սփոփանք և շփում ոչ անմիջական սոցիալական շրջապատից:

Խմբերը բաժանվել են ըստ տարիքային և աշխատանքային փորձի:

Հետազոտության քանակական վերլուծությունը ցույց է տալիս, որ 23-28 տարեկան հետազոտվողների մոտ սոցիալական ինքնավերահսկման սանդղակը բարձր մակարդակ ունի, իսկ 40-65 տարեկան հետազոտվողների մոտ նույն սանդղակը միջին և ցածր արդյունքներ ունեն:

Հետազոտության տվյալները հաշվարկվել և վերլուծվել են մաթիմատիկական SPSS ծրագրային ապահովման միջոցով: Տվյալների վերլուծությունը ցույց է տվել, որ առաջին խմբի մոտ պրոակտիվ և ռազմավարական քոփինգ սանդղակների նորմալ բաշխումը առկա չէ, իսկ երկրորդում՝ 40-65 տարիքային խմբում առկա է: Հետևաբար առաջին խմբի տվյալների վերլուծությունը կատարվել Պիրսոնի գործակցով, իսկ այն խումբը, որի մոտ նորմալ բաշխում առկա չէ՝ Սպիրմանի գործակցով:

23-28 տարիքային խմբի մոտ առավել շեշտված են պրոակտիվ, ռազմավարական և ռեֆլեքսիվ հաղթահարումը: Հետազոտության արդյունքները դիտարկվել և վերլուծվել են հաշվի առնելով տվյալ տարիքային խմբերին բնորոշ հոգեբանական առանձնահատկությունները, աշխատանքային փորձի հետ առաջացող նորագոյացությունները, մասնագիտական և սեռային տարբերությունները:

Գիտարկենք 40-65 տարեկան աշխատակիցների խումբը: Բոլորիս հայտնի է, որ մարդիկ ունենում են տարիքային ճգնաժամեր: Մասնագիտական գրականությունից հայտնի է, որ 35-45 տարեկանում սկսում է միջին տարիքի ճգնաժամը: Գրականության մեջ նշվում է, որ այդ տարիքային փուլում մարդիկ առավել շեշտված են սկսում մտածել կյանքի իմաստի և առկա ձեռքբերումների մասին: Միջին տարիքում հաջողության հասած մարդիկ առավել խորը ճգնաժամ են տանում, քան այն մարդիկ, ովքեր կայուն են եղել և մեծ զարգացում չեն ապրել: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ հաջողության գագաթնակետին հասած մարդիկ չեն ունենում բավարարության զգացում, ի տարբերություն նրանց, ովքեր չեն հասել այդ կետին: Բացի մասնագիտական ձեռքբերումներից և սոցիալական կարգավիճակի փոփոխությունից, մարդու մոտ տեղի են ունենում նաև ներհոգեկան փոփոխություններ: Կ. Յունգը նշել է, որ 35-40 տարեկանում փոփոխությունները սկզբում տեղի ունենում անգիտակցական մակարդակում, ինչը հետագայում ազդում է մնացած ոլորտների վրա [1, էջ 167-169]:

Նշված տարիքային խմբի մոտ թեստի արդյունքները ցույց են տվել, որ սոցիալական վերահսկումը գտնվում է միջին և միջինից ցածր մակարդակներում: Հետազոտման արդյունքները ապացուցում են, որ տարիքային ճգնաժամ ապրող մարդը, խորասուզվելով սեփական զգացմունքների հասկացման և կյանքի վերիմաստավորման գործընթաց, կարող է ցուցաբերել որոշակի ապատիա շրջապատի նկատմամբ, ինչն էլ նվազեցնում է սոցիալական վերահսկողությունը: Բացի այդ, 15-38 տարվա աշխատանքային փորձը շատ դեպքերում հանգեցնում է մասնագիտական այրման, ինչը նույնպես վերահսկողության նվազեցման նախապայմաններից է: Ի տարբերություն միջին տարիքային խմբի, այս միտումները նկատելի չեն երիտասարդների խմբի մոտ:

Հետազոտության ամփոփումը ցույց տվեց, որ կիրառված թեստերը համատեղելի են և բացահայտեց դրանց համապատասխանությունը առաջադրված նպատակին: Բացի այդ, ստացված տվյալները օգտակար են ղեկավար-աշխատող փոխհարաբերությունների, կառավարման առանձնահատկությունների հասկացման և արդյունավետ աշխատանքի կազմակերպման համար:

Գրականություն

1. **Гейл Шихи** Возрастные кризисы, Ступени личностного роста, «Возрастные кризисы»: Ювента; Санкт-Петербург, 1999, с.167-169
2. **Крылов А. А.** «Психология: учебник (2-е изд.)»: Издательство Проспект; 2005, с. 326-329
3. **Чунихина Н. А.** Социально-психологические аспекты контроля в управлении персоналом: самоконтроль и внешний контроль менеджера-
<http://www.vestnik.vsu.ru/pdf/econ/2005/01/chunihina.pdf>

4. **Шеффер У.** Проблемы теории и практики управления.- 2002. N 5, С. 61-63
5. **Travis Bradberry** Habits of Highly Emotionally Intelligent People-
<http://www.talentsmart.com/articles/9-Habits-of-Highly-Emotionally-Intelligent-People-2147446657-p-1.html>

ИЗУЧЕНИЕ ОСОБЕННОСТЕЙ СОЦИАЛЬНОГО САМОКОНТРОЛЯ И КОПИНГ ПОВЕДЕНИЯ

Карапетыан Н. И. (ЕГУ, Ереван, Армения)

nare_karapetyan@ysu.am

Данная статья посвящается анализу особенностей проявления копинг поведения сотрудника в руководитель-работник взаимоотношениях. С этой целью было проведено пилотное исследование, в котором участвовали 23-65 летние опытные люди с трудовым стажем от 3-15.

Выявлена связь социального самоконтроля и копинг поведения сотрудников в зависимости от трудового стажа и возрастных особенностей.

Ключевые слова. *Психическое состояние, копинг, контроль, управление, менеджер, самоконтроль.*

THE STUDY OF PECULIARITIES OF SOCIAL SELF-CONTROL AND COPING BEHAVIOUR

Karapetyan N. I. (YSU, Yerevan, Armenia)

nare_karapetyan@ysu.am

This article is devoted to the analysis of the peculiarities of the manifestation of coping behavior of the employee in the manager-employee relationship. A pilot study was conducted to reveal the practical side of these issues, in which 23-65 year old experienced people were participated with a working experience of 3-15. It reveals the relationship of social self-control and coping behavior of employees in the dependency of work experience and age peculiarities.

Key words: *Mental state, coping, control, management, manager, self-control.*

**ԱՆՁԻ ՀՈԳԵՎԻՃԱԿԻ ԵՎ ԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԵՐԱԺՇՏԱԹԵՐԱՊԻԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ**

*Հալաջյան Վ. Մ. (ՀՀ Պետական կառավարման ակադեմիա,
Երևան, Հայաստան)*

williamhalajyan@gmail.com

Հոդվածում վերլուծության են ենթարկվել երաժշտական ներազդման և երաժշտական թերապիայի գործառնություններն անձի հոգեկան վիճակի և աշխատունակության կարգավորման գործընթացում: Աշխատանքում դիտարկվում են երաժշտական թերապիայի տարբեր հայեցակարգեր, տիպերը, ինչպես նաև՝ երաժշտության թերապևտիկ և կարգավորիչ գործառնությունների խնդրով կատարված որոշ հետազոտություններ:

Հիմնական եզրահանգումն այն է, որ երաժշտաթերապիան կարող է արդյունավետ միջոց լինել մարդու աշխատունակության և ակտիվացման գործում, ինչպես նաև՝ մասնագիտական հոգնածության հաղթահարման հարցում:

Հանգուցային բառեր՝ երաժշտական թերապիա, ներազդում, հույզեր, վիճակ, աշխատունակություն, գործունեության արդյունավետություն:

Ավելորդ է քննարկել այն փաստը, թե ինչ կարևորություն ունի երաժշտությունը մարդու կյանքում, ինչպես նաև այն հանգամանքը թե մարդն իր կյանքում երբ և ինչպես ստեղծեց երաժշտությունը՝ որպես իր կենսագործունեության և կենսակայունության անհրաժեշտ տարր: Երաժշտության բուժիչ և կարգավորիչ գործառնությունները հայտնի է, թերևս, հնագույն ժամանակներից, ինչի մասին գրեթե գիտական փաստարկումներ կան հին քաղաքակրթության երկրներում՝ Հին Եգիպտոս, Հին Չինաստան, Հին Հնդկաստան, ինչու չէ, նաև Հին Հայաստան: Երաժշտության կիրառականության մասին խոսելիս կարևորում ենք վերը նշված երկրները հիշատակելը, քանզի հոգեբանական թերապևտիկ տեխնիկաներում երաժշտության, այսպես ասած, օգտագործումը հիմնվում է Արևելքի մշակույթի վրա [2]: Այսօր մարդու կենսունակության պահպանման հարցը լուրջ է, այժմեական, քանի որ նրա աշխատունակությունից է կախված հետագա գործունեության արդյունավետությունը: Հետևվանքը լինում է այն, որ գործունեության ընթացքում նկատելի են դառնում մարդկային գործոնով պայմանավորված բազմաթիվ սխալներ: Այդպիսի խնդիրները հատկապես սրվում են լարված կամ արտակարգ իրավիճակներում մասնագիտական գործունեության իրականացման ժամանակ և նույնիսկ այն ոլորտներում, որտեղ առկա են միապաղաղություն կամ սթրեսածին գործոնները [1]:

Անձի վրա երաժշտության ներգործության հիմնական ուղին ձայնն է, որն արդեն իսկ բնության մեջ գոյություն ունի, և ձայնային ալիքներն անմիջական ազդեցություն են ունենում կենդանի օրգանիզմի վրա [3, էջ 24]: Բազմաթիվ փորձարկումներ փաստում են, որ երաժշտությունն ունի իր յուրահատուկ ազդեցությունը գլխուղեղի, վերջինիս ակտիվության ռիթմերի և լոկալիզացված կենտրոնների վրա: Հատուկ ուշադրություն է դարձվում ակտիվության մեխանիզմների ուսումնասիրությանը, այդ դեպքում հստակ արդիականություն են ձեռք բերում կատարելության հասնելու միջոցները և նոր արդյունավետ մոտեցումները մարդու հոգեկանի բարենպաստ կառավարման և օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակի կարգավորման համար [4]:

Բացի ֆիզիոլոգիական ազդեցությունից երաժշտությունը օրգանիզմում առաջ է բերում նաև հոգեբանական բնույթի փոփոխություններ: Միայն այն, որ երաժշտության միջոցով ակտիվացնելով ուղեղի աշխատանքը՝ ակտիվանում են նաև հոգեկան ճանաչողական գործընթացները, հատկապես ստեղծագործական մտածողությունը, երևակայությունը, արդեն իսկ երևում է, որ մարդու ներաշխարհի և նրա հուզական ոլորտի վրա երաժշտության ազդեցությունը միանշանակ է: Ցանկացած երաժշտություն մարդու մոտ առաջացնում է որոշակի հուզական վիճակ՝ պասիվացնում կամ ակտիվացնում է, վախեցնում կամ թուլացնում է, հոգնեցնում կամ հանգստացնում է: Այն կարող է ազդել մարդու տրամադրության վրա՝ թե դրական, թե բացասական կերպով:

Օգտվելով երաժշտության նմանօրինակ գործառույթներից, կիրառական հոգեբանության ոլորտում բազմաթիվ հոգեթերապևտիկ և գործական աշխատանքների հիմքում առաջատար է դարձել երաժշտաթերապիայի կիրառությունը:

Երաժշտաթերապիա եզրույթն ունի հունալատինական ծագում և թարգմանաբար նշանակում է «բուժում երաժշտության միջոցով» [2, էջ 8]: Ժամանակակից հոգեբանության մեջ երաժշտությունը կիրառվում է բազմազան միջոցներով և ամենատարբեր դեպքերում: Մասնագիտական գրականության մեջ հանդիպում ենք հոգեկարգավորիչ տեխնիկաների, որոնք ուղեկցվում են դասական, գործիքային և ազգային երաժշտություններով: Երաժշտաթերապիայի ամենատարածված տեխնիկաները ինքնակարգավորման վարժանքներն են, որոնք հիմնվում են արևելյան մարզումների (մեդիտացիա, պրանայամա, յոգայի և այլն) վրա [6, էջ 145-149]: Այս պարագայում երաժշտությունը սովորաբար լինում է արևելյան մշակույթի տարրերով, որոշ դեպքերում անգամ կիրառվում են ձայնային կամ վերբալ մանտրան (հնդկական կրոնական աղոթքների երգեցիկ ուղեկցություն): Երեխաների հետ աշխատանքներում կարևորվում են նաև հենց երեխաների կողմից երգեցողությունը, որոնք հիմնականում ուղեկցվում են խաղերով և ուսոցողական վարժանքներով: Ամեն երաժշտական գործունեություն կառավարվում է գլխավորապես լսողական

ընկալման միջոցով, ըստ այդմ երաժշտաթերապիայի մեջ մեծ նշանակություն ունի նաև շփումը երաժշտական գործիքների հետ:

Լուչինինյան Օ. Ա. նշում է այն հետազոտությունը, որը նվիրված էր 14-16 տարեկան երիտասարդի ֆիզիոլոգիական ակտիվության վրա երաժշտության ազդեցության առանձնահատկություններին, որտեղ կարևորել են երաժշտության տեսակի ընտրությունը: Արդյունքների վիճակագրական վերլուծությունները ցույց են տվել, որ դասական և հոգևոր երաժշտություն ընտրել են հիմնականում երաժշտական կրթություն ունեցող երիտասարդ տղաները, ովքեր գերադասել են նաև ոռք: Երիտասարդ աղջիկների մոտ վերլուծությունները ցույց են տվել, որ ոռք ոճի երաժշտության նախընտրողները գրեթե չունեն երաժշտական կրթություն, իսկ դասական և հոգևոր երաժշտություն նախընտրողներն ունեն երկար տարիների երաժշտական կրթություն [5, էջ 54-61]: Այս հետազոտությունը պատասխանում է նաև այն հարցին, թե ինչու են տարբեր մարդիկ նույն իրադրությունում նախընտրում լսել տարբեր ոճի երաժշտություններ: Հետազոտությունները ցույց են տվել նաև, որ եթե մարդն իր հուզական վիճակները կարգավորելու կամ հանգստության զգացողություն ապրելու համար նախընտրում է այս կամ այն տիպի էստրադային երաժշտություն, արդյունավետությունն այդքան էլ բարձր չէ: Դասական, հոգևոր կամ գործիքային երաժշտությունների դեպքում՝ արդյունքն ակնհայտ է, եթե անգամ մարդը դրանց նկատմամբ չունի նախընտրություն: Նկատելի է, որ այստեղ գործ ունենք հոգեկանի կամ գիտակցության վրա մաքուր երաժշտական ձայների ներգործության հետ, որն արդեն ենթադրում է ներշնչման կամ ինքնաներշնչման զուգակցվող տեխնիկաների կիրառություն [5, էջ 58]:

Մարդուն ներշնչած գաղափարները Բեխտերևի կողմից անվանվել են հոգեկան միկրոքներ, որոնք կարող են հանգեցնել հոգեկանում փոփոխությունների: Ներշնչանքի բովանդակությունը, հակառակ համոզմունքի, չի պահանջում ոչ մի տրամաբանություն և քննադատություն, այդ իսկ պատճառով առավելապես հիմնվում է մարդու հուզական զգացողությունների վրա [5]: Ըստ հեղինակի, հիպնոսուզեստիվ տեխնիկաները կարելի է կիրառել խմբային և անհատական թերապիաներում, մինչև անգամ գրականության մեջ նշվում է դրանց օգտակարությունը տարբեր հիվանդությունների բուժման համար [4, էջ 87]:

Երաժշտության ներազդող գործառույթի վերլուծությունը ենթադրում է Մ. Էրիկսոնի եռամոդել հիպնոթերապիայի հիմնադրույթների հաշվառումը, ըստ որի ներշնչումն ունի երեք փուլ՝ տրանսի ուղղորդում, տրանսի օգտագործում, վերակողմնորոշում կամ վերակառուցում: Ընդհանուր առմամբ բոլոր բնույթի ռելաքսացիոն տեխնիկաները կամ վարժանքները սկսվում են այցելուի և թերապևտի միջև վստահության ձևավորմամբ: Հաջորդ փուլը այցելուի շնչառությանը հետևելն է, որը կարգավորվում է դիթմիկ շնչառական

վարժություններով: Այնուհետև տեղի է ունենում միկրոշարժումների միավորում կամ ռելաքսացիոն դիրքի ամրապնդում [6]:

Երաժշտությունը ոչ միայն բուժման միջոց է, այլև անձի հետ համագործակցության մեջ մտնելու ուղի:

1. Երաժշտությունը կարող է չանդրադառնալ կոգնիտիվ գործընթացներին, բայց դրա միջոցով կարելի է մուտք գործել անձի զգացմունքների ու հույզերի այն գոտիները, որտեղ կան խնդիրներ կամ խանգարումներ;
2. Անձի մոտ ձևավորվում է հարաբերականորեն անկաշկանդ և մտերմիկ միջավայրի զգացողություն, որի վրա հիմնվելով կարող է անցկացվել թերապիան;
3. Բացահայտվում է այն կոնկրետ ճանապարհը, որտեղ անձը կարող է գտնել իրեն համապատասխան ինքնադրսևորման միջոցները [5, էջ 101]:

Առանձնացնում են երաժշտական հոգեթերապիայի 3 տեսակ՝ պասիվ, ակտիվ, ինտեգրատիվ: Պասիվ թերապիայի ընթացքում մասնակիցներին առաջարկվում է լսել իրենց հոգեվիճակին համահունչ երաժշտություն, ապա կիսվել այն ապրումներով, հիշողություններով և ասոցիացիաներով, որոնք առաջացան տվյալ երաժշտությունը լսելու ժամանակ: Ակտիվ թերապիայի ընթացքում մասնակիցները ոչ միայն լսում են երաժշտությունը, այլև՝ երգում, նվագում և պարում: Ինտեգրատիվ թերապիայի ժամանակ երաժշտություն լսելու հետ մեկտեղ մասնակիցները կարող են նկարել, բանաստեղծություններ գրել, ասմունքել, երաժշտական խաղեր խաղալ և այլն: Թերապիան իր արջև ունի դրված կոնկրետ խնդիրներ, ինչպիսիք են սեփական մարմնի գիտակցում, տարածության մեջ կողմնորոշում, սեփական գործողությունների կառավարում, հավասարակշռության պահպանում, շփման զարգացում, սթրեսային վիճակի թուլացում, մտավոր և սոցիալական ունակությունների զարգացում [3]:

Հատկապես հետաքրքիր է այն առանձնահատկությունների հետազոտությունը, որոնք առաջանում են մարդու աշխատունակության և հոգեհուզական վիճակի վրա երաժշտության ազդեցությունից: Հեղինակը նշում է, որ բազմաթիվ ոլորտներում աշխատանքի գործընթացում առկա են բազմաթիվ խոչընդոտներ, որոնք կարող են էականորեն ազդել մասնագիտական գործառույթների իրականացման արդյունավետության վրա և առաջացնել հոգնածություն: Նշված խնդիրը հաղթահարելու համար առաջարկվում է կիրառել երաժշտական ուղեկցում, որը ստեղծում է ֆիզիոլոգիական և հոգեհուզական պայմաններ պոտենցիալ հնարավորությունների օպտիմալ ռեալիզացիայի համար և սթրեսներից բացասական ազդեցությունից պաշտպանելու համար: Էքսպերիմենտալ աշխատանքից հետո գալիս ենք այն եզրահանգման, որ վերականգնողական լողի ժամանակ ուղեկցվող երաժշտությունը մեծ դեր ունի ոչ մայն մարդու հոգեհուզական վիճակի վրա, այլ նաև կամային ռեգուլյացիայի վրա՝ բարձրացնելով աշխատունակությունը [5]:

Այսպիսով կարող ենք հավաստել, որ անձի կենսագործունեության՝ հատկապես աշխատանքային ակտիվության և աշխատունակության պահպանման համար կիրառական մեծ դեր ունի երաժշտաթերապիան: Այս մեթոդը կարող է էականորեն բարձրացնել ոչ միայն աշխատանքային մոտիվացվածցիան և ոգևորվածությունը, այլ նաև կարգավորել անձի հոգեհուզական ոլորտը, կայուն պահել տրամադրությունը ու ներաշխարհի համաշափությունը: Զուգահեռաբար երաժշտաթերապիան օգտակար և արդյունավետ ներգործություն ունի անձի ֆիզիոլոգիական կողմի, ուղեղի աշխատանքի վրա, ինչը իր հերթին դինամիկ է դարձնում հոգեկանի կոգնիտիվ գործընթացները: Երաժշտաթերապիան կարելի է կիրառել ցանկացած տիպի մասնագիտական գործունեության դեպքում, առավելապես եթե անձի աշխատանքը կամ մասնագիտությունն ուղեկցվում է մտավոր և ֆիզիկական առանձնակի ցանրաբեռնվածությամբ:

Գրականություն

1. **Սկրտումյան Մ. Պ.** Արտակարգ իրավիճակների հոգեբանություն: Փրկարարների հոգեբանական պատրաստության տեխնոլոգիաներ. - Եր.: Զանգակ, 2013. -248 էջ
2. **Августевич С. И., Румянцева Т. А., Журавлев С. Е.** Послесменная релаксация как способ снижения производственного утомления // Способы изучения и предупреждения производственного утомления. Пенза: Б. И, 1984. с. 86 – 88.
3. Введение в музыкотерапию / **Г. Г. Декер-Фойгт.**, СПб.: Питер, 2003. - 208 с.
4. **Леонова А. Б., Кузнецова А. С.** Психологические технологии управления состоянием человека //М. : Смысл, 2007. – 311 с.
5. **Лучинина О. А.** Личностно-ориентированная музыкальная психокоррекция. - Астрахань, Проект "LENOLIUS" , 2013. - 178 с.
6. **Luthe, W.** (Ed.). Autogenic therapy. Vol. 1 – 6. New York: Grune & Stratton; Stratton, 1969 –1974. - 485 p.

ПРОБЛЕМА ПРИМЕНЕНИЯ МУЗЫКОТЕРАПИИ ДЛЯ РЕГУЛЯЦИИ ПСИХИЧЕСКОГО СОСТОЯНИЯ И РАБОТОСПОСОБНОСТИ ЛИЧНОСТИ

Галаджян В. М. (Академия государственного управления РА, Ереван, Армения)

В статье анализируется функция музыкального воздействия и музыкальной терапии в процессе регуляции психическим состоянием и работоспособностью личности. В работе рассматриваются различные аспекты музыкальной терапии, типы, а также некоторые исследования по проблеме

терапевтических и регуляторных функций музыки. Основной вывод заключается состоит в том, что музыкальная терапия может быть эффективным способом повышения и активизации работоспособности человека, а также преодоления профессиональной усталости.

Ключевые слова: *музыкотерапия, влияние, эмоции, состояние, личность, работоспособность, эффективность деятельности.*

THE PROBLEM OF USE OF MUSICAL THERAPY FOR REGULATION BY MENTAL STATE AND OPERABILITY OF THE PERSON

Halajyan W. M. (Public Administration Academy of the RA, Yerevan, Armenia)

The article analyzes the function of musical influence and musical therapy in the process of regulation by the mental state and capacity for work of the person. In this study discusses different aspects of musical therapy, types, as well as some studies on the therapeutic and regulatory functions of music. The idea is that music therapy can be an effective way to enhance and activate the working capacity of a person and reduce professional exhaustion.

Keywords: *musical therapy, influence, emotions, state, personality, efficiency, efficiency of activity.*

**ԱՆՁԻ ԻՆՔՆԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ
ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԴԵՐԸ ԱՌՈՂՋ ԿԵՆՍԱԿԵՐՊ ՎԱՐԵԼՈՒ
ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Հակոբջանյան Ա. Ռ. (ԵՊՀ, Երևան, Հայաստան)

a_hakobjanyan@ysu.am

Հոդվածում ներկայացվում է առողջության պահպանմանն ուղղված վարքաձևերի իրականացման մտադրությունների ուսումնասիրությունը: Ուսումնասիրությամբ բացահայտվում է, թե որ գործոններն են կանխորոշիչ համարվում վարքի մտադրության համար: Առողջ ապրելակերպի մասին մտայնություններն այսօր արդիական ու նորաձև են: Գրեթե բոլոր լրատվամիջոցներում կարելի է հանդիպել տարբեր մեկնաբանությունների, թե ինչ է առողջ ապրելակերպը, ինչպես նիհարել, ինչպես թողնել ծխելը և այլն: Այս ուսումնասիրությամբ ներկայացվում են առողջության հոգեբանության բնագավառի գիտական հետազոտություններ առ այն, թե հատկապես որ գործոններն են կանխորոշում առողջության պահպանմանն ուղղված վարքաձևերի իրականացումը: Մեր կողմից իրականացված հետազոտությամբ դուրս են բերվել մասնավորապես առողջ սնվելու, մարզվելու և ծխելը թողնելու մտադրությունների հիմքում ընկած սոցիալ-կոգնիտիվ և դրդապատճառային գործոնները: Ստացված արդյունքների համաձայն՝ առողջ կենսակերպ վարելու մտադրությունների համար առավել էական դեր ունեն անձի ինքնարդյունավետությունը և ներքին՝ ինքնավար դրդապատճառները:

***Հանգուցային բառեր.** առողջության պահպանում, վարքի ինքնակարգավորում, ինքնարդյունավետություն, ինքնավար դրդապատճառներ, առողջ կենսակերպի մտադրություն:*

Առողջությունը՝ որպես գերակա արժեք, անխուսափելիորեն արտացոլված է առօրյա մտահոգություններում: Հատկապես հոգսերի ու անհանգստությունների նարատիվում է դրսևորվում, քանի որ բավականին հաճախ կարելի է նկատել, որ առողջության մասին հոգալը սկսվում է միայն այն ժամանակ, երբ արդեն առկա են որոշակի առողջական խնդիրներ: Անշուշտ, բուժում իրականացնելը և անառողջն առողջացնելը ևս առողջության պահպանմանն ուղղված միջոցառումներ են, սակայն առողջ վարքի կամ առողջ ապրելակերպի կազմակերպումը և կարգավորումը նախևառաջ ենթադրում է առողջական վիճակի բարելավում՝ հիվանդությունների կանխարգելման սկզբունքով: Այս հոդվածում առողջության պահպանումը հասկացվում և կիրառվում է վերջին իմաստով: Նման մոտեցումից ելնելով՝ առողջական վիճակի ինքնակարգավորումը ենթադրում է առողջական սովորույթների ձևավորում, դրանց

կանոնավոր իրականացում, որոնք էլ իրենց հերթին հիմք են հանդիսանում ընդհանուր առմամբ առողջ ապրելակերպի ձևավորման համար:

Սույն հոդվածի նպատակն է իրականացված հետազոտության արդյունքներով ներկայացնել առողջության պահպանման, առողջ կենսակերպ ձևավորելու ինքնակարգավորման առանձնահատկությունները, մասնավորապես՝ դուրս բերել անձի ինքնարդյունավետության և ներքին դրդապատճառների դերը առողջ սննդօգտագործման, մարզվելու և ծխելը թողնելու վարքաձևերն իրականացնելիս: Առհասարակ անձի ինքնակարգավորումը ենթադրում է մարդու՝ իր վարքը վերահսկելու և ըստ անհրաժեշտության վերափոխելու ունակությունը: Հասկանալու համար, թե առողջ ապրելակերպի ձևավորման գործընթացում վարքի ինչպիսի ինքնակարգավորում կարող է լինել, նախ անդրադառնանք ինքնակարգավորման բնորոշմանն ընդհանուր սահմանմամբ:

Ա. Բանդուրայի սոցիալ-կոգնիտիվ տեսության շրջանակներում առաջադրված փոխադարձ դետերմինիզմի սկզբունքի համաձայն՝ մարդու վարքը ձևավորվում է երեք փոփոխական մեծությունների հաշվին՝ շրջակա միջավայրի, բուն վարքի և անձնային առանձնահատկությունների: Ընդ որում՝ վարքը մասնակիորեն շրջակա միջավայրի գործառույթ է, իսկ միջավայրը մասնակիորեն կախված է վարքից: Երրորդ՝ անձնային գործոնի ներքո Բանդուրայի առաջին հերթին առանձնացնում է ներքին բուֆազերը՝ կոգնիցիաները: Հենց դրանք են որոշում, թե շրջակա միջավայրի ինչպիսի երևույթների նա կհանդիպի, ինչպես կգնահատի այդ երևույթները և ինչպես կկազմակերպի իր հետագա առնչությունն այդ երևույթների հետ [2]: Ինքնակարգավորման գործընթացի կարևորությունն առավել հասկանալի է դառնում, երբ մարդը ձախողում է որևէ վարքաձև իրականացնելիս: Հատկապես, երբ խոսքն այնպիսի վարքաձևերին է վերաբերում, որոնց իրականացման անհրաժեշտությունն անքննելի է: Դա առավելապես ակնհայտ է առողջության պահպանմանն ուղղված վարքաձևերի դեպքում: Բարեհաջող ինքնակարգավորումը մտքերի, զգացմունքների և գործողությունների կառավարման գործընթացն է նպատակներին հասնելու ճանապարհին խոչընդոտի հանդիպելիս [8]: Գաղտնիք չէ, որ առողջ լինելու համար անհրաժեշտ է հետևել այնպիսի վարքաձևերի, ինչպիսիք են մարզվելը, սննդակարգին հետևելը, ծխելուց և այլ վնասակար սովորույթներից հրաժարվելը, արյան ճնշման կարգավորումը, սթրեսածին գործոնները հաղթահարելու համար արդյունավետ միջոցների մշակելն ու կիրառելը և այլն: Երբ իբրև նպատակ է սահմանվում առողջանալը կամ առողջության բարելավումը, ապա ավանդական բժշկական միջամտությունները դեռևս միակ միջոցը չեն այդ նպատակին հասնելու համար: Այսինքն՝ առողջության պահպանման համար էական սովորույթների կառավարումը՝ այն է ինքնակարգավորումը, արդեն լավագույն բուժումն է: Առողջությանն ուղղված ժամանակակից մեթոդներն առավելապես կենտրոնանում են ավանդական բժշկական միջամտությունների

վրա, որոնք սովորաբար կապված են մեծ ծախսեր պահանջող բժշկական խնամքի հետ: Սա թերևս նույնպես կարգավորման գործընթաց է, սակայն այս պարագայում առողջությունը կարգավորվում է արտաքին ռեսուրսներով: Սոցիալ-կոգնիտիվ մոտեցումն առաջարկում է կենտրոնանալ առողջական սովորույթների ինքնակարգավորման գործընթացի վրա, ինչը կօգնի մարդկանց առողջ մնալ ամբողջ կյանքի ընթացքում: Առողջական սովորույթները չեն փոխվում միայն կամային ջանքերի շնորհիվ, այդ փոփոխությունները սովորաբար արձանագրվում են դրդապատճառային և ինքնակարգավորման հմտությունների վարժանքներով: Նպատակներին ուղղված քայլերն ամրապնդում են վարքային փոփոխությունները՝ ձևավորելով կրկնվող գործողություններ, որոնք էլ իրենց հերթին դառնում են առողջության պահպանմանն ուղղված վարքային սովորություններ կամ, այլ կերպ ասած, առողջ ապրելակերպ՝ ներքին կարգավորմամբ: Ընդ որում այս սովորույթների ձևավորման համար որպես կանխորոշիչ գործոն են հանդիսանում ինքնարդյունավետության համոզմունքները: Ինքնարդյունավետությունը որոշակի խնդիրներ կամ իրավիճակը հաղթահարելու սեփական ընդունակության գնահատումն է՝ համոզմունքն առ այն, որ անձը կարող է իրականացնել այս կամ այն վարքը: Այն ենթադրում է անձի ընդունակությունը՝ հաղթահարելու բարդ իրավիճակները և ազդելու գործունեության արդյունավետության վրա [3]: Բանդուրան նշում է, որ ինքնարդյունավետության համոզմունքները առողջության վրա ազդում են երկու ճանապարհով՝ ազդելով կենսաբանական համակարգերի (իմունային, նյարդային) ակտիվացման վրա և ազդելով մարդու՝ վարքային փոփոխություններ իրականացնելու որոշումների վրա, նրանց՝ փոխվելու դրդապատճառների վրա: Ցածր ինքնարդյունավետությամբ մարդը քիչ արդյունքներ է ակնկալում իր վարքի փոփոխությունից, իսկ բարձր ինքնարդյունավետություն ունեցող մարդը ոչ միայն ակնկալում է, որ կհաջողի, այլև ավելի հավանական է, որ ներկայում էլ կունենա ավելի առողջ վարք [4]: Առողջ վարքի ձևավորմանն ուղղված մի շարք հետազոտություններով բացահայտվում է, որ նոր վարքաձևեր ձևավորելիս, երբ մարդիկ հստակեցնում են վարքի մտադրությունը, մշակում գործողությունների մանրամասն պլանը և կանոնավոր իրականացնում վարքը, նրանք սկսում են նաև բյուրեղացնել իրենց ունակությունների հանդեպ ունեցած համոզմունքներն ու նախաձեռնել փոփոխությունը: Օրինակ, եթե ֆիզիկական ակտիվությամբ զբաղվելու համար ամենից հաճախ անհրաժեշտ են համապատասխան դրդապատճառներ, ապա դրանց խթանումն էլ իր հերթին կախված է մի քանի գործոններից, որոնց շարքում են լավատեսական համոզմունքներն այն մասին, որ անձը կարող է զբաղվել ֆիզիկական վարժություններով՝ ի հեճուկս տարբեր պատճառաբանությունների: Հետազոտությամբ բացահայտվել է նաև, որ մարդու կողմից ընկալվող ինքնարդյունավետությունը մարզվելու մտադրության և մարզումները տևականորեն իրականացնելու վրա ազդող հիմնական գործոնն

է: Որքան մեծ է ֆիզիկական ակտիվությամբ զբաղվելու վստահությունը և բավարարվածությունը ներկա ֆիզիկական ակտիվության մակարդակով, այնքան ավելի հաճախ ու կանոնավոր են մարզումները Ինքնարդյունավետության որոշիչ դերը բացահայտվել է նաև մի շարք այլ հետազոտություններում, որոնք ուղղված էին ֆիզիկական կանոնավոր ակտիվությանն ու դրա պահպանմանը [3, 6]:

Առողջությանն առնչվող վարքի դրդապատճառներին անդրադառնալիս առավել հաճախ ընդգծվում է վարքային փոփոխություններ իրականացնելու համար դրանց նշանակալի դերը: Առողջության պահպանմանն ուղղված վարքաձևերի հիմքում ընկած դրդապատճառների ուսումնասիրման համար առանձնացվում են մի շարք մոտեցումներ: Դրդապատճառային համակարգը և անձը լայնորեն ուսումնասիրվում է ինքնադետերմինացիայի մոտեցման շրջանակներում [5]: Տեսությունը դիտարկում է ներքին և արտաքին դրդապատճառների դերն անձի սոցիալ-կոգնիտիվ զարգացման մեջ: Մոտեցումը ենթադրում է, որ մարդիկ ակտիվ օրգանիզմներ են, որոնք ունեն աճի, շրջակա մարտահրավերները յուրացնելու և Ես-ի մեջ ինտեգրելու միտումներ: Սակայն, այնուամենայնիվ, այս գործընթացներն ինքնաբերաբար չեն տեղի ունենում, այլ պահանջում են սոցիալական միջամտություն և աջակցություն: Այսինքն՝ սոցիալական միջավայրը կարող է կամ նպաստել կամ խոչընդոտել հոգեբանական աճի կամ ակտիվ ներգրավվածության միտումներին: Այս երկկողմանի գործընթացն օրգանիզմի և սոցիալական միջավայրի միջև հիմք է ինքնադետերմինացիայի տեսությամբ վարքի, փորձառության և զարգացման կանխատեսումների համար [5]:

Այսպես, ներքին և արտաքին դրդապատճառները պայմանավորում են վարքի ինքնակարգավորման հիմնական մեխանիզմները: Առողջապահության ոլորտի հետազոտողները վարքի փոփոխության գործընթացը նկարագրում են որպես փոփոխությունը նախաձեռնելու և պահպանելու երկկողմանի խնդիր: Սովորաբար վարքի փոփոխության մոտեցումներում ընդգծվում է նախաձեռնության մասը՝ դրդված արտաքին ճնշմամբ և վերահսկողությամբ, դրական խրախուսանքով, սակայն այդ փոփոխության պահպանման մասը հաճախ բացակայում է այդ մոտեցումներում [9]: Ինքնադետերմինացիայի տեսությունը կենտրոնանում է ժամանակի ընթացքում առողջությանն առնչվող վարքի փոփոխության տևական պահպանման խնդրի վրա: Տեսության համաձայն՝ ինքնավարության և կոմպետենցիայի զգացման զարգացումը էական է ներքնայնացման և ներգրավվածության գործընթացների համար, որոնց միջոցով անձը կարգավորում և կայունացնում է առողջությանն ու բարեկեցությանն առնչվող վարքաձևերը: Առողջության պահպանմանն ուղղված վարքաձևերից շատերը, ինչպիսին են ֆիզիկական ակտիվությունը, դեղամիջոցների ընդունումը, ծխելը թողնելը, սովորաբար ներքուստ մոտիվացված կամ հաճույքով արվող գործողություններ չեն: Այդ պատճառով նշված վարքաձևերի

արդյունավետ իրականացման և պահպանման համար անհրաժեշտ է, որպեսզի մարդիկ արժևորեն դրանք և ընդունեն դրանց անձնական կարևորությունը: Ինչպես արդեն վերը նշվել է, առավել հաճախ նման վարքային փոփոխություններն իրականանում են արտաքին կարգավորմամբ, որն ինքնադետերմինացիայի տեսության մեջ անվանվում է վերահսկվող մոտիվացիա: Այս պարագայում մարդու վարքային փոփոխությունների պատրաստակամությունը պայմանավորված է արտաքին խրախուսանքով, պատժից խուսափումով կամ սոցիալական ճնշումներին համապատասխանելու ձգտումով [7]: Վերահսկվող մոտիվացիայի այլ ձև է ինտրոյեկցիան, երբ մարդը ներգրավվում է վարքում՝ խրախուսանք ստանալու կամ պատժից ու մեղքի զգացումից խուսափելու համար: Ըստ ինքնադետերմինացիայի տեսության՝ վերահսկվող մոտիվացիայի երկու ձևն էլ՝ էքստերնալ և ինտրոյեկցված, չեն նպաստում վարքի երկարատև պահպանմանը: Ի հակադրություն՝ փոփոխության իրականացումը և պահպանումը կարող է ինքնավար դրդապատճառների ֆունկցիան լինել: Ինքնավար մոտիվացիայի ձևերից մեկը նույնացված կարգավորումն է, երբ մարդն անձամբ նույնանում կամ հաստատում է վարքի կարևորությունը: Առավել ինքնավար է ներառված կարգավորումը, որի պարագայում մարդը ոչ միայն արժևորում է վարքի իրականացումը, այլև դարձնում է դա իր ապրելակերպի և կենտրոնական արժեքների մի մասը [9]:

Մեր կողմից իրականացված հետազոտության վերլուծությամբ պարզ դարձավ, որ առողջ սնվելու, մարզվելու և ծխելը թողնելու վարքաձևերի իրականացման համար էական նշանակություն ունեն անձի դիրքորոշումներն առ այն, որ նա կարող է վերահսկել իր վարքը (ինքնարդյունավետություն) և ներքին՝ ինքնավար դրդապատճառները՝ իբրև այս կամ այն վարքի իրականացման մտադրության համար կանխորոշիչ գործոններ: Դիտարկենք մեր կողմից իրականացված հետազոտության արդյունքները:

Հետազոտության նպատակն էր ուսումնասիրել առողջության պահպանմանն ուղղված վարքաձևերի կարգավորման առանձնահատկությունները, մասնավորապես՝ անձի ինքնարդյունավետության և դրդապատճառների դրսևորման և փոխազդեցության դերը առողջության պահպանմանն ուղղված վարքաձևերում (առողջ սնվելու, մարզվելու, ծխելը թողնելու): Հետազոտության հիմնական նպատակից ելնելով՝ ձևակերպվել են հետևյալ *հետազոտական խնդիրները*.

1. Ուսումնասիրել համոզմունքների, դիրքորոշումների (տվյալ ուսումնասիրության դեպքում՝ մասնավորապես արդյունավետության համոզմունքից ձևավորվող վարքի վերահսկման դիրքորոշումը) և դրդապատճառային համակարգի դրսևորումները և դերը առողջության պահպանմանն ուղղված վարքում:
2. Ուսումնասիրել ներքին և արտաքին դրդապատճառների առանձնահատկությունները առողջ սնվելու, մարզվելու և ծխելը թողնելու վարքաձևերում

3. Դուրս բերել առողջության պահպանման ինքնարդյունավետության և դրդապատճառների փոխկապվածության առանձնահատկությունները:

Հետազոտական ընտրանքը կազմել են 18-55 տարեկան 202 մասնակիցներ (100 տղամարդ, 102 կին): Ընտրանքի 35%-ը կանոնավոր ծխողներ էին:

Հետազոտությունն իրականացվել է սոցիալ-կոգնիտիվ և ինքնադետերմինացիայի մոտեցումների մեթոդաբանական հիմքով: Կիրառվել է հարցարանային մեթոդ, որով ուսումնասիրվել են անձնային-կոգնիտիվ հիմնական փոփոխականները՝ հիմնվելով ժամանակակից սոցիալ-կոգնիտիվ մոտեցումներից մեկի՝ պլանավորված վարքի տեսության վրա [1]: Տեսությամբ առաջարկվող հիմնական սոցիալ-կոգնիտիվ փոփոխականներն են՝ վարքի իրականացման վերաբերյալ դիրքորոշումները, սուբյեկտիվ նորմը՝ այսինքն սոցիալական ճնշման ընկալումը՝ գործելու ըստ նշանակալի անձանց կարծիքների, և ընկալվող վարքային վերահսկողությունը: Վերջինը վերաբերում է բոլոր այն արտաքին ու ներքին գործոններին, որոնք վերահսկելով՝ անձն ունենում է այս կամ այն վարքն իրականացնելու վստահությունը կամ ինքնարդյունավետությունը: Ինչպես նաև կիրառվել է դրդապատճառային ինքնակարգավորման հարցարանը, որով բացահայտվել են ներքին՝ ինքնավար և արտաքին՝ վերահսկվող դրդապատճառների առանձնահատկությունները:

Մեր կողմից առաջ քաշված նախնական ենթադրության համաձայն՝ վարքի իրականացման մտադրության համար կանխորոշիչ գործոններ են համարվում առավելապես ինքնարդյունավետությունը և ներքին դրդապատճառները: Ենթադրվում է, որ վարքն ավելի մեծ հավանականությամբ կիրականացվի հատկապես այս բաղադրիչների փոխկապվածությամբ:

Հետազոտության արդյունքները ենթարկվել են կորելյացիոն և ռեգրեսիոն վերլուծության: Այսպես, ներկայացնենք ստացված տվյալները՝ ըստ առանձին վարքաձևերի դիտարկման: Առողջ սնվելու ինքնարդյունավետությունը դրական կորելյացիոն կապի մեջ է նույն վարքաձևն իրականացնելու ինքնավար դրդապատճառների հետ ($r=0.410$, $p\leq 0.01$), ինչպես նաև վերահսկվող դրդապատճառների հետ՝ սխալի ավելի մեծ հավանականությամբ ($r=0.170$, $p\leq 0.05$) և ամոտիվացիայի հետ՝ հակադարձ կորելյացիոն կապով ($r=-0.181$, $p\leq 0.05$): Այսպիսի արդյունքը թերևս բացատրելի է այն հանգամանքով, որ ներքին խթանումը մղում է որոշակի գործողությունների՝ հաճախ այդ գործողությունների ընթացքից ու բովանդակությունից հաճույք ստանալով, սակայն հնարավոր է, որ առողջության պահպանմանն ուղղված վարքաձևերի պարագայում, երբ նպատակադրումն առողջության բարելավումն ու պահպանումն է, միայն ներքին խթանները բավարար չեն և մարդուն անհրաժեշտ է նաև սոցիալական աջակցություն, ինչպես նաև իր կողմից իրականացվող վարքի վերջնարդյունքների կարևորության հստակեցում: Ամոտիվացիայի և ինքնարդյունավետության հակադարձ կապը կարելի է օրինաչափ համարել, քանի որ վարքն իրականացնել կարողանալու վստահությունն ուղեկցվում է

որոշակի գործողություններ իրականացնելու խթաններով: Ընդ որում այդպիսի խթանները կարող են լինել ինչպես ներքին՝ ինքնավար, այնպես էլ արտաքին՝ վերահսկվող: Հետևաբար, սպասելի է, որ ամոտիվացիայի՝ դրդապատճառների բացակայության դեպքում ցածր է վարքն իրականացնելու վստահությունը: Ինքնարդյունավետության և դրդապատճառների միջև փոխկապվածության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առողջ սնվելու սովորույթը ձևավորելու և նաև կարգավորելու՝ այն պարբերական կրկնվող գործողություն դարձնելու համար անհրաժեշտ են առավելապես ներքին՝ ինքնավար դրդապատճառների ակտիվացում և վարքն իրականացնել կարողանալու վստահության բարձրացում:

Առողջ սնվելու մտադրության կանխորոշիչ գործոնների բացահայտմանն ուղղված ռեգրեսիոն մոդելի համաձայն առողջ սննդակարգ ունենալու նախկին փորձը 31% հավանականությամբ կանխորոշում է վարքը կրկնելու մտադրությունը ($F_{1,173}=.313, p<0.001$): Հիերարխիկ ռեգրեսիոն մոդելում ինքնավար դրդապատճառների ավելացումը վարքի մտադրության հավանականության 52%-ն է ապահովում ($F_{1,172}=.213, p<0.001$): Իսկ սուբյեկտիվ նորմը կանխորոշում է վարքի մտադրության հավանականությունը ևս 2%-ով ($F_{1,171}=.019, p=0.009$): Ինչպես կարելի է նկատել, առողջ սնունդ օգտագործելու մտադրությունը զգալիորեն կարող է կանխորոշվել վարքաձևի նախկին փորձով և ինքնավար դրդապատճառների առկայությամբ: Այսպիսի արդյունքը թերևս բացատրելի է այն հանգամանքով, որ առողջ սնվելն ունի հստակ նպատակադրում՝ առողջական վիճակի բարելավում, ընդ որում այսպիսի վարքաձևը հաճախ սկսվում է իրականացվել որոշակի վերջնարդյունքի ակնկալիքով: Իսկ այդպիսի ակնկալիքը կարող է բարձրացնել առողջության բարելավման անհրաժեշտության գիտակցումը, ինչն էլ կարող է խթանվել ներքին դրդապատճառներով՝ դրսևորելով համապատասխան վարք: Նախկին փորձի կանխորոշիչ դերը ևս կարելի է հասկանալ ըստ նպատակադրումների և վերջնարդյունքների համադրության, քանի որ ունեցած փորձառությունն ավելի մեծ հավանականությամբ կձևավորի վարքի կրկնությունը:

Մարզվելու վարքաձևի պարագայում դիտարկելով ինքնարդյունավետության և դրդապատճառների միջև փոխկապվածությունը՝ դրական կորելյացիոն կապ է բացահայտվում ինչպես ինքնավար ($r=0.327, p\leq 0.01$), այնպես էլ վերահսկվող ($r=0.167, p\leq 0.05$) դրդապատճառների հետ: Մարզվելը կամ ֆիզիկական ակտիվությունն առհասարակ ևս այն վարքաձևերի շարքին է դասվում, երբ վարքի իրականացումը կապված է որոշակի ակնկալվող վերջնարդյունքի հետ: Այսինքն՝ ակնկալվող վերջնարդյունքը այն հստակ նպատակն է, որին ուղղված են անձի գործողությունները: Տվյալ պարագայում, կախված նախանշված վերջնարդյունքից, վարքը կարող է խթանվել կամ ներքինից, կամ արտաքին՝ վերահսկվող գործոններից: Վերահսկվող դրդապատճառները կարող են ձևավորվել օրինակ մարզչի հրահանգներից կամ

բժշկական ցուցումներից: Կարելի է ենթադրել, որ մարզվելու վարքաձևը խթանելու ավելի լայն հնարավորություններ կան՝ համապատասխան տեղեկատվական և հոգեբանական աշխատանքների իրականացման դեպքում, որոնք ուղղված կլինեն արտաքին խթաններից դեպի ներքին՝ ինքնավար դրդապատճառների ձևավորումը՝ առավել կայուն ու տևական արդյունքի պահպանման համար:

Ռեգրեսիոն վերլուծության արդյունքների համաձայն՝ մարզվելու վարքաձևի համար կանխորոշիչ գործոններ են հանդիսանում նախկին փորձը ($F_{1,168}=0.137, p<0.001$), սեռը (իգական) ($F_{1,167}=0.039, p=0.006$), տարիքը (18-35) ($F_{1,166}=0.028, p=0.017$), ինքնավար դրդապատճառները ($F_{1,165}=0.222, p<0.001$), ինքնարդյունավետությունը ($F_{1,164}=0.055, p<0.001$), վարքն իրականացնելու վերաբերյալ դիրքորոշումները ($F_{1,163}=0.029, p=0.002$) և սուբյեկտիվ նորմը ($F_{1,162}=0.013, p=0.041$): Ռեգրեսիոն մոդելում վարքի իրականացման հավանականությունը կազմում է 19%՝ նախկին փորձի, սեռի և տարիքի կանխորոշմամբ: Մինչդեռ ինքնավար դրդապատճառները վարքի հավանականությունը դարձնում են 41%, իսկ ինքնարդյունավետությունն ավելացնում է ևս 5%: Ռեգրեսիոն մոդելի բոլոր կանխորոշիչ գործոնները միասին ապահովում են մարզվելու հավանականության 50%-ը: Ինչպես նկատում ենք, այս վարքաձևում ևս էական դեր ունեն ինքնավար դրդապատճառները: Սա ապացուցում է վերը նշված ենթադրությունն այն մասին, որ ներքինից խթանվող դրդապատճառները կարող են առավել մեծ հավանականությամբ կանխորոշել ֆիզիկական ակտիվությամբ զբաղվելու մտադրությունը: Ընդհանուր առմամբ կանխորոշիչ գործոնների այսպիսի խումբը կարելի է համարել վարքի ինքնակարգավորման հիմնական դրսևորումներ՝ ներքին և արտաքին փոխադարձության սկզբունքով: Այսինքն՝ մարզվելու համար կարևոր դեր ունեն ինքնավար դրդապատճառները, սակայն միայն ներքին խթանումը դեռևս բավարար չէ և անհրաժեշտ են նաև համապատասխան արտաքին ազդակներ՝ սոցիալական աջակցություն և դրական փորձառություն: Հաշվի առնելով նաև մարզվելու կանխորոշիչ գործոններին ուղղված վերոնշյալ այլ հետազոտությունները՝ կարելի է փաստել, որ այս վարքաձևի իրականացման համար էական նշանակություն ունեն ինչպես ինքնավար, այնպես էլ վերահսկվող դրդապատճառները: Տարբերությունը թերևս այն է, թե որքան կայուն կարող է պահպանվել վարքը:

Մեր հետազոտությամբ ուսումնասիրված մյուս վարքաձևը ծխելը թողնելն էր՝ իբրև առողջության պահպանմանն ուղղված վարք: Ծխելը թողնելու ինքնարդյունավետության և դրդապատճառների միջև փոխկապվածության ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ այս կոնստրուկտի հետ չի արձանագրվում վիճակագրորեն նշանակալի որևէ կապ ներքին կամ արտաքին դրդապատճառների հետ: Այսպիսի պատկերը կարող է պայմանավորված լինել ծխելը թողնելու պատրաստակամության աստիճանով: Կարելի է ենթադրել, որ

ծխողների խմբում առկա ցածր ինքնարդյունավետությունը խոչընդոտում է վարքի մտադրությանը, հստակ գործողությունների դիմելու պատրաստակամությանը: Մինչդեռ ինքնավար և վերահսկվող դրդապատճառները նշանակալիորեն փոխկապված են այլ սոցիալ-կոգնիտիվ փոփոխականների հետ՝ ծխելը թողնելու վերաբերյալ ունեցած կարևորության դիրքորոշումների, սուբյեկտիվ նորմի և վարքի վերահսկման ընկալման: Վերջինը ներառում է իհարկե նաև ինքնարդյունավետությունը, սակայն տարբերությունն այն է, որ ինքնարդյունավտության առկայության պարագայում մարդը վստահ է, որ կարող է իրականացնել վարքը, իսկ ընկալվող վարքային վերահսկողությունը կարծես պասիվ դիտարկումն է բոլոր այն հնարավոր գործոնների, թե ինչպես կարելի է վերահսկել վարքը, սակայն դեռևս չիրականացնել: Փաստորեն, ստացվում է, որ որքան բարձր են անառողջ վարքաձևը փոխելու վերաբերյալ ունեցած դիրքորոշումները, սոցիալական աջակցությունն ու հնարավոր նպաստող ու խոչընդոտող գործոնների վերահսկման ընկալումը, այնքան ավելի ուժեղ են նաև ներքին ու արտաքին դրդիչները՝ ծխելը թողնելու համար: Սա կարելի է ենթադրել ըստ դուրս բերված վիճակագրորեն նշանակալի կապի, սակայն ծխելը թողնելու կանխորոշիչ գործոնների ուսումնասիրության արդյունքում բացահայտվեց, որ մտադրության համար առավել նշանակալի գործոններ են քրոնիկ հիվանդություն չունենալը և ինքնավար դրդապատճառները: Անսպասելի արդյունք էր քրոնիկ հիվանդության բացակայությամբ պայմանավորվածությունը, ենթադրվում է, որ քրոնիկ հիվանդության առկայությունը կարող էր պայմանավորող գործոն հանդիսանալ ծխելը թողնելու մտադրության համար: Ինչևէ, այս գործոնն ապահովում է ծխելը թողնելու մտադրության միայն 1%-ը ($F_{1,59}=0.082, p=0.025$), իսկ ինքնավար դրդապատճառները ռեգրեսիոն մոդելում ցույց են տալիս վարքի կանխորոշման 41%-ը ($F_{1,58}=0.405, p<0.001$): Այսպիսով, ստացվում է, որ ծխելը թողնելու մտադրությունը կարող է ձևավորվել, եթե այդ վարքն իրականացնելու համար ունի բավարար ներքին դրդապատճառներ: Ի տարբերություն մյուս վարքաձևերի, առողջ ապրելակերպին ուղղված այս դրսևորման համար փաստորեն անհարժեշտ է կամային դրդում՝ ներքին նախաձեռնողականություն մտադրությունից գործողությանն անցնելու համար: Եթե առողջ սնվելու ու հատկապես մարզվելու հարցում էական նշանակություն ունեն սոցիալական ճնշումը, ապա ծխելը թողնելը պայմանավորված է ներքին գործընթացների այնպիսի համախմբությամբ, որոնք խթան են հանդիսանում գործողության իրականացման համար:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ առողջության պահպանման կամ առողջ ապրելակերպի ձևավորման մասին խոսելիս անհրաժեշտ է առաջին հերթին դիտարկել վարքի կարգավորման գործընթացը: Ընդ որում՝ հաճախ այդ կարգավորումն արտաքին բնույթի է՝ միայն բուժական միջամտությամբ իրականացվող: Գիտության ու տեխնիկայի արդի միտումներում միայն հիվան-

դախույս վարքը չի կարող համարվել առողջության պահպանում, ուստի վարքի կարգավորումն ուսումնասիրելիս և ինչու ոչ՝ նաև ձևավորելիս, անհրաժեշտ է դիտարկել և հիմնվել ներքին՝ ինքնակարգավորման վրա: Այնպիսի վարքաձևերն, ինչպիսիք են առողջ սնվելը, մարզվելը, ծխելը թողնելը հասարակական գիտակցության մեջ հանդիսանում են առողջ կենսակերպ վարելու պարտադիր բաղադրիչները: Այս վարքաձևերի ուսումնասիրության օրինակով կարելի է նշել, որ առողջ ապրելակերպին ուղղված սովորույթների ձևավորումը կարգավորելի են և համապատասխան սոցիալ-հոգեբանական աշխատանքները կարող են նպաստել ավելի առողջ ապրելու մտադրությունների ձևավորմանը:

Գրականություն

1. **Ajzen I.**, The Theory of Planned Behavior/ P. A. M. Lange, A. W. Kruglanski & E. T. Higgins (Eds.), Handbook of theories of social psychology, 2012, Vol. 1, pp. 438-459.
2. **Bandura, A.**, The self system in reciprocal determinism. American Psychologist, 33(4), 1978, pp.344–358.
3. **Bandura, A.**, Self-Efficacy in Changing Societies. Cambridge University Press., 1995, p. 742
4. **Bandura, A.**, The Primacy of Self-Regulation in Health Promotion. Applied Psychology, 54(2), 2005, pp.245–254.
5. **Deci, E. L., & Ryan, R. M.** Self-determination theory: A macrotheory of human motivation, development, and health. Canadian Psychology/Psychologie Canadienne, 49(3), 2008, pp.182–185.
6. **Meyerowitz, B. E., & Chaiken S.**, The effect of message framing on breast self-examination attitudes, intentions, and behavior. Journal of Personality and Social Psychology, 52(3), 1987, pp. 500–510.
7. **Ng, J. Y. Y., Ntoumanis, N., Thøgersen-Ntoumani, C., Deci, E. L., Ryan, R. M., Duda, J. L., & Williams, G. C.** Self-Determination Theory Applied to Health Contexts A Meta-Analysis. Perspectives on Psychological Science, 7(4), 2012, 325–340.
8. **Ridder, D. de, & Wit, J. de.**, Self-Regulation in Health Behavior. John Wiley & Sons, 2006.
9. **Ryan, R. M., Patrick, H., Deci, E. L., & Williams, G. C.** Facilitating health behaviour change and its maintenance: Interventions based on self-determination theory. European Health Psychologist, 10(1), 2008, pp. 2–5.

РОЛЬ САМОЭФФЕКТИВНОСТИ И ВНУТРЕННЕЙ МОТИВАЦИИ В ФОРМИРОВАНИИ НАМЕРЕНИЯ ВЕСТИ ЗДОРОВЫЙ ОБРАЗ ЖИЗНИ

Акопджанян А. Р. (ЕГУ, Ереван, Армения)

В статье представлены результаты исследования посвященный изучению социально-когнитивных и мотивационных предикторов здоровьесберегающего поведения. В результате регрессионного анализа, самоэффективность и внутренняя мотивация были выявлены в качестве основных предикторов для пищевого поведения (здоровое питание), физической активности и отказа от курения. Результаты исследований показывают, что наиболее эффективно можно конструировать здоровый образ жизни, если формировать навыки саморегуляции здоровьесберегающего поведения. В основе саморегуляции поведения лежат самоэффективность личности и автономная мотивация.

Ключевые слова: *Здоровьесберегающее поведение, саморегуляция поведения, самоэффективность, автономная мотивация, намерение здорового образа жизни.*

THE ROLE OF SELF-EFFICACY AND INTRINSIC MOTIVATION IN PREDICTON OF HEALTHY LIFESTYLE INTENTIONS

Hakobjanyan A. R. (YSU, Yerevan, Armenia)

The current article reviews the results of a study of social-cognitive and motivational predictors of health behaviour. The theory of planned behavior was tested by using a TPB questionnaire and Treatment Self-Regulation Questionnaire was used. In the result of the step-wise multiple regression, self-efficacy and autonomous motivation were revealed as main predictors for healthy eating, physical activity and smoking cessation. Thus, healthy lifestyle can be constructed by self-regulation process.

Key words: *health behaviour, self-regulation, self-efficacy, autonomous motivation, healthy lifestyle intentions.*

ԱՆՁԻ ԻՆՔՆԻՐԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հարությունյան Ն. Ա. (ԵՊՀ, Երևան, Հայաստան)

n.harutyunyan@ysu.am

Հոդվածը նվիրված է անձի ինքնիրացման գործընթացի առանձնահատկություններին անձնական կյանքում՝ ամուսնական հարաբերություններում: Որպես ամուսնական կյանքում անձի ինքնիրացման գործոններ դիտարկվել են վստահությունը, ընտանեկան համախմբվածությունը, հարմարումը և բավարարվածությունը: Մեր կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում դուրս է բերվել ամուսնական կյանքից բավարարվածության և ինքնիրացման փոխկապակցությունը:

Հանգուցային բառեր՝ ինքնիրացում, վստահություն, ընտանեկան համախմբվածություն, հարմարում, բավարարվածություն:

Ինքնիրացումը, որպես անձի զարգացման, նրա հնարավորությունների բացահայտման և իրականացման գործընթաց, դրսևորվում է կյանքի բոլոր ոլորտներում և կյանքի տարբեր փուլերում՝ իրեն բնորոշ հատկություններով: Այդպիսի հատկությունների բովանդակություն են կազմում անձի անհատական առանձնահատկությունները, նրա ձգտումները, հավակնություններն ու սպասումները, կյանքի սցենարները և վարքի մոդելները: Ինքնիրացման բնույթի և հաջողության վրա նշանակալի ազդեցություն է ունենում կյանքի փորձը, հաջողություններն ու անհաջողությունները, վերաբերմունքը իր և շրջապատի նկատմամբ ու շրջապատի վերաբերմունքը իր նկատմամբ: «Առավել ընդհանուր տեսքով ինքնիրացումը անձի կատարելագործումն է կյանքում և ամենօրյա գործունեության մեջ, այս աշխարհում սեփական յուրահատուկ ուղու, սեփական արժեքների և ժամանակի յուրաքանչյուր պահին սեփական գոյության իմաստի որոնումն ու հաստատումը» [1, էջ 37]:

Ըստ Ա. Մասլոուի՝ ինքնիրացումը սեփական ընդունակությունների բացահայտումն ու դրանց կիրառումն է անձի կողմից, ինչպես նաև պոտենցիալ հնարավորությունների իրականացումը, ցանկությունների և հետաքրքրությունների իրագործումը, որպես բարձրագույն պահանջմունքների բավարարում: Ինքնիրացմանը նպաստում են ինքնահաստատման մեծ ցանկությունը և ներքին պահանջմունքը, սեփական հնարավորությունների գիտակացումը, նպատակադրումը, գործունեության համապատասխան պլանավորումը [4]: Բացի այդ՝ շատ կարևոր է անձի ինքնավստահությունը և հավատը սեփական ուժերի նկատմամբ, ունակությունը ճանաչելու սեփական հույզերը և նոր հնարավորությունների փնտրտուքը:

Կ. Ռոջերսը պնդում է, որ անձի զարգացման ներքին միտումը չի կարող իրականացվել առանց այլ անձի ըմբռնման և ընդունման, առանց նրա հետ փոխգործունեության և նրա նկատմամբ էմպաթիկ վերաբերմունքի: Անձի ինքնիրականացման՝ սեփական հնարավորությունները դրսևորելու ձգտումը, ըստ Կ. Ռոջերսի, հանդիսանում է այն գլխավոր դրդապատճառը, որը մղում է նրան արտաքին աշխարհի հետ կառուցելու նոր հարաբերություններ՝ լինելով առավել ամբողջական, նման ինքն իրեն: Եվ առանց էմպաթիայի, առանց այլ անձի ընդունման ինքնիրացումն անհնար է [5]:

Ինքնիրացման ճանապարհին անձը պետք է հաղթահարի հոգեբանական խոչընդոտները, լուծի կյանքի ընթացքում ծագած դժվարությունները: Ինքնիրացման հիմքում ընկած է հոգեբանական գոյացությունների արդիականացումը, որն ապահովում է անձի ներուժի իրականացումը: Ըստ էության՝ ինքնիրացումը ներառում է կատարելագործման ձգտում, որի հիմքում սեփական ուժերն ու ընդունակությունները իրականացնելու անձի բարձրագույն պահանջմունքն է: Այն իր մեջ ընդգրկում է ոչ միայն սեփական հնարավորությունների մշտական աճն ու գործունեության որակի բարձրացումը, այլև հասարակական նորմերի ու արժեքների ընդունումն ու յուրացումն անձի կողմից:

Ա. Մասլոուն գտնում է, որ ինքնիրացման գործընթացը բախվում է խոչընդոտների, երբ մարդը չի գտնում ինքն իրեն, երբ առկա են ինքնաճանաչման դժվարություններ, անհայտ է նպատակը, անձը դժվար է պատկերացնում ինքնիրացման ուղիները, չկա պահանջմունքների և հնարավորությունների համադրում, գերակշռում է թերարժեքության բարդույթը, ի վերջո գրանցվում է հոգեբանական հասունության սահմանափակ, թույլ արտահայտվածություն: Ինքնիրացման դժվարությունների հիմքում թաքնված է անձի վերաբերմունքը, որը նա տածում է իր և շրջապատի հանդեպ: Այդ դժվարությունները ուղեկցվում են անհարմարավետության զգացումով, կյանքի ծանրության զգացողությամբ, ինքնաքննադատության ուժեղացմամբ, Ես-ից անբավարարվածությամբ, վիրավորանքի, անօգնականության, ոչ պիտանիության, դատարկության և ձանձրույթի զգացումով, թուլությամբ, տագնապայնությամբ, որոշում կայացնելու անկարողությամբ, ագրեսիայով, դեպրեսիայով, կյանքի նկատմամբ պատկերացումը փոխելու գիտակցմամբ, սեփական կյանքում նոր հնարավորություններ տեսնելու սուր պահանջմունքներով [4]: Ինքնիրացման դժվարությունները հաղթահարելուն նպաստում են նոր ուղիների որոնումը և դրված նպատակներին հասնելու ցանկությունը, կենտրոնանալու ունակությունը, դժվարությունները որպես ժամանակավոր ընկալելը, ցանկությունն իրագործելու մտադրությունները, լիցքաթափվելու, զգացմունքները ճանաչելու և աշխատանքը շարունակելու ունակությունը:

Առավել կարևոր և արդիական է անձի ինքնիրացման հիմնախնդիրը անձնական՝ ամուսնական կյանքում, որը ենթադրում է փոխհարաբերությունների և փոխազդեցությունների ավելի խորը և ինտենսիվ բնույթ:

Անձնական կյանքում ինքնիրացման բարձր մակարդակը ապահովվում է մարդու ներքին ռեսուրսների ներդաշնակությամբ, նրանց համապատասխան կիրառմամբ, ինքնավերականգնման և նորովի դրսևորման հնարավորությամբ: Ընտանիքում ինքնիրացման գործընթացում անձը ճիգեր է գործադրում, որոնք ուղղված են այնպիսի ներուժի բացահայտմանը, որը թույլ կտա նրան հասնել ներդաշնակության շրջապատի, կողակցի, իր և աշխարհի հետ: Լ. Ա. Կորոստիլյովան առանձնացնում է անձի ինքնիրացման չորս մակարդակ՝ պարզունակ-կատարողական, անհատական-կատարողական, սոցիումում նորմերի ու դերերի (հոգևոր և անձնային աճի տարրերով) յուրացումը երրորդ մակարդակն է, իսկ կյանքի իմաստի բացահայտման և արժեքային համակարգի ձևավորման միջոցով դրսևորվում է իրացման չորրորդ մակարդակը [3]: Իհարկե, ընտանիքում դրանք բոլորն էլ առկա են և գործում են, սակայն ամուսնական հարաբերություններում ինքնիրացման համար, մեր կարծիքով, կարևորությամբ առանձնանում են վերջին երկուսը՝ ընտանեկան նորմերի յուրացումը, դերերի համապատասխան իրագործումը և ընտանեկան արժեքների ու կյանքի իմաստի բովանդակային ընդհանրությունը:

Ընտանեկան կյանքում գոյություն ունեն անձի ինքնիրացման փուլեր՝

- ինքնորոշում կյանքի ուղեկցի ընտրության հարցում՝ անձն ընտրում է իրեն համակրելի, գրավիչ, հոգեպես մտերմիկ զուգընկեր,
- կայուն անձնային փոխհարաբերությունների կայացում՝ անձը ձևավորում է ամուսնաընտանեկան հարաբերություններ հետևյալ ոլորտներում՝ հոգեֆիզիոլոգիական, հոգեբանական, սոցիալ-հոգեբանական, հոգևոր,
- ամուսինների հետագա անձնային աճ և զարգացում: Ըստ Արգայլի՝ ինքնազարգացումը ավտոնոմիայի և հոմոնոմիայի համադրությունն է, խորքային պահանջումների և դրանց բավարարման միջոցների համադրությունը, և անձի վարքի բազմակողմանիության մեծացումը [2]:

Այս բոլոր փուլերում անձի ինքնիրացմանը միշտ ուղեկցում է բավարարվածության զգացումը: Անձն ապրում է գոհունակություն և բավարարվածություն գործունեության արդյունքներից, հաջողություններից ու սեփական նվաճումներից: Ամուսնական հարաբերություններում բավարարվածությունը մեծ մասամբ որոշվում է ընտանեկան մի շարք ոլորտներում՝ գործառույթների լիարժեք և համապատասխան իրագործմամբ: Բավարարվածությունը շնորհիվ անձը հասնում է ներդաշնակության իր և շրջապատող աշխարհի հետ: Տեղին է անդրադառնալ բավարարվածության հասնելու միջոցների աղբյուրների՝ հեղունիստական և էվդեմոնիստական տեսությունների քննարկմանը, որոնք երկու հակադիր տեսակետներ են ընտանիքում բավարարվածության և երջանկության մասին պատկերացումներում:

Առաջին հայացքից ամուսնական կյանքում բավարարվածությունը ենթադրում է արտահայտված հեղոնիստական (հաճույքի) բաղադրիչ: Միևնույն ժամանակ սոցիումի մեջ կենսագործունեությունը թույլ չի տալիս անձնական

կյանքը և ամուսնաընտանեկան հարաբերությունները բերել միայն հեղոնիզմի: Ըստ էության՝ երջանկության հեղոնիստական կոնցեպցիայի ներկայացուցիչները նախընտրում են բավարարվածության միակողմանի, եսակենտրոն չափանիշ, որ ուղղված է միայն սեփական օգուտին, ինչը արդյունքում ձևափոխում, աղճատում է ինքնիրացման ընթացքը:

Մյուս կոնցեպցիան՝ էվդեմոնիզմը ենթադրում է համախոհների առկայություն, ովքեր կիսում, աջակցում են բարձր գաղափարին, ձգտում են մեծ ու հստակ նպատակների: Ամուսնա-ընտանեկան հարաբերությունների հետ կապված այսպիսի կողմնորոշման ծայրահեղ ձևերը կարող են ունենալ բացասական ազդեցություն: Ամուսնուն (կնոջը) վերագրվում է ժամանակի մեծ մասն ընտանիքից դուրս անցկացնելու ցանկություն, շեղում ամուսնաընտանեկան պարտավորություններից: Այսպիսով, բավարարվածության չափանիշը ձեռք է բերում նույնպես միակողմանի ուղղվածություն, բայց արդեն դեպի սոցիումի կողմը [3]:

Պետք է հակադրել և չափազանց հեշտացնել հեղոնիստական և էվդեմոնիստական կողմնորոշումները, քանի որ, ըստ էության, դիտարկելով անձնական կյանքում բավարարվածության հիմնախնդիրը, անհրաժեշտ է ի նկատի ունենալ այդ երկու կողմերի համահարաբերակցումը: Սակայն անհրաժեշտ պայման է, որ ամուսիններից յուրաքանչյուրը ջանք գործադրի ոչ միայն իր Ես-ի զարգացման, այլև նպաստի դիմացինի ինքնիրացման հնարավորությունները իրականացնելու համար:

Անձի ինքնիրացումը ենթադրում է առաջին հերթին ինքն իր, այլ մարդկանց և ամբողջ աշխարհի նկատմամբ վստահության բարձր մակարդակ, այսինքն վստահությունը դիտարկվում է, որպես ինքնիրացման երկրորդ պայման կամ բաղադրիչ: Ընտանիքում ևս անձն ունի վստահություն՝ ուղղված իրեն և կողակցին (կամ ընտանիքի այլ անդամներին): Ելնելով նրանից, թե վստահության որ ուղղվածությունն է գերակշռում, անձի մոտ վարքի ձևերը տարբեր են լինում:

Այդ վարքի ձևերի մասին խոսել է Տ. Սկրիպկինան, ըստ որի՝ այստեղ առկա է որոշակի հարաբերություն անձի՝ իր նկատմամբ վստահության և աշխարհի նկատմամբ վստահության միջև: Եթե աշխարհի, մարդկանց կամ կողակցի նկատմամբ վստահությունը մեծ է ինքն իր նկատմամբ վստահությունից, ապա անձի վարքում դրսևորվում է ենթարկում, ցածր ռեֆլեքսիա: Չափազանց քիչ վստահությունը ինքն իր նկատմամբ բերում է նաև ցածր ինքնագնահատականի, ցածր ձգտումների դրսևորման: Անձի ինքնիրացման համար դրական գործոն է համարվում, իհարկե, վստահությունը ինքն իր նկատմամբ, ինչը նպաստում է մարդու ինքնաարտահայտմանը: Սակայն, եթե այն ուղղորդվում է աշխարհի նկատմամբ վստահության պակասով, ապա անձի մոտ առկա է կասկածամտություն, նեղ հեռանկարների արտահայտվածություն: Վստահության արտահայտվածության ծայրահեղ, բևեռային ձևերը, բերում են

կենսագործունեության անհամապատասխանության և, հետևաբար, ինքնիրացման անհամապատասխանության: Համաձայն հեղինակի, ինչպես կյանքի գործունեության, այնպես էլ ինքնիրացման համար բարենպաստ է համարվում անձի բավականին բարձր վստահությունը իր նկատմամբ՝ արտաքին բացվածության ֆոնի վրա [7]:

Անկասկած, անձնական կյանքում անհրաժեշտ է ամուսինների միջև փոխադարձ հարմարվողականության որոշակի աստիճան: Հարմարվողականությունը, որպես ինքնիրացման արդյունքի երրորդ բաղադրիչ, ենթադրում է սոցիալական միջավայրի պայմաններին, այսինքն՝ ամուսինների համատեղ կենսագործունեությանն ակտիվորեն հարմարվելու գործընթաց: Հարմարման տիպի յուրահատկությունը և անհատական առանձնահատկությունները անձի ինքնիրացման գործընթացի որոշիչ գործոններ են:

Վ. Ա. Սիսենկոն առանձնացնում է ընտանեկան հարմարման մի քանի տիրույթներ, որոնցից առաջինը վերաբերում է զուգընկերների հարմարմանը իրենց ստանձնած ընտանեկան դերին ու աշխատանքի բաժանմանը: Այնուհետև հարմարումն է ամուսնու (կնոջ) հոգեկան աշխարհի, խառնվածքի, բնավորության, պահանջմունքների, հետաքրքրությունների, սովորությունների, դիմացինի կյանքի ոճի, կենսակերպի, նրա ունեցած հիմնական արժեքների, «կյանքի փիլիսոփայության», «կյանքի իմաստի» նպատակների ըմբռնմանը, ինչպես նաև հարմարումն է ֆիզիոլոգիական (այդ թվում նաև սեքսուալ) ոլորտում ու զուգընկերոջ մասնագիտական գործունեությանը: Նա ընտանեկան փոխհարաբերություններում առանձնացրել է հարմարողական վարքի դրսևորման չորս տիպ, որոնցից շատերն այն անձինք են, ովքեր օժտված են և դրսևորում են բարձր հարմարվողականություն, մնացածը՝ միջին կամ ցածր, և բավականին մեծ տոկոս են կազմում այնպիսի անձինք, ովքեր օժտված չեն հարմարվողականությամբ [6]: Անկախ նրանից, թե ինչպիսին է ընտանեկան-ամուսնական հարմարումը՝ լրիվ թե մասնակի, փոխադարձ թե միակողմանի, այն ունի դրական ազդեցություն և նշանակություն անձի ինքնիրացման համար: Հարմարումը կարգավորում է անձ-ընտանիք փոխհարաբերությունը, նպաստում հոգեկան առողջության պահպանմանը և անձի ինքնիրացմանն ու ինքնակատարելագործմանը:

Հիմնվելով տեսական վերլուծության վրա և կարևորելով ամուսնական կյանքում ինքնիրացման հիմնախնդիրը փորձել ենք բացահայտել անձի ինքնիրացման գործընթացի առանձնահատկությունները անձնական (ամուսնական) կյանքում և դրա փոխկապվածությունը ընտանեկան կյանքով բավարարվածության հետ: Կիրառել ենք հետևյալ մեթոդիկաները՝ Յ. Ե. Այրոշինայի՝ ինքնիրացման մակարդակի չափման թեստը (CAT) և Դ. Օլսոնի՝ ընտանեկան համախմբվածության և հարմարողականության չափման մեթոդիկան (FACES-3): Հավելենք, որ տղամարդկանց և կանանց մոտ ընտանեկան կյանքից բավարարվածության աստիճանը բացահայտվել է

ընտանեկան համախմբվածության և հարմարողականության տեսանկյունից, համաձայն Դ. Օլսոնի մեթոդիկայի: Մեթոդիկան մշակված է այնպես, որ թույլ է տալիս հաստատել, թե ինչպես են հետազոտվողներն ընկալում իրենց ընտանիքը և ինչպիսին կուզենային այն տեսնել: Իրական ընտանեկան հարաբերությունների և իդեալական ընտանեկան հարաբերությունների գնահատականների միջև տարբերությունները ցույց են տալիս անձի՝ ամուսնական կյանքից բավարարվածության մակարդակը, արտահայտվածության աստիճանը: Հետազոտությանը մասնակցել են ամուսնացած հասուն տարիքի տղամարդիկ ($n=60$) և կանայք ($n=60$): Քանի որ նպատակ ունենք ուսումնասիրել ինքնիրացումը անձնական կյանքում, ապա նպատակահարմար է ուսումնասիրել ոչ ամուսնական զույգեր:

Այսպիսով, հետազոտության արդյունքներից երևում է, որ իրենց ընտանիքում ցածր բավարարվածություն ունեցող կանանց (40 %) մոտ ինքնիրացման որոշ գործոններ, ինչպիսիք են *ժամանակային կողմնորոշումը*, *աջակցությունը*, *վարքի ճկունությունը*, *ինքնաբուխությունը*, *կոնֆակտությունը*, ունեն ցածր ցուցանիշներ, այսինքն բացահայտվել են ուղիղ կոռելյացիոն կապեր: Ինչը նշանակում է, որ ցածր բավարարվածություն ունեցող կանայք կողմնորոշված են ժամանակի ինչ-որ հատվածի վրա, չունեն իրենց կյանքում անցյալի, ներկայի և ապագայի տարբերակման զգացում, չեն ընկալում ներկան որպես անցյալի արդյունք և չունեն ապագայի նկատմամբ պատրաստվածություն: Նրանց մոտ առկա է վարքի անկայունություն, շրջապատից բարձր կախվածություն: Ցածր բավարարվածություն ունեցող կանանց բնորոշ է նաև իրավիճակի փոփոխվող պայմաններին դանդաղ հակազդումը, նրանք դժվար են հարմարվում փոփոխություններին, նաև դժվար են հաստատում հարաբերություններ այլ մարդկանց հետ:

Ցածր բավարարվածություն ունեցող տղամարդկանց (23.33 %) մոտ գրանցվել են *ժամանակային կողմնորոշման*, *սիներգիկության*, *ճանաչողական պահանջմունքի*, *կոնֆակտության* ցածր ցուցանիշներ և հակադարձ կոռելյացիա՝ բարձր ցուցանիշներ *ինքնահարգանքի* և *կրեատիվության* սանդղակներում: Թեպետ ցածր բավարարվածություն ունեցող տղամարդկանց բնորոշ է կողմնորոշումը ժամանակի որևէ հատվածի վրա, ցածր է աշխարհի և մարդկանց ամբողջականության ընկալման հնարավորությունը, հետաքրքրված չեն աշխարհի մասին տեղեկատվությամբ, և անձի վարքում արտահայտված չէ շփումը, սակայն վառ է արտահայտված ստեղծագործական ուղղվածության ընդունակությունը և հարգանքը իր իսկ նկատմամբ:

Իսկ հարցված կանանց 60 %-ն ունեն ընտանեկան կյանքից բարձր բավարարվածություն, ինչն ուղիղ կոռելյացվել է *արժեքային կողմնորոշման*, *վարքի ճկունության*, *ինքնաբուխության* և *ինքնահարգանքի ցուցանիշներին*, իսկ *ագրեսիայի ընդունման* սանդղակի տվյալները գրանցվել են ցածր: Ինչը նշանակում է, որ նրանք արագ արձագանքում են իրավիճակի փոփոխու-

թյուններին, կարողանում են գնահատել սեփական առավելությունները, հնարավորություններն ու կարողությունները, հարգում և ընդունում են իրենք իրենց, ինչպիսին որ կան, մերժում են ագրեսիվ դրսևորումները վարքում:

Բարձր բավարարվածություն ունեցող տղամարդկանց (76.67 %) մոտ արձանագրվել են բարձր ցուցանիշներ հետևյալ սանդղակներում՝ *ժամանակային կողմնորոշման, աջակցության, վարքի ճկունության, ինքնահարգանքի, կրեատիվության, ինչպես նաև ագրեսիայի*: Այս խմբի մեջ ընդգրկված հետազոտվողների տվյալների վերլուծության համաձայն կարող ենք փաստել, որ նրանց մոտ հստակ է անցյալի, ներկայի և ապագայի կապվածությունը, անձի արժեքներն ու վարքն անկախ են արտաքին ազդեցություններից, վարքը ճկուն է միջավայրի փոփոխությունների նկատմամբ, հարմարված են, կրեատիվ, ճանաչում են սեփական հնարավորությունները և գնահատում իրենց առավելությունները, բացի այդ ունակ են ընդունել բարկությունը, զայրույթը և ագրեսիան, որպես անձի բնական դրսևորումներ:

Այսպիսով, անձնական կյանքում ինքնիրացումը հանգեցնում է դրական, կայուն, անձնապես նշանակալի ամուսնաընտանեկան հարաբերությունների ստեղծման և պահպանման: Անձնական կյանքում ինքնիրացման գործընթացում բացի շատ կարևոր համախմբվածության և հարմարման գործոններից, էական դեր և նշանակություն ունեն անձի բավարարվածությունն ամուսնական կյանքից ու վստահությունն իր և շրջապատի, այդ թվում կողակցի նկատմամբ:

Գրականություն

1. Անձի ինքնիրացման հիմնախնդիրը: Ուսումնառական ձեռնարկ / **Վ. Ռ. Պապոյան, Է. Ա. Գրին, Ա. Ս. Գալստյան** և ուրիշներ., Խմբ.՝ Ս. Ս. Ամիրյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2011. – 102 էջ:
2. **Аргайл М.** Психология счастья. – М: Пог्रेसс, 1990. – 336 с.
3. **Коростылева Л. А.** Психология сомореализации личности: брачно-семейные отношения. СПб.: Изд. СПбГУ, 2000. – 292 с.
4. **Маслоу А.,** Самоактуализация. – М., МГУ, 1982 - 324 с.
5. **Роджерс К.,** Взгляд на психиатрию. Становление человека, М., "Прогресс" 1994 - 178 с.
6. **Сысенко В. А.** Молодеж вступает в брак. -М.: Мысль. 1986 - 255 с.
7. <http://padaread.com/?book=30279> **Скрипкина Т. П.** Психология доверия, М.: изд. центр «Академик», 2000. – 264 с.

ОСОБЕННОСТИ САМОРЕАЛИЗАЦИИ ЛИЧНОСТИ В СУПРУЖЕСКИХ ОТНОШЕНИЯХ

Арутюнян Н. А. (ЕГУ, Ереван, Армения)

Статья посвящена анализу процесса самореализации личности в супружеских отношениях. Мы проанализировали факторы самореализации личности в семейной жизни, такие как доверие, семейная сплоченность, адаптация и удовлетворенность. В результате данного анализа нами была обнаружена связь между удовлетворенностью супружеской жизнью и самореализацией.

Ключевые слова: *самореализация, доверие, семейная устойчивость, адаптация, удовлетворенность.*

PECULIARITIES OF PERSON' SELF-REALIZATION IN MARITAL RELATIONS

Harutyunyan N. A. (YSU, Yerevan, Armenia)

The article is devoted to the analysis of the process of persons' self-realization in marital relations. We analyzed the factors of personal self-realization in family life, such as trust, family cohesion, adaptation and satisfaction. As a result, we have established a link between satisfaction with life and self-realization.

Key words: *self-realization, trust, family stability, adaptation, satisfaction.*

ՃԳՆԱԺԱՄՍ, ԹԵ՛ ԿՐԻՉԻՍ: ԿԵՂԾ ԲԵԿՄԱՆ ԱՊՐՈՒՄՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հովհաննիսյան Հ. Ռ. (ԵՊՀ, Երևան, Հայաստան)

hrach.hovhannisyanyan@ysu.am


Հողվածը նվիրված է երկու հասկացությունների պարզաբանմանը. հոգեբանական ճգնաժամին՝ որպես անձի տառապալից ապրում, և կրիզիսին՝ որպես մարդու կյանքի շրջադարձային անցում կամ բեկում: Առաջարկվում է դրանք տարբերակելու նկարագրական մոդել, ինչպես նաև ուշադրություն է դարձվում անձի այն փորձառությանը, որը նպաստում է ճգնաժամային ապրումների գործարկմանը՝ առանց կենսական բեկումների: Հողվածում ներկայացված է նաև հեղինակի երկարատև ուսումնասիրություններից մի դրվագ՝ կապված ռիսկին հակվածությանը՝ որպես անձնային ճգնաժամը հաղթահարելու կամ արգելափակելու միջոց:

Հանգուցային բառեր. ճգնաժամ, կրիզիզ, կեղծ բեկման ապրում, սուր զգացողություն, սոցիալական կարծրատիպ, ռիսկին հակվածություն:

Ճգնաժամը սուբյեկտի կողմից ապրվող գործընթաց է, և գիտակցելի է: Այն ուղեկցվում է անորոշության, տագնապի, անապահովության զգացումներով, ընկճվածության, կոնֆլիկտայնության ու ֆրուստրացվածության բարձր աստիճաններով, և ենթակա է կանխարգելման ու հաղթահարման: Այս առումով, կարելի է ընդունել այն փաստը, որ ճգնաժամը պարտադիր չէ բեկումնային լինի անձի կյանքում, իսկ բեկումը ոչ միշտ է, որ ապրվում է, քանզի կարող է չգիտակցվել: Ճգնաժամի նկատմամբ կա սուբյեկտիվորեն երկարժեք վերաբերմունք: Առաջին հերթին բացասական՝ կապված անցանկալի հետևանքների գիտակցման և տհաճ զգացողության հետ: Երկրորդ հերթին դրական՝ կապված անձնային աճի, կատարելագործման, հաղթանակի հնարավորությունների հետ: Այս երկուսն էլ դիրքորոշումներ են, նախատրամադրվածություններ, որոնք անցյալի փորձի և ներկա վիճակի զուգորդություններ են:

Հարկ է հիշել, որ կրիզիսը (հուն.՝ **κρίσις** [crisis] բեկում, շրջադարձ, անցում, վճիռ, լուծում) նկատելի է անձի կենսական ժամանակահատվածներում՝ որակական փոփոխությունների կամ նորագոյացումների շնորհիվ, որոնք ուղղված են նոր իրավիճակին անձի հարմարմանը (ադապտացիա) կամ հնին վերահարմարմանը (ռետապտացիա), և բնույթով հաճախ անշրջելի են: Իսկ ճգնաժամը (ճգնելու ժամը) գիտակից անձի կողմից դժվարությունների ապրման վիճակն է՝ սահմանափակ տևողությամբ: Երբեմն ճգնաժամն ու անցումային (կրիտիկական) պահերը չեն համընկնում, որովհետև մարդն ի վիճակի չէ նկատելու օբյեկտիվ այն բոլոր որակական փոփոխությունները,

որոնք անընդհատ են իր կենսագործունեության ընթացքում (օրինակ՝ ֆիզիկական և անձնային աճ, ծերացում, փորձառություն, հիվանդացում, առողջացում, գիտելիքի համալրում, դերափոխում, նոր հարաբերությունների հաստատում, մանկահասակ երեխայի դեպքում՝ խոսքի առաջացումը, քայլելու սկիզբը, առաջին ատամնազարը և այլն): Այսինքն, այդ բեկումներն ու անցումները նաև վրիպում են մարդկանց ուշադրությունից՝ շնորհիվ այն բանի, որ այս կամ այն պատճառով չեն գիտակցվում, հետևապես և ճգնաժամային ապրումներ չեն առաջանում: Որպես կանոն, մարդը մանրամասնորեն նկատում է կրիտիկական անցման այն պահերը, որոնք գնահատում է որպես առավել դժվարին, տառապալից ու տանջալից, վերաբերվում է դրանց որպես անհաղթահարելի՝ հասնելով ճգնաժամի, իսկ հաղթահարելուց հետո՝ իրեն վեհացած զգում: Այսինքն, նման դեպքերում անձը կողմնորոշվում է սեփական հոգեվիճակների ու վերջնարդյունքի համեմատություններով, որոնք միշտ չէ, որ համընկնող են՝ կախված իրավիճակից, հանգամանքներից, դիրքորոշումից, սպասումներից, տրամադրությունից, հակումներից և այլ գործոններից: Այս առումով *ճգնաժամը որոշ չափով համընկնում է հոգեկան տառապանքի կամ տառապալից ապրումների հետ:*



Նկար 1. Բեկման և ճգնաժամի տարբերակված արտահայտումը

Ելնելով արտակարգ և ճգնաժամային իրավիճակների հոգեբանության ուսումնասիրման մեջ երկարամյա մեր փորձից, առաջարկում ենք կրիտիկական (որպես բեկումնային, շրջադարձային) և ճգնաժամային (որպես տառապալից ապրում) վիճակների տարբերակված, նկարագրական հետևյալ մոդելը:

Հոգեհուզական լարումը, որն առաջանում է ներքին կոնֆլիկտի արդյունքում, ունի ուժգնության աստիճաններ՝ կախված կոնֆլիկտի աճի մակարդակից: Վերջինս արտահայտվում է մարդու կյանքում կոնկրետ դեպքերի ընթացքով: Դեպքեր, որոնք թեպետ տարբեր իրավիճակների են վերաբերվում և տարբեր բովանդակություններ ունեն, սակայն խնդրահարույց կամ կոնֆլիկտաստեղծ ընդհանուր պայմանների հետ են առնչվում: Դրանք ձևավորվում են անձնային նշանակալիություն ստացած իրադարձության համատեքստում: Դիցուք, որևէ նպատակի հասնելու նկրտումները կառուցել են տվյալ անձի գործունեության որոշակի ուղղվածություն և շրջանակներ, որոնք տարբեր պայմաններ ու պահանջներ են դնում նրա առջև: Իր համար նպատակին հասնելու ողջ ընթացքը նշանակալի որոշումներով, գործերով, անձանցով, հարաբերություններով, քայլերով ու արդյունքներով է պայմանավորված: Ընդունենք այդ ընթացքը՝ որպես տվյալ գործունեության համար կենսական ժամանակահատված: Այն հագեցած է տարբեր, իրարից անկախ կամ փոխապայմանավորված իրավիճակներով՝ դեպքերով: Դրանցից որոշները կարող են դժվարին լինել, որոշները՝ անցանկալի կամ անախորժ, մյուսները՝ անհաղթահարելի: Կարող է ի հայտ գալ հոգեկան պաշարների ու փորձի պակաս կամ սղաճ, որին կհետևի հոգեհուզական լարումը: Վերջինս ապահարմարման (դեզադապտացիայի) նշան է: Ծագում է հակասություն. մի կողմից՝ անհաղթահարելիության և անօգնականության զգացումները, չբավարարող անձնային որակները, մյուս կողմից՝ նպատակին հասնելու կարևորությունը և ակնկալվող արդյունքի ցանկալիությունը, առաջ են բերում ներանձնային կոնֆլիկտ: Եվ որքան գիտակցված է իրավիճակը՝ որպես բացասական, այնքան մեծ է ներքին կոնֆլիկտի ուժգնությունը: Կախված ներքին կոնֆլիկտային լարվածության աճից, անձի համար դեպքերը սկսում են նշանավորվել տարբեր չափերով:

Դեպքից դեպք ընկած ժամանակամիջոցներում տառապանքն ու ծանր ապրումները անձին բերում են ճգնաժամի: Կարելի է և այսպես ասել. կյանքի փորձն է հուշում ճգնաժամի մասին: Այսուհանդերձ, հերթական դեպքերից մեկը գործունեության ընթացքի որևէ հատվածում կարող է վճռորոշ լինել՝ սուբյեկտիվորեն ամրագրվելով որպես իրադարձություն, և դրան նախորդող ու հաջորդող դեպքերին տրվում են համահունչ գնահատականներ: Դրանց միջև համեմատություններ կատարելիս (համեմատվում են հատկապես դժվարությունները), անձը հաճախ տվյալ իրադարձությունն ընդունում է որպես շրջադարձային՝ բեկումնային: Այստեղ կարևոր է ընդգծել, որ դա իսկապես կարող է բեկումնային լինել, սակայն մեծ է հավանականությունը, որ հանդես գա որպես կեղծբեկում (պսևդոկրիզիս): Սա լոկ վերագրում է (ատրիբուցիա)՝ իրավիճակը առանձին հատկանիշներով գնահատելու սուբյեկտիվ և հուզականորեն գերհագեցած փորձի արդյունք:

Այսքանով հանդերձ, մենք դժվար, թե որևէ ցանկություն ունենանք ճգնաժամ ապրելու: Հակառակը՝ ձգտում ենք կանխել դրանք, կամ որքան

հնարավոր է շուտ հաղթահարել: Սակայն հո չե՞նք պատրաստվում ընդհատել աճն ու զարգացումը, դադարեցնել ակտիվ կենսագործունեությունը՝ խուսափելու համար անցանկալի ապրումներից: Անխուսափելի շրջադարձ է մանուկների առաջին ատամնազալը, առաջին քայլը, առաջին խոսքը և այլ տարիքային նորագոյացումներ, որոնք զարգացման հոգեբանության դասազրքերում թյուրիմացաբար դասվել են տարիքային ճգնաժամերի կոնտեքստում: Միգուցե դրանք ճգնաժամային են ծնողների համար...

Նշանակալի իրադարձությունները կազմված են առանձին դեպքերից, որոնց հանգուցալուծումը (կուլմինացիան) պայմանավորված է հոգեհուզական լարման աճի կրիտիկական կետով: Այս առումով դեպքերից յուրաքանչյուրը կարող է դառնալ հանգուցակետ՝ ուղեկցվելով ճգնաժամային ապրումներով: Եթե այդ հանգուցակետը բեկումնային է (կրիտիկական), ապա անցումային փուլում առաջանում է նոր որակ՝ նորագոյացում:

Հավասարապես հավանական է, որ շրջադարձային կամ բեկումնային պահը լինի ոչ թե լարման աճով պայմանավորված, այլ հակառակը՝ վերականգնողական գործընթացում հուզական լարման իջեցումով կամ թուլացումով: Այս պարագայում կրիտիկական պահ է դառնում ճգնաժամի ավարտը ազդարարող իրադարձությունը, որը կարող է ուղեկցվել էքզալտացված հոգեվիճակով՝ բարձրացված տրամադրությունով, բերկրանքով, հիացմունքով ու հաղթական զգացումներով, և ինչու ոչ՝ նաև հուզական սպառումով, դատարկության զգացումով, ապաթիայով կամ անտարբերությամբ և այլն: Նույնքան իրատեսական է, որ դեպքից դեպք անցումն ավարտվի առանց հոգեբանական նորագոյացումների, որը, սակայն, կուղեկցվի անախորժ ու ծանր ապրումներով: Այս պարագայում ապրումները սուբյեկտիվորեն ճգնաժամային են, սակայն կենսականորեն անբեկում: Հաճախ անձի համար խնդիրների լուծման ընթացքը դժվարին է դառնում (կամ թվում է անլուծելի)՝ ելնելով նախկինում ունեցած այն փորձից, որին բացասաբար է վերաբերվել: Դա առաջ է բերում անհանգստություն, հոգսառատ ու անախորժ զգացողություն, ուղեկցվում ծանր ապրումներով ու տագնապով՝ անձի համար ստեղծելով պսևոկրիզիս (կեղծբեկում): Վերջինս անհատական փորձում տրված է՝ որպես ժգնաժամի վիճակ: Այսինքն, այդ ճգնաժամային վիճակը զուգորդաբար հիշեցնում է բեկում, սակայն չի պարունակում կենսական որևէ նորագոյացում: Սա նշանակում է, որ կա կեղծ շրջադարձի հոգեբանական էֆեկտ: Այստեղից կարելի է պնդել, որ ճգնաժամը պայմանավորված է ոչ այնքան արտաքին գործոններով, որքան ապրումների անհատական փորձով, այդ թվում՝ հոգեբանական խնդիրների, անհանգստությունների, փսիխոտրավմատիկ հիշողությունների և տագնապների ծագման հաճախակիությունով ու նույնակերպությունով:

Ինչպես նշում է Գորդոն Օլպորտը. «Իրականում անհնար է հստակ սահման գծել տրավմատիկ և աստիճանական փոխակերպումների միջև: Հարցվածներից շատերը հստակ նկարագրել են իրենց տրավմատիկ

իրադարձությունները, որոնք հանկարծակիորեն անձնական մեծ ոլորտի են վերածվել: Շատերն էլ հայտնել են, որ ունեցել են արտառոց տպավորիչ հուզական ապրումներ, սակայն դրանք հազվադեպ են հանգեցրել կյանքի հանկարծակի վերակողմնորոշմանը: Սեփական վնասվածքները, առանձին ալեկոծող իրադարձությունները կարող են ստեղծել որոշակի գերակայող պերսևերատիվ համակարգ (ֆոբիաներ, խորշանք, ծեսեր և այլն): Բայց այդպիսի իրադարձությունները կարող են նաև սկիզբ դնել ԵՍ կերպարի կենտրոնի տեղաշարժմանը և դրանով իսկ ներգործել ֆունկցիոնալ ավտոնոմ պրոպրիատիվ վիճակների էվոլյուցիայի վրա: Որոշ վնասվածքներ պարզապես սառեցնում են վախերը, մյուսները կարող են փոխել անձի զարգացման ուղղությունը» [տես 2, էջ 328]: Այս առումով ճգնաժամի ապրման ձևն ու չափը անձի անհատական փորձի արգասիք է:

Ճգնաժամ ապրող մարդը կարող է ուշադրություն չդարձնել այդ ընթացքում կատարվող առանձին դեպքերին, նույնիսկ այնպիսիներին, որոնք իսկապես բեկումնային են: Սակայն նույն մարդը մասնավոր դեպքերին կարող է այնպիսի արժեք ու նշանակություն տալ՝ որոնք իր համար հատուկ իրադարձություններ են, և որոնք ունեն համապատասխան ապրումներ: Նա սուբյեկտիվորեն սկսում է դրանց վերագրել շրջադարձային պահին բնորոշ հատկանիշներ: Սրա պատճառները շատ են՝ սկսած հակումներից ու հետաքրքրություններից, ներշնչանքից, վերջացրած ակնկալիքով ու դիրքորոշումներով, բնավորության գծերով ու անձնային առանձնահատկություններով: Զգացումները, թեև խիստ անհատական ու իրադրական բնույթ են կրում, հաճախ դրսևորվում են հաստատուն ու միանման կերպով: Ակնհայտ են հատկապես այն դեպքերը, որոնք անձի կողմից յուրացվել են սոցիալական կոնկրետ միջավայրերում՝ կոնկրետ պայմանների թելադրանքով:

Սոցիալական կարծրատիպավորման ընթացքում մարդը, յուրացնելով սոցիալական նորմերն ու արժեքները, ակամայից դառնում է դրանց կրողն ու պահապանը: Եթե անգամ սոցիումի թելադրած բարոյական պահանջների նկատմամբ անհատական վերաբերմունքը բացասական հուզական երանգավորում էլ ունենա, ապա անհրաժեշտ պահին կփոխակերպվի՝ հարմարվելով անհատի սոցիալականացման ու ինտեգրացման կարիքներին: Սա ոչ միայն մտքի սահմանափակումով ու պատկերացումների կարծրացումով է արտահայտվում, այլև զգացմունքային բյուրեղացումով: Ընդ որում, դա կարող է տեղի ունենալ տարատեսակ հույզերի ներքո: Սակայն խոստովանենք նաև, որ սոցիալապես ընդունելի, բայց միևնույն ժամանակ թելադրված կամ պարտադրված զգացմունքների մեծ մասը ինքնազգացման առումով անհարմարավետ է, տհաճ:

Անձի կենսական ժամանակահատվածներում տարաբնույթ զգացումների համամասնությունները պայմանավորված են նաև սովորության ուժով: Սովորություն, որն սկսվում է ձևավորվել վաղ տարիքից՝ սոցիալ-մշակութային

նախապատվությունների ազդեցության ներքո: Դրանցից են, օրինակ, թախիծն ու ընկճվածությունը, այսպես կոչված՝ «աշնանային տրամադրությունը»՝ որպես մշակութային դիրքորոշում: Կենսառիթմիկ և Ֆիզիոլոգիական մի քանի գործոններ ժամանակավորապես անտեսելու դեպքում, հասկանում ենք, որ այս տրամադրությունը բուն հոգեբանական սկզբնապատճառներ ունի. դեռևս մանկուց և դպրոցական տարիքից երեխային մեծերի կողմից մատուցվել է աշնան ու թախիծի զուգորդական ըմբռնումը, կարելի է ասել՝ ներշնչանքը... Նույնիսկ՝ ծրագիրը: Հիշենք տարվա եղանակների մասին գրական ստեղծագործություններում, պոեզիայում և արվեստի տարբեր ձևերում արտացոլված տրամադրությունները: Հիշենք նաև տարվա եղանակների մասին դպրոցական շարադրությունները...

Բազում փաստեր կան, երբ մարդիկ ինչ-ինչ հանգամանքներում հակված են ենթագիտակցաբար կրկնելու այդ ապրումները (շարունակական վերապրումներ): Նրանց համար «ամենալավ» ու «արդյունավետ» ապրումները սովորական դարձած ապրումներն են, քանզի որոշակիություն կա դրանցում: Դա այդպես է, անգամ եթե դրանք իրենց կողմից բացասական արժևորում ունեն: Անձն ակամայից ընդունում է այն վիճակը, որը «հուսալիորեն փորձված է». չէ՞ որ այդ հոգսը նա բազմաթիվ անգամներ ապրել է, «անթերի» կատարել: Դրա շնորհիվ անձը կարողանում է մնալ քաջածանոթ վիճակում՝ կոմֆորտի զոնայում: Պատեհ առիթի դեպքում նա պատրաստ է հերթական անգամ «կարգին» անհանգստանալ: Հաճախակի և «բարեհաջող իրացված» ապրումները անձի համար ոչ միայն սովորական, այլև հոգեհարազատ են դառնում, եթե անգամ դրանք անախորժ ապրումներ են:

Բնավորության այնպիսի թուլություններ, ինչպիսիք են լավկանությունը, խռովկանությունը, նեղացկոտությունը, զայրացկոտությունը, կռվարարությունը, անհամբերությունը, բռնկունությունը և այլն, այս պարագայում կարելի է դիտարկել ոչ միայն որպես բնավորության գծեր կամ անձի որակներ, կամ էլ նորմալ ընթացքից շեղվող հոգեկան գործընթացներ, այլև շարունակ վերապրման կայուն հոգեվիճակներ: Ընդամենը պատեհ առիթ, և վերապրման վիճակը գործարկված է: Նման վիճակի անձիք մի տեսակ բավականություն են զգում այդ ապրումներից. ասենք՝ սիրում են նեղանալ, խռովել կամ զայրանալ, լինել երկարատև թախիծով պարուրված, դժբախտ ցույց տալ իրենց, տագնապալից սպասումներ ունենալ... Նման վարքագծեր դրսևորվում են տարբեր դրդապատճառներով, ինչպիսիք են ուշադրության տևական կարիքը, միայնակության կամ անօգնականության զգացումը, օտարվածությունը, վտանգվածությունը, ձախողվածությունը, չհասկացվածությունը, անպիտանության զգացումը, տարբեր բարդույթներ և այլն: Խոսքը ոչ թե այն մասին է, որ թվարկված վիճակներն են հաճելի տվյալ անձի համար, այլ որ այդ վիճակներն ունեն ազատ և «թիրախավորված» արտահայտվելու փորձված եղանակներ՝ ճշգրիտ վերապրումով և ապրումակցման ակնկալիքով: Իսկ դա՛

գործուն է, և՛ հուսադրող, և՛ սովորական (վարժ): Տվյալ անձի բուն հոգեբանական խնդիրներին ու շեղումներին անդրադառնալուց զատ, պետք է խոստովանենք, որ այդ ապրումներում նա հաստատ հմտացած է՝ լավ է կատարում: Եվ պակաս կարևոր չէ, որ դա նաև ցուցադրված լինի կամ վերբալիզացվի՝ այդ մասին հաճախակի խոսելու, անընդհատ քննարկելու հակումով: Իհարկե արդարացի կլիներ նույն բանն ասել և սուբյեկտիվորեն դրական վիճակների մասին: Սակայն այս պահին դրանց չենք անդրադառնա միայն այն պատճառով, որ դրանք պարզապես տառապալից և ճգնաժամային չեն:

Անգամ եթե կարոտախտով տառապող մարդու հուշերը հագեցած են դժվար ու տրավմատիկ անցյալի փաստերով, որոնք նա երբեք չէր ուզի, որ կրկնվեին, միևնույնն է՝ նոստալգիկ տրամադրությունը կարող է պատել նրան թեկուզ այն պատճառով, որ դա կապված է եղել իր ջախել օրերի հետ, թանկագին մարդկանց ու հարազատ վայրերի հետ: Թեև այն ժամանակներում նա տառապել ու տանջվել է, այսօր էլ բացասաբար է վերաբերում այդ դեպքերին, սակայն նա հիվանդագին կարոտով է վերապրում դրանցում զետեղված առանձին պահերը, որոնք, ի դեպ, կարող են լինել դեպքեր՝ միաժամանակ թե՛ դրական, թե՛ բացասական գնահատականներով: Ուրեմն կարոտաբաղձության դեպքում ո՞րն է դրական ապրումների իրական գործոնը՝ փաստացի անցյալի իրադարձությունը, թե՞ ներկայում այն վերապրելու վաղեմի փորձառությունը...

Եթե առաջինն է, ապա հոգեբանությանը քաջ հայտնի պատճառներով բացասական հուզական երանգավորումով հուշերը կա՛մ պիտի մասամբ սղված լինեն (արտամղվեն), կա՛մ դառնան վնասակար ու տարբեր փսիխոտրավմաների հանգեցնեն: Բայց, փաստորեն, դրանք համագոյակցում են դրականների հետ...

Իսկ եթե երկրորդն է, ապա կարող ենք հիմնավոր ենթադրություն անել, որ վերապրելիս, կարող է տեղի է ունենալ անցյալի լավ ու վատ դեպքերի մասին հուշերի հուզական համահավասարեցում, անգամ գերակշռել դրական հուզականությունը: Չէ՞ որ վատ իրադարձությունները արդեն հաղթահարված են, իսկ լավերը կարիք չունեն հաղթահարվելու... Առաջանում է մի պարադոքսալ իրավիճակ. հաճելիորեն կարող են վերապրվել նաև բացասաբար գնահատված նախկին իրադարձությունները: Այսպիսով, ճգնաժամն ապրվում է գիտակցաբար, ինչպես շրջադարձային կամ բեկումնային (կրիտիկական) արդյունքով, այնպես էլ իրադարձությունից իրադարձություն՝ առանց բեկման արդյունքի:

Առանց բեկման արդյունքով ճգնաժամերը (պսևդոկրիզիսները) հաղթահարելու առավել վառ ու խտացված օրինակ է էքստրեմալ գործունեությանը մարդու հակվածությունը: ԱՄՆ Դելավերի համալսարանի հոգեբանության պրոֆեսոր Մարվին Յուկերմանը (1960 թ.) ենթադրեց, որ մրցակցությունը, նպատակներին հասնելու մարդկանց անհազ ցանկությունը,

արկածախնդրությունը և նման կարգի երևույթների հետևում թաքնված է մեկ ընդհանուր անձնային հատկություն, որին անվանեց «զգացողությունների որոնում» (sensation seeking) [տես 5]: Տարեցտարի ավելանում է սուր զգացողության սիրահարների, ռիսկին ու վտանգավոր գործողություններին հակված անձանց թիվը: Մեր դիտարկումներով՝ հատկապես երիտասարդների շրջանում չարդարացված ռիսկը քողարկվում է նորաձև լինելու, համարձակ ու ինքնավստահ երևալու ձգտումներով, մոդայի վերջին ճիշով զվարճանալու բաղձանքով: Արդարացումները բազմազան են. հիմնականում մեջբերվում են սպորտն ու առողջ ապրելակերպը, ինքնաճանաչումն ու կյանքի ուղու փոփոխությունը, նորի ու արտասովորի բացահայտումն ու այլ հիմնավորումներ: Սակավաթիվ են այն դեպքերը, երբ այս հիմնավորումները համարժեք են իրողությանը: Դրանք ավելի շատ քողարկում են անձի ունայնությունն ու մոլեռանդությունը: Հուզական փորձի պակասը, համալրվելով թարմ փորձերով, աստիճանաբար հանգեցնում է ծայրահեղության (էքստրեմալ վարքի): Սուր զգացողությունների սիրահարները ծարավ են նոր, տարբերվող, բարդ և ուժգին ապրումների:

Արտակարգ իրավիճակներում գործող անձնակազմերի, ինչպես նաև էքստրեմալ մարզաձևերով զբաղվող և սուր զգացողությունների սիրահար երիտասարդների հետ կատարված մեր ուսումնասիրությունների շրջանակներում պարզվել է, որ ռիսկային գործունեության նկատմամբ հակվածությունը պայմանավորված է նեղանձնական խնդիրների լուծման ոչ ավանդական եղանակների փնտրտուքով, որն աստիճանաբար ձևավորում է այսպես ասած՝ «հաղթահարողի հոգեբանական բարդույթ»: Ամենատարբեր հարաբերություններում անձը, սպառված համարելով կենսական արժեքի խնդիրներ լուծելու լայնորեն ընդունված, ավանդական եղանակները, դիմում է կյանքի և առողջության համար վտանգավոր գործողությունների:

Ստորև ներկայացնում ենք սուր զգացողությանը և ռիսկին հակման հոգեբանական պայմանները՝ գործոնային բաղադրիչների տարբերակմամբ (դրդապատճառներ, սպասումներ և ամրապնդումներ): Վերջիններս դուրս են բերվել մեր կողմից, էքստրեմալ մարզաձևերով զբաղվող և իրենց սուր զգացողությունների սիրահար համարող երիտասարդների շրջանում:

Հանուն սուր զգացողությունների՝ ռիսկի դիմելու «հարուցիչները».

- սոցիալական նորմեր, բարձրացված պահանջներ, մրցակցություն,
- միօրինակություն և միապաղաղություն, ձանձրույթ, ունայնություն,
- կենսական ռեսուրսների սպառում, հուզական սղություն, դեմոտիվացիա,
- կյանքի անվերահսկելիություն, ինքնակառավարման թուլացում,
- միջանձնային շփման սահմանափակումներ, անկայուն ինքնագնահատական,
- հոգեխոցող (փսիխոտրավմատիկ) իրադարձություններ:

Խելահեղ արարքներից «ակնկալիքները».

- իրավիճակի տիրապետում,
- նորի և արտասովորի բացահայտում,
- խոչընդոտների հաղթահարում, նպատակի և հաջողության հասանելիություն,
- մյուսներից տարբերվելու պարծանք,
- մարմնական հաճույք և բավարարվածություն,
- ինքնաճանաչում, ինքնավստահություն, հոգևոր ներդաշնակություն,
- արհեստավարժություն և պարզևատրում,
- ամուր առողջություն,
- միայնակության հաղթահարում:

Խիզախման «թյուր արդյունքները» (պսևդոռեզուլտատները) .

- կյանքի նկատմամբ վերահսկողություն, հաջողակություն, հաղթակա- նություն,
- կորսվող ինքնագնահատականի վերականգնում, ԵՍ-ի բարձրացում,
- ուրիշների կողմից հավանության արժանացում,
- ադրենալինի պակասի լրացում,
- կարճատև բարձր տրամադրություն՝ ի հեճուկս ընկճվածության,
- «կյանքի քաղցրության ճաշակում»:

«Զգացողությունների որսորդների» կողմից դժվարությունների և խոչըն- դոտների հաղթահարումը հաճախ զուգորդվում է անբարենպաստ հոգեվիճակ- ների կարգավորման հետ՝ առաջացնելով ապահովության զգացում, հոգեբա- նական հարմարավետություն և ինքնավստահության ամրապնդում: Գերհուզա- կանության շնորհիվ ստեղծվում է «ցանկալի վիճակ»՝ ԵՍ-ի հաստատման և սեփական կյանքը վերահսկելու զգացողություն: Հատկապես ուժգին է արտահայտվում բարեհաջող ավարտված խիզախման ակտը՝ ուղեկցվելով որոշակի էքստատիկ ապրումներով: Եվ որքան մեծ է անհատականությունն ընդգծելու կիրքը, այնքան մեծ է հակումը զգացողություններին ինտենսի- վություն հաղորդելու, ապա նաև մղվելու խելահեղ արարքների: Այստեղ ոչ պակաս դեր ունի նաև մշակութային գործոնը: Ռիսկի մասին այնպիսի ասույթներ, ինչպիսիք են «Ռիսկը գործի կեսն է», «Ով ռիսկի չի դիմում, նա շամպայն չի խմում», «Ռիսկը առաքինի գործ է» և այլ ողջունող արտա- հայտություններ, ավելի են խթանում վտանգին հակվածությունը՝ չհաշվարկված խիզախումներին: Ռիսկի մասին մենք էլ կարող ենք ասույթներ ավելացնել. «Ռիսկը ոչ պրոֆեսիոնալների գործն է», «Ռիսկը հուսալքության ծածկոցն է», «Ռիսկը անորոշության անզգայացումն է»... Թեև արդարացի կլինի նշել, որ բացառիկ դեպքերում ռիսկի դիմելը պարզապես անհրաժեշտություն է:

Գրականություն

1. **Милыпо Е. Ю.** Проблема классификации личностных кризисов Т. 2 / Под. ред. Козлова В. В.– Ярославль: МАПН, 2000, 250 с.

2. **Оллпорт Г. В.** Становление личности: Избранные труды. /Под общей редакцией Л.А.Леонтьева. М.: Смысл, 2002.- 462 с.
3. **Осипова А. А.** Справочник психолога по работе в кризисных ситуациях._ Ростов н/Д: Феникс, 2005.-315 с.
4. **Рудигер Дальке** Кризис как шанс начать жить лучше_ Изд-во ИГ , “Весь” 2006г.- 256с.
5. **Zuckerman M.** Sensation seeking and risky behavior./Published by American Psychological Association; Copyright 2007_Washington DC.

КРИЗИС, ИЛИ КРИЗИСНОЕ СТРАДАНИЕ? ПСИХОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ ПСЕВДОКРИЗИСНЫХ ПЕРЕЖИВАНИЙ

Оганнисян Г. Р. (ЕГУ, Ереван, Армения)

Статья посвящена уточнению двух понятий: психологический кризис как страдание человека, и кризис как поворотный момент или прорыв в жизни человека. Т.к. существует некоторая путаница, связанная с человеческим опытом и кризисами, предложена описательная модель дифференциации переживаний кризиса и психологических страданий. Мы также обратили внимание на жизненный опыт человека, который способствует возникновению кризисных переживаний без существенных изменений и прорывов, и называемые нами "псевдокризисами". Представленный в статье один эпизод из наших долгосрочных исследований касается склонности к риску.

Ключевые слова: кризис, страдание, псевдокризисное переживание, острые ощущения, социальный стереотип, склонность к риску.

IS IT SUFFERING OR CRISIS? PSYCHOLOGICAL ANALYSIS OF THE PSEUDO CRISIS EXPERIENCES

Hovhannisyanyan H. R. (YSU, Yerevan, Armenia)

This article is about life crisis and attached terms of mental suffering. The thing is that there is some confusion associated with human experiences and crises. We are making an effort to clarify the causal nexus of human life turmoils, suffering and attitudes. And we offer a descriptive model for differentiation of the crisis experiences and psychological suffering. Also we have touched upon addiction to the risk as a means of coping or blocking a personal crisis.

Key words: crisis, pseudo crisis experiences, exciting experience, suffering, social stereotype, risk addiction.

ՖՈԿՈՒՍ-ԽՄԲԵՐԻ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՐԿՈՒՄԸ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԷՄՊԻՐԻԿ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հովհաննիսյան Ս. Վ. (ԵՊՀ, Երևան, Հայաստան)

s.hovhannisyan@ysu.am

Սույն հոդվածում քննարկվում է հոգեբանական էմպիրիկ հետազոտության հիմնախնդիրներից մեկը, մասնավորաբար փորձարարական հետազոտության բազային տեխնիկաների շրջանակներում ֆոկուսմբերի մեթոդն ներմուծելու հնարավորությունները:

Հոդվածում արժևորվում է այն փաստը, որ գիտական ճանաչողության արդի փուլում առանձին հիմնախնդիրների հետազոտման նպատակով փորձարարական հոգեբանությունում կիրառվող հատուկ մեթոդների հետ զուգակցվում են նաև գիտահետազոտական մասնակի մեթոդներ, որոնք փոխառված են այլ գիտություններից: Եվ քանի որ նմանատիպ մեթոդների շարքում առանձնահատուկ կարևորվում է հոգեբանական հետազոտություններում հետզհետե ակտիվ կիրառություն ունեցող Ֆոկուս-խմբերի մեթոդը, ուստի փորձ է արվել մանրամասն ներկայացնելու վերջինիս կիրարկման մեթոդաբանությունը:

Հանգուցային բառեր. *ֆոկուս-խմբերի մեթոդ, էմպիրիկ հետազոտություն, մեթոդաբանություն, խորքային հարցազրույց, որակական հետազոտություն, կոնստրուկտիվ վերլուծություն*

Արդի հոգեբանական հետազոտությունն առավել լայն հասկացություն է, որը ներառում է հետազոտության զանազան ձևեր ու վերափոխություններ: Այն հոգեբանական իրականության ուսումնասիրվող տեսակետների մասին նոր տեղեկատվություն ստանալու նպատակ հետապնդող մեթոդաբանական, մեթոդական, կազմակերպական և այլ ընթացակարգերի միագումարություն է:

Հոգեբանական հետազոտությունների բազմազան ձևերը դիտարկելիս, նախ և առաջ, հարկավոր է առանձնացնել տեսական և էմպիրիկ հոգեբանական հետազոտություններ: Անդրադառնալով էմպիրիկ հետազոտության հիմնախնդիրներին, հարկ է նշել, որ փորձարարական հոգեբանական հետազոտությունը հանդիսանում է հոգեբանական էմպիրիկ հետազոտության առավել բարդ տարբերակը, որը ստուգում է կառուցված (պատճառական) վարկածները: Հայտնի է նաև, որ էմպիրիկ հոգեբանական հետազոտությունում անկախ փոփոխականի (ԱՓ) առաջադրման ձևից կախված՝ կիրարկվող ոչ բոլոր բազային տեխնիկաներն են, որ իսկությամբ համարվում են փորձարարական: Դրանք այդպիսին չեն դիտարկվում, քանի որ խոսքն այստեղ անկառավարելի ներգործության մասին է: Հետազոտության ենթատեքստում դիտարկվում են բնական պայմանները և հավաստագրվում են հոգեբանական բնութագրերի էմպիրիկ

ցուցանիշները: Ինքը՝ փորձարարը չի փոփոխում ԱՓ, որպես ԱՓ նա ընդունում է իրական իրադարձությունները, որոնց հետ ձեռնածվություն անելու հնարավորություն, ըստ էության, հետազոտողը չունի [7, էջ 54-55]: Դրա հետ մեկտեղ, գրագետ անցկացված հետազոտությունները հնարավորություն են տալիս այսպիսի դեպքերում հավակնելու պատճառահետևանքային կապի հայտնաբերմանը: Բացի այդ, հոգեբանությունում մի շարք խնդիրներ կարող են ուսումնասիրվել միայն հիշյալ բազային տեխնիկաների օգնությամբ:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ գիտական ճանաչողության արդի փուլում առանձին հիմնախնդիրների հետազոտման նպատակով փորձարարական հոգեբանությունում կիրառվող հատուկ մեթոդների հետ զուգակցվում են նաև այլ գիտություններից փոխառված գիտահետազոտական մասնակի հնարքներ: Նմանատիպ մեթոդների շարքում առանձնահատուկ կարևորվում է ոչ միայն սոցիոլոգիական, այլև տնտեսագիտական և հոգեբանական հետազոտություններում հետզհետե ակտիվ կիրառություն ունեցող Ֆոկուս-խմբերի մեթոդը: Ինչպես իրավամբ նշում է Ս. Ա. Բելանովսկին՝ Ֆոկուս-խմբերի մեթոդն իր ակունքներն ունի ինչպես էմպիրիկ սոցիոլոգիայի, այնպես էլ փորձարարական հոգեբանության ավանդույթների շրջանակներում [2]: Այսօր ֆոկուս-խմբերի մեթոդը մարքետինգային, գովազդային, քաղաքական և գործարար հետազոտությունների անբաժան մասն է կազմում: Սույն մեթոդի մշակումը 1940-ականներին սկսել են Կոլումբիական համալսարանի (ԱՄՆ) սոցիոլոգներն ու հոգեբանները, ովքեր այն անվանել են «խմբային ֆոկուսավորված խորքային հարցազրույց» (խմբային - որովհետև հարցազրույց են տալիս ոչ թե մեկ, այլ միանգամից մի քանի մարդ, և խորքային - քանի որ թույլ է տալիս բացահայտել մարդկանց խորքային, երբեմն հստակ չգիտակցվող համոզմունքներն ու դիրքորոշումները) [6]:

Հայտնի է նաև, որ «Ֆոկուս-խումբ» եզրույթը համառոտվել է «ֆոկուսավորված հարցազրույց» հասկացությունից, որն առաջարկել են Ռ. Մերտոնը և Պ. Քենդալը 1946 թվականին [9]: Ֆոկուս-խմբերի (անգլ. focus group interviews) մեթոդն իրենից ներկայացնում է ֆոկուսավորված (բառացի՝ մի կիզակետում հավաքված, այլ կերպ՝ կենտրոնացված) խորքային հարցազրույց մի շարք խմբային բանավեճերի ձևով, որոնց ընթացքում մասնակիցներին «ֆոկուսացնում» են հետազոտողին հետաքրքրող հարցերի վրա՝ նպատակ ունենալով նրանցից ստանալ սուբյեկտիվ տեղեկատվություն: Այս մեթոդի հիմնական առանձնահատկությունն այն է, որ խմբային քննարկման ժամանակ մասնակիցները հաղորդակցվում են իրենց նմանների հետ, որի հետևանքով հոգեբանական պատենշները (որոնք հարցարանային մեթոդներում սովորաբար ընկած են հետազոտողի և հարցվողի միջև) ավելի արդյունավետ են հաղթահարվում, իսկ հուզական հակազդումները (որոնք առօրյա կյանքում ազդում են ցանկացած մարդու վարքի վրա) շատ ավելի վառ կերպով են դրսևորվում [3, էջ 258]:

Ֆոկուս-խումբը այնպիսի մեթոդաբանություն է, որը հնարավորություն է ընձեռում ներթափանցելու մարդկանց վարքի մոտիվացիայի, նրանց սպասումների, հույսերի, ապրումների և անձնային փորձի առանձնահատկությունների խորքային շերտերը: Հետազոտության ազատ բնույթը հաճախ թույլ է տալիս ստանալ անկանխատեսելի արդյունք [4]: Այն թույլ է տալիս իմանալ, թե ի՞նչ են մտածում մարդիկ քննարկվող հիմնախնդրի վերաբերյալ, ինչու՞ են նրանք այդպես մտածում, ի՞նչ դրդապատճառներ են նրանց շարժում, ինչպե՞ս են նրանք արձագանքում ապրանքի այս կամ այն բնութագրերին, ինչպիսի՞ գործոններն (տեխնիկական պարամետրեր, գին, փաթեթավորում և այլն) են փաստացի ավելի շատ ազդում նրանց վրա տվյալ ապրանքը (և մրցակից ապրանքները) գնելիս, ինչու՞ են նրանք վստահում կոնկրետ մի գովազդին և չեն վստահում մյուսին, գնում են մի ապրանքը և չեն գնում մյուսները:

Արևմուտքում հայտնի ֆոկուս-խմբերի դասագրքի հեղինակ Տ. Գրինբաու-մի (1987) կարծիքով այս տիպի հետազոտությունները ներառում են չորս ընդ-հանուր տարր.

1. Միևնույն տեղում հավաքագրված մի քանի հարցվողների ներգրավում:
2. Մասնակիցների փոխազդեցություն: Եթե բազմաթիվ այլ տիպի հետազո-տություններում համարվում է, որ մասնակիցների միջև ցանկացած քննար-կում-բանավեճ խեղաթյուրում է պատասխանների մաքրությունը, ապա ֆո-կուս-խմբերի նիստերին մասնակցող սուբյեկտներին խրախուսում են փոխ-ներգործելու միմյանց հետ:
3. Քննարկման ամբողջ ընթացքն իրականացվում և վերահսկվում է արհես-տավարժ մոդերատորի (խմբավարի, բառացի՝ կարգավորող ու ուղղորդող) կողմից: Նա խմբային քննարկման ընթացքն ուղղորդում է նախնական փուլում առաջադրված նպատակներին համապատասխան:
4. Ֆոկուս-խմբերի մեթոդն անցկացնելիս օգտագործվում են նախապես մշակված սցենարներ: Եթե քանակական հետազոտությունում տեղեկատ-վություն հավաքելիս օգտագործվում է հստակ կառուցվածքավորված, ձևայնացված, ավարտուն գործիքակազմ, ապա սույն հետազոտությունում ուղեցույցը (հրահանգը) սովորաբար ունենում է հարաբերականորեն անա-վարտ ցուցումների տեսք: Դրա հիմնական նշանակությունը հիմնախնդրի վրա ֆոկուսավորելն է, որոշակի թեմայի վրա տրամադրելն ու կենտրոնաց-նելը: Միաժամանակ այն պետք է ինքնաբուխ արտահայտվելու հնարավո-րություն ընձեռի մասնակիցներին, ինչպես նաև ապահովի խմբի շարժըն-թացը [8]:

Եվս մեկ առանձնահատկություն դիտարկվում է այն, որ հետազոտություն-ների այս տեսակն իր նշանակությամբ տարբերվում է խմբային մյուս մեթոդնե-րից, օրինակ՝ դեյֆյան մեթոդից, «ուղեղային գրոհից» [1, էջ 131]: Վերջիններս ձևավորվում են փորձագետներից և միտված են համաձայնեցված որոշումների ու հանձնարարականների մշակմանը: Իսկ ֆոկուս-խմբերը նախատեսված են

այլ բանի համար. միտված են բացահայտելու ուսումնասիրվող հիմնախնդրի հետ կապված կարծիքները, փնտրելու մարդկանց՝ այս կամ այն ոլորտներում ցուցաբերվող վարքի բացատրություններ:

Ֆոկուս-խմբերի արդյունավետությունը որոշվում է այն բանով, որ մասնակիցները (կամ նրանց մեծ մասը) իրենց հարմարավետ են զգում, քանզի բանավեճում ներգրավված են որպես խմբի մաս: Մեթոդը ճիշտ կիրառելիս ավելի շատ նպաստավոր հնարավորություններ են ստեղծվում խորքային տեղեկատվություն ստանալու համար, քան անհատական հարցազրույցների դեպքում: Միաժամանակ խմբի շարժընթացը հնարավորություն է ընձեռում որոշելու խմբային ազդեցության նշանակությունը:

Խմբերի հետ փորձարարական աշխատանքի երեք հիմնական ուղղություններից երկուսը ավանդաբար համարվում են կիրառական, և միայն մեկը՝ գիտական: «Խմբային շարժընթաց» ընդհանրական անվանումով գիտական ուղղության հիմնադիրն ու ջատագովը համարվում է հոգեբան Կուրտ Լևինը: Նրա գիտափորձերի յուրահատկությունն այն էր, որ դրանցում հետազոտության միավորն ու օբյեկտը հանդիսանում էր խումբը՝ որպես ամբողջություն, այն դեպքում, երբ դրա կազմում ներգրավված անհատներն ու նրանց փոխհարաբերությունները դիտարկվում էին իբրև այդ ամբողջի տարրեր: Խմբային շարժընթացն ուսումնասիրող հետազոտությունների շրջանակում բացահայտվել են այնպիսի երևույթներ, ինչպիսիք են համախմբվածությունը, խմբային ճնշումը, առաջնորդությունը, խմբային որոշումների ընդունման գործընթացները և այլն: Հարկ է նշել, որ Լևինի և նրա հետևորդների բազում գիտափորձերը բավականին դաժան էին, երբեմն ընթանում էին բարոյագիտական թույլատրելի նորմերի սահմանագծին [6]: Այս տեսակետից խմբերի փորձարարական հոգեբանության ավանդույթն արմատապես տարբերվում է ֆոկուս-խմբերի հետազոտության ավանդույթներից, որի նպատակը հարցվողների «բնական» հակազդումների բացահայտումն է, առանց որևէ արտաքին ներգործության:

Ֆոկուս-խմբերի հետազոտության հաջողությունը, ինչպես նշվում է Յու. Ս. Կոլեսնիկովի (2001) խմբագրությամբ լույս տեսած «Կիրառական սոցիոլոգիա» ձեռնարկում, կախված է մի շարք մեթոդական և կազմակերպական գործոններից [5]: Դիտարկենք դրանցից առավել կարևորները.

Ֆոկուս-խմբերը նախապատրաստելիս, առաջին հերթին, մշակվում է հետազոտության ծրագիրը, որը ներառում է հիմնախնդրի հիմնավորումն ու ձևակերպումը, հետազոտության նպատակների, խնդիրների, օբյեկտի ու առարկայի որոշումը: Այստեղ վարկածներն առաջադրվում են միայն «սևագիր» վիճակում, այնուհետև ճշգրտվում են (ավարտուն բնույթ են ստանում) հետազոտության ընթացքում: Դա արվում է, որպեսզի նախապես ձևակերպված վարկածները չկանխորոշեն հիմնախնդրի ճանաչման գործընթացը: Օրինակ՝ գնում կատարելու վերաբերյալ մարդկանց որոշումը կապակցված է ինչպես անձնական պահանջմունքների, այնպես էլ իրադրային փոփոխականների հետ: Ամե-

նից հաճախ, հատկապես երբ խոսքը նոր ապրանքների մասին է, մենք ավելի շուտ բախվում ենք կոնսերվատիվ (մշտականության), քան հստակ արտահայտված երկրյուղման հետ, այդ պատճառով էլ վարկածները չեն «աշխատում»:

Հաջորդ գործոնն այն է, որ *այս մեթոդը չի ենթադրում հեղազուտական ընդարանքի կիրարկություն*, քանի որ դրա նշանակությունը երևույթը հասկանալու և նկարագրելու, և ոչ թե եզրակացությունները՝ ավելի մեծ սոցիալական հանրույթի վրա տարածելու մեջ է: Ֆոկուս-խմբերը ձևավորվում են մասնակիցների սոցիալ-ժողովրդագրական վիճակի չափիչների և նրանց սպառողական, էլեկտորալ ու վարքի այլ ձևերի ցուցանիշների հիման վրա: Այս պահանջներն առանձնահատուկ կարևոր են, քանի որ խմբերը ձևավորելիս թույլ տրվող սխալները բացասաբար են անդրադառնում հետազոտության արդյունքների վրա: Օրինակ՝ կարող է այնպես պատահել, որ նոր ապրանքի կամ գովազդային նոր գաղափարի լավ հայեցակարգը անհիմն կերպով մերժվի այն բանի համար, որ մասնակիցները պարզապես չեն պատկերացնում այն համակազմը, որն անհրաժեշտ գիտելիքներ, պատկերացումներ ունի կամ հետաքրքրված է քննարկվող առարկայի բնույթով: Այսպիսով, հարցվողներ ընտրելու հիմնական կանոնն այն է, որ որոշվեն ապրանքների կամ ծառայությունների նպատակային շուկայի համար հեռանկարային համարվող անձանց սոցիալական տիպերը: Օրինակ, եթե կազմակերպությունը մշակում է նոր արտադրանքի, ասենք՝ կոֆեինի նվազ պարունակությամբ սուրճի հայեցակարգ, ապա այս հետազոտության համար հարցվողների կազմում պարտադիր պետք է ներառվեն սուրճ սպառողները, այնուհետև, եթե հանգամանքները թույլ տան՝ նաև նոր արտադրանքով հետաքրքրված անձինք: Այսպիսի օրինակների շարքը կարելի է շարունակել: Ասենք, եթե հետազոտության խնդիրը նախընտրական պայքարում որոշ գաղափարների կենսունակությունը որոշելն է, ապա արդյունքներ ապահովելու համար անհրաժեշտ է ներգրավել ինչպես սոցիալական տարբեր խմբերին, այնպես էլ կուսակցության կամ թեկնածուի իրական և հավանական կողմնակիցներին:

Խմբերը ձևավորելու կարևորագույն սկզբունքը խմբերի համաձին (ազգակից, նույն ծագումն ունեցող) կազմության, միատարրության ապահովումն է: Այս կանոնը չպահպանելու դեպքում խմբի շարժընթացը կարող է էականորեն արգելակվել: Օրինակ՝ բանավեճում տղամարդկանց և կանանց մասնակցության բնույթն էապես տարբերվում է սեռային տարանջատում ունեցող և խառը խմբերում: Սա կապված է այն բանի հետ, որ որոշ մարդիկ չափազանց զգայունակ են հակառակ սեռի անձանց հակազդումների հանդեպ, այդ պատճառով էլ հաճախ ասում են ոչ այն, ինչ զգում են իրականում: Պատահում է նաև այնպես, որ կանանց ներկայությունը որոշ տղամարդկանց դրդում է խոսել մեծ ինքնավստահությամբ (ապլոմբով, այսպես կոչված «սիրամարգի էֆեկտով»), ինչը երբեմն նյարդայնացնում է մասնակիցներին: Իհարկե մեծ նշանակություն ունի նաև բանավեճի թեման: Այդ պատճառով էլ դժվար թե նպատակահարմար լինի

տղամարդկանց և կանանց ներառել մեկ խմբային հարցազրույցում, որը նվիրված լինի գարեջրի սպառմանը կամ, օրինակ՝ արդուզարդի պարագաներին, մաքրող և վնասող միջոցներին: Միաժամանակ փորձը ցույց է տալիս, որ սեռային տարանջատումն իմաստ չունի, երբ քննարկվում են մասնագիտական խնդիրներ: Դեռ ավելին, հայտնի է, որ կանայք, անկախ այն բանից, թե որ ուղրտում են աշխատում, հակառակ սեռի իրենց գործընկերների մասին արտահայտվում են առանց քաշվելու:

Տարբերակման պահանջը տարածվում է նաև սոցիալ-ժողովրդագրական այլ բնութագրերի վրա՝ տարիք, սեռ, կրթություն, բարեկեցության մակարդակ և այլն: Օրինակ՝ բարձրագույն կրթությամբ անձինք, որպես կանոն, հստակ են շարադրում իրենց տեսակետը և կարող են գերակշռել բանավեճում, այդ պատճառով էլ, երբ խոսքը գովազդային գործակալության առանձնահատկությունները քննարկելու մասին է, ապա ցանկալի է հարցվողներին զատել կախված կրթության մակարդակից: Միաժամանակ քննարկման մասնակիցների ընտրության չափանիշները չպետք է լինեն շատ կոնկրետ, քանի որ հավաքագրման չափազանց բարձր պահանջների պատճառով կարող են առաջանալ խնդիրներ: Այստեղ կրկին անգամ պետք է նշել, որ որոշիչ նշանակություն ունի բանավեճի առարկան, հենց դա է հիմնական տարբերիչ գործոնը:

Իդեալական ֆոկուս-խմբի չափը որոշելու համընդհանուր չափանիշներ գոյություն չունեն: Այնուամենայնիվ սույն բնագավառի մասնագետների մեծ մասը կարծում է, որ խմբի նպատակահարմար քանակությունը կազմում է 8-10 մարդ: Հենց այս թիվն է մի կողմից ապահովում հայացքների տարատեսակությունն ու փոխներգործության օգուտը, իսկ մյուս կողմից՝ չի խանգարում խմբի յուրաքանչյուր անդամին լիարժեք մասնակցելու քննարկմանը: Եթե 10 մարդուց ավելի լինի, ապա խմբավարը շատ կոժվարանա վերահսկել քննարկման ընթացքը, բանավեճը տանել անհրաժեշտ ուղղությամբ, խթանել խմբային արդյունավետ փոխներգործությունը: Արդյունքում որպես «ֆոկուս-խումբ» մտածված հետազոտությունը փոխակերպվում է խմբավարի և մասնակիցների միջև հարց ու պատասխանի: Սակավ արգասաբեր է նաև 8-ից պակաս մարդկանց մասնակցությունը: Նախ, գործնականորեն յուրաքանչյուր խմբում գտնվում է, ծայրահեղ դեպքում, մեկ մասնակից, ով փորձում է չափից շատ խոսել, բայց ոչ ըստ էության, և մյուս մասնակիցը, ով չափազանց ամաչկոտ է կամ վախվորած: Հետևաբար, եթե խնդիրները քննարկվեն 8 մարդուց պակաս կազմով, ապա մասնակիցների իրական թիվն այդքան էլ մեծ չի լինի (հնարավոր է՝ 4-5 հարցվող): Երկրորդ, ոչ մեծ խմբերի մասնակիցները, ըստ երևույթին, անգիտակցորեն հակված են հանդես գալու որպես փորձագետներ, և ոչ թե որպես միջին, տիպիկ սպառողներ, ովքեր հայտնում են իրենց անձնական զգացողությունների մասին: Այդ պատճառով, չափազանց կարևոր է հասնել յուրաքանչյուր մասնակցի կողմից այն բանի հասկացմանը, որ տվյալ հետազոտությունում առավել կարևոր է նրա սեփական կարծիքը:

Այնուամենայնիվ, գոյություն ունեն որոշ հանգամանքներ, որոնց դեպքում փոքր խմբեր ձևավորելն ավելի նպատակահարմար է: Օրինակ, եթե կան ոչ մեծ քանակությամբ համապատասխան հարցվողներ, որոնց անհրաժեշտ է միաբերելով հանդիպեցնել փոխներգործության համար, կամ, եթե նիստի օրակարգը սահմանափակված է և հնարավորություն չկա ներառելու անհրաժեշտ քանակով մասնակիցներ: Այսպիսի դեպքերում կարող են հավաքագրվել նաև 5-6-ից պակաս հարցվողներ այն պարզ պատճառով, որ խմբային բանավեճը կարող է իրականացվել ավելի սակավ ծախսերով և ավելի մեծ արդյունքով, քան մի շարք անհատական հարցազրույցները:

Որակական հետազոտություն պլանավորելիս առաջացող ամենակարևոր հարցերից մեկն էլ այն է, թե *ինչպիսի աշխարհագրական վայրերում անցկացնել ֆոկուս-խմբերը*: Սա կարևոր գործոն է ինչպես խմբերի քանակը որոշելու, այնպես էլ նախագծային ծախսերը հաշվարկելու համար: Մի քանի վայրերում ֆոկուս-խմբեր անցկացնելու նպատակը այն բանի ապահովագրումն է, որ ստացված տվյալները չեն հանդիսանում կոնկրետ տեղային խմբակցության յուրահատկության արտացոլումը:

Նույն պատճառներով, որոնցով մենք պետք է հետազոտությունում ներկայացնենք սոցիալ-ժողովրդագրական տարբեր շերտեր, տարածքային ցրումը (դիսպերսիան) հուսալի վերահսկում կամ ապահովագրում է, որը նպաստում է խմբերի բազմազանության բարձրացմանը: Ընդ որում՝ պետք է հիշել, որ որակական հետազոտությունում տվյալների համակարգված համադրում ըստ աշխարհագրական գործոնի՝ սովորաբար չի կատարվում, քանզի, եթե նույնիսկ այն իրականացվում է մի քանի վայրերով, միևնույն է չի կարող ներկայացնել ամբողջի յուրահատկությունը: Նույնիսկ, եթե տարածաշրջանային առանձնահատկություններն իսկապես դրսևորվում են, այնուհանդերձ դրանց պետք է զգուշավորությամբ վերաբերվել՝ իբրև հավանականության, և ոչ թե որպես ապացուցված փաստ: Այսպիսի զգուշավորությունը վերաբերում է ցանկացած փոփոխականներին, ներառյալ սեռն ու տարիքը:

Միայն այնտեղ, որտեղ սոցիոլոգիական կամ վիճակագրական հուսալի ցուցանիշները ծանրակշիռ հիմք են տալիս ենթադրելու, որ աշխարհագրական կետը տարբերությունների նշանակալից գործոն է, նպատակահարմար է փորձել կատարել համեմատություններ: Այսպես, օրինակ՝ միանգամայն ակնհայտ է, որ հայ-վրացական փոխհարաբերություններին, ատոմային անվտանգության և բնապահպանական խնդիրներին նվիրված ֆոկուս-խմբերի նիստերի ընթացքն ու առանձնահատկությունները լրիվ տարբեր կլինեն հայկական երկու տարբեր քաղաքներում՝ Ախալքալաքում և Գորիսում, քանի որ տեղաբնակների համար այդ հարցերի հրատապությունն էականորեն տարբեր է: Այսպիսով, աշխարհագրական ներկայացվածությունը նպատակահարմար է դիտարկել իբրև բազմազանության հասնելու լրացուցիչ միջոց, և ոչ թե որպես համակարգված համեմատությունների գործիք:

Կարևոր խնդիր է նաև ֆոկլուս-խմբերի քանակի որոշումը: Իհարկե հաշվի են առնվում նաև ֆինանսական հնարավորությունները, բայց չկան օբյեկտիվ չափանշվածքներ, որոնցով հնարավոր լինի չափել որակական մեթոդների համարժեքությունը: Այդ պատճառով էլ հետազոտողը ֆոկլուս-խմբերի քանակի վերաբերյալ որոշում կայացնելիս զգալիորեն հենվում է փորձի, հեղինակավոր կարծիքների և ներըմբռնողության վրա: Այս գործոնը կախված է այն փոփոխականների քանակից, որոնք մենք ցանկանում ենք վերլուծել: Եթե պլանավորվում է համեմատել տարիքի, սեռի և եկամտի դերը, ապա անհրաժեշտ է խմբերի շոշափելի մեծ քանակություն: Սակայն, ինչպես ցույց է տալիս փորձը, այս դեպքում յուրաքանչյուր հաջորդող նիստի արգասիքը նվազում է: Մասնագետները ենթադրում են, որ խնդիրների մեծամասնությունը կարող է դիտարկվել 6-8 խմբերում: Խորհուրդ է չի տրվում անցկացնել նույն թեմային նվիրված տասից ավելի նիստեր, քանի որ լրացուցիչ խմբերը հազվադեպ են ինչ-որ նոր բան ավելացնում: Բացի այդ, նմանատիպ հետազոտությունների համար պահանջվող ծախսերն ու ժամանակը միտում ունեն նվազեցնելու որակական հետազոտության որոշ առավելություններ, ընդ որում՝ ստացվող արդյունքը վիճակագրորեն ավելի հավաստի չեն դարձնում:

Եվ, վերջապես, ֆոկլուս-խմբերի նիստին նախապատրաստվելու ոչ պակաս կարևոր մասը *տրեսնիկական հազեցվածությունն է:* Դրա համար պահանջվում է համապատասխան տարածք (տաղավար), ցանկալի է կլոր կամ ձվածրակերպ սեղանով: Որպես կանոն, խթանիչ նյութերն ապահովվելուց զատ, իրականացվում է նաև բանավեճի տեսագրում և ձայնագրում:

Հարցվողներին բանավեճի սենյակում տեղաբաշխելուց հետո իր լիազորություններն է ստանձնում ֆոկլուս-խմբային նիստի գլխավոր դեմքը՝ մոդերատորը: Ֆոկլուս-խմբում մոդերատորը չպետք է հանդես գա բանավեճը վարողի, «դեկլարարի» դերում, այլ պետք է լինի այն անձը, ով օժանդակում է դրա ընթացքին: Նա պետք է լինի լավ հաղորդակցվող, ընկալունակ, արագորեն հասնի հարցվողների հետ փոխհասկացվածության, կարողանա լսել նրանց, հստակ կողմնորոշվել քննարկման ընթացքում, ունենա լավ հիշողություն: Նա պարտավոր է լավ իրազեկ լինել բանավիճվող թեմային, բայց ամենագետի տեսք չունենա, այլապես մասնակիցները նրան կընկալեն որպես փորձագետ: Նրա տեղեկացվածությունը չպետք է լրջորեն տարբերվի հարցվողների ունեցած գիտելիքների շրջանակից: Բացի այդ՝ մոդերատորը պետք է գտնի այն ոճը, որն ամենից շատ է իրեն համապատասխանում: Դա կարող է լինել վարման լուրջ կերպը կամ, ընդհակառակը, ուրախ և անկաշկանդ՝ ավելի ազատական: Այնուհանդերձ, գոյություն ունեն վարման մի շարք անթույլատրելի ոճեր, որոնք կարող են վարկաբեկել մոդերատորի աշխատանքը և իջեցնել հետազոտության որակը: Դրանց թվին են դասվում մոդերատորների հետևյալ տիպերը. հեղինակավոր, վախեցնող, «լսելու անընդունակ», «դերասան», շփոթված, ամենաթող (թողտվություն) և այլն:

Արդյունքների վերլուծության հիմնական ուրվագիծը ենթադրում է առաջնային տվյալների, հիմնավորումների ձևակերպում և բացատրություն: Առաջին փուլում վերլուծվում են տեսաձայնային նյութերը, բանավեճերի սղագրությունները, խմբավարների հաշվետվությունները: Այնուհետև անցկացվում է կոնտենտ վերլուծություն, խմբավորվում է հավաքված նյութը և ընտրվում են հիմնախնդրի վերաբերյալ անցկացված բոլոր բանավեճերում քննարկման ընթացքը բնութագրող առավել նշանակալից կատեգորիաները՝ ապրանքների և ֆիրմաների անվանումները, առանցքային բառերը, գնահատականները և այլն: Եվ, վերջապես, ընդհանրացվում ու մեկնաբանվում են ստացված տվյալները, դուրս բերվում եզրակացություններ և հանձնարարականներ:

Այսպիսով, ընդհանրացնելով նշված առավել կարևոր գործոնների շարքը, կարող ենք եզրահանգել, որ Ֆոկուս-խմբերի մեթոդը դասվում է հետազոտության որակական կամ «ճկուն» մեթոդների շարքին, որոնք ենթադրում են խորքային պատասխանների ստացում: Այն ուղղված է ոչ թե որակական արդյունքներին, այլ այն բանին, որպեսզի որոշի մարդկանց այս կամ այն գործողությունների խորքային պատճառներն ու դրդապատճառները, բացահայտի առաջադրված հիմնախնդրի հանդեպ նրանց վերաբերմունքը: Տվյալ մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ բացի փաստացի նյութի վերլուծությունից, որը նշվում է մասնակիցների տարաբնույթ արտահայտություններում, այստեղ օգտագործվում է նաև ոչ վերբալ վարքի վերլուծությունը (արտահայտչական շարժումները, ժեստերը, պանտոմիմիկան):

Ստացվող արդյունքների որակը կախված է բազմաթիվ գործոններից՝ հետազոտության մշակված պլանից, սցենարից, հետազոտողների մասնագիտական պատրաստվածությունից, խմբավարից (մոդերատորից՝ ֆոկուս-խմբերը վարողից), խմբային բանավեճերի մասնակիցների ընտրության համար առանձնացված չափանիշներից, մասնակիցների քանակից, բանավեճի անցկացման վայրի կազմակերպումից, վերլուծաբանի կարողություններից և այլն: Թեպետ այս մեթոդի օգնությամբ ստացված տվյալները վիճակագրական հիմնավորում չունեն, սուբյեկտիվ են և բնութագրում են հարցվողների հոգեբանությունը, այնուհանդերձ այս տվյալները կարող են լինել շատ օգտակար, քանզի թույլ են տալիս իրական սպառողներից ստանալ հետադարձ կապ, լսել նրանց ձայնը, իմանալ նրանց կարծիքներն ու այս կամ այն արտադրանքի, ծառայության, գովազդային նյութի հանդեպ հնարավոր հակազդումները, բացահայտել նոր հիմնախնդիրներ, կանխատեսել զարգացման հեռանկարներն ու ընդհանուր տեսլականը և առաջադրել վարկածներ հետագա հետազոտությունների համար:

Գրականություն

1. **Ավանեսյան Հ. Մ.** Փորձարարական հոգեբանություն: Ուսումնական ձեռնարկ / Հ. Մ. Ավանեսյան: - Եր., Էդիթ Պրինտ, 2010, 288 էջ:

2. **Белановский С. А.** Метод фокус-групп. - М.: Издательство Магистр, 1996, 272 с.
3. Большой психологический словарь. - М.: Прайм-ЕВРОЗНАК. Под ред. **Б. Г. Мещерякова**, акад. В. П. Зинченко, 2003, с. 258.
4. **Дмитриева Е. В.** Метод фокус-групп: проблемы подготовки, проведения, анализа // Социологические исследования. 1999. № 8, с. 133-138.
5. Прикладная социология: Учеб. пособие / Под ред. **Ю. С. Колесникова**, Ростов н/Д.: Феникс, 2001, с. 150-167.
6. Курс: Фокус-группы в контексте методов эмпирической социологии, hшшшўtўjћ ħ 10.03.2018. - <http://www.madrace.ru/metod-fokus-grupp/kurs-fokus-gruppi-v-kontekste-metodov-empiricheskoy-sotsiologii/vse-stranitsi>
7. **Солсо Р. Л.** Экспериментальная психология: практич. курс / Р. Л. Солсо, Х. Х. Джонсон, Н. К. Бил, СПб., 2002, с. 54-55.
8. **Greenbaum, T.** (1987) The practical Handbook and Guide to Focus Group Research. Lexington, Mass.: Lexington Books.
9. **Robert K. Merton, Patricia Kendall,** (1946) "The Focused Interview", American Journal of Sociology, 51.6, p. 541-557.

ПРИМЕНЕНИЕ МЕТОДА ФОКУС-ГРУПП В ПСИХОЛОГИЧЕСКИХ ЭМПИРИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЯХ

Оганесян С. В. (ЕГУ, Ереван, Армения)

В данной статье обсуждаются проблемы психологического эмпирического исследования, в частности, возможности внедрения метода фокус-групп в рамках базовых техник экспериментальных исследований.

Акцентируется тот факт, что на нынешнем этапе научного познания с целью исследования ряда проблем, наряду с существующими в экспериментальной психологии основными методами, используются также частные научно-исследовательские методы, заимствованные из других наук. И поскольку в ряду подобных методов особо важным рассматривается метод фокус-групп, который постепенно начинает активно использоваться в психологических исследованиях, была предпринята попытка детально представить методологию применения этого метода.

Ключевые слова: *метод фокус-групп, эмпирическое исследование, методология, глубинное интервью, качественное исследование, контент анализ.*

APPLICATION OF THE FOCUS GROUP METHOD IN PSYCHOLOGICAL EMPIRICAL RESEARCHES

Hovhannisyan S. V. (YSU, Yerevan, Armenia)

This article discusses one of the key issues of the psychological empirical research, specifically the possibilities of introducing the focus group method within the experimental research basic techniques.

A fact is emphasized that, for researching separate issues in the contemporary phase of scientific knowledge, partial research methods are also combined with the special methods applied in empirical psychology, which are borrowed from other sciences. And since, among similar methods, the focus-group method progressively gaining an active use in psychological research is specially highlighted, an attempt has been made to detailedly introduce its application methodology.

Key words: *focus-group method, empirical research, methodology, in-depth interview, qualitative research, content analysis.*

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐՔԻ ԴՐՂԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Սարգսյան Լ.Ս. (ԵՊՀ, Երևան, Հայաստան)

lianargasyan@ysu.am

Հոդվածում քննարկվում են հայ երիտասարդների սպառողական վարքի դրդապատճառների ուսումնասիրության արդյունքները: Ներկայացվում է սպառողական դրդապատճառների հետազոտման համար ստեղծված հարցարանի մշակման ընթացքը, վերլուծվում և մեկնաբանվում են երիտասարդների սպառողական դրդապատճառների արտահայտվածության առանձնահատկությունները: Իրականացրած հետազոտության համաձայն երիտասարդների սպառողական վարքն առաջին հերթին ուղղորդվում է ներքին ուղղվածություն ունեցող դրդապատճառներով: Իսկ արտաքին ուղղվածություն ունեցող դրդապատճառները համեմատաբար ավելի քիչ են մասնակցում սպառման իրավիճակներում անձի վարքային դրսևորումներին:

Հանգուցային բառեր. սպառողական վարք, դրդապատճառ, սպառողական դրդապատճառներ:

Ամբողջ աշխարհում, այդ թվում Հայաստանում շուկայական տնտեսական համակարգի ինտենսիվ զարգացումը ստեղծում է շուկայում ներգրավված օբյեկտների և սուբյեկտների միջև փոխհարաբերությունների բարդ համակարգ: Երիտասարդները, լինելով հասարակության մեծ սոցիալական խումբ և երկրի տնտեսության ապագան, հանդիսանում են ապրանքների և ծառայությունների ակտիվ սպառողներից մեկը՝ դրանով իսկ ազդեցություն ունենալով տնտեսական համակարգի վրա: Ուստի երիտասարդների սպառողական վարքը պայմանավորող դրդապատճառների ուսումնասիրությունը հանդիսանում է բազմաթիվ գիտակարգերի մշտապես արդիական և նշանակալի հիմնախնդիրներից մեկը:

«Դրդապատճառը (լատ. movere՝ շարժման մեջ դնել, հրել) գիտակցական գործողություններին և արարքներին դրդող և դրանց համար հիմք ծառայող բարդ հոգեբանական գոյացություններ են» [4, էջ 344]: Դրդապատճառները, ընկած լինելով անձի ակտիվության հիմքում, դրդում և ուղղորդում են վարքը: Դրանք փոփոխական են և ճկուն, կարող են փոխվել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոնների ազդեցությամբ:

Սպառման տեսանկյունից մոտիվացիայի ուսումնասիրումը ամենապարզ կերպով ուղղված է պատասխանելու այն հարցին, թե «ինչո՞ւ են մարդիկ գնում այս կամ ապրանքները»: Սպառողական վարքի դրդապատճառների ուսումնասիրումը ուղղված է լուծելու երեք հիմնական խնդիրներ: Առաջին հերթին,

դրդապատճառները մեծ դեր են խաղում սպառողներին համապատասխան այն ապրանքների մշակումը և առաջարկը կազմակերպելիս, որոնք կբարարարեն նրանց բազմաթիվ պահանջմունքները: Երկրորդ հերթին, դրդապատճառները սպառողների բավարարվածությունը հասկանալու և վերահսկելու միջոց են: Եվ վերջապես, դրդապատճառների դուրսբերումը և դասակարգումը սպառողների որոշման ընդունման գործընթացը հասկանալու հիմնական տարրերից է հանդիսանում:

Հանդիսանալով սպառողական վարքի մեկնաբանման ֆունդամենտալ հիմնախնդիրներից մեկը՝ սպառողական վարքի դրդապատճառների կամ սպառողական դրդապատճառների ուսումնասիրությունը մի շարք դժվարություններ է պարունակում: Ինչպես ցույց է տալիս գրականության վերլուծությունը, ապրանքների և ծառայությունների ոլորտում սպառողների վարքի դրդապատճառները և, առհասարակ, մոտիվացիայի հիմնախնդիրը հանդիսանում է հիմնականում մարքեթինգի ուսումնասիրման առարկա, որտեղ նման ուսումնասիրությունները գլխավորապես հետապնդում են գործնական նպատակ, ինչից կախված օգտագործվում են հոգեբանության տեսական և մեթոդոլոգիական տարբեր կոնստրուկտներ [1, 2, 7]: Իսկ հոգեբանության մեջ սպառողական վարքի մոտիվացիայի ուսումնասիրությունները հիմնականում ներկայացված են զովագրի հոգեբանության և տնտեսական հոգեբանության շրջանակներում, որոնք սահմանափակվում են հոգեբանության ընդհանուր օրինաչափությունները սպառողական վարքի ոլորտ տեղափոխելով [3, 5]: Նման իրադրությունը վկայում է շուկայում մարդու վարքը պայմանավորող գործոնների ամբողջական վերլուծության համար նախատեսված տեսական հայեցակարգի բացակայության մասին:

Դրդապատճառների ուսումնասիրման մյուս դժվարությունը կայանում է սպառողական վարքի դրդապատճառների ուսումնասիրման համար նախատեսված գործիքների բացակայության մեջ: Այս ամենը որոշակի խոչընդոտներ է առաջացնում սպառողական վարքի դրդապատճառների ուսումնասիրման համար:

Տվյալ հոդվածում ներկայացված հետազոտության նպատակն է եղել ուսումնասիրել հայ երիտասարդների սպառողական վարքը պայմանավորող դրդապատճառների արտահայտվածությունը՝ սպառողական դրդապատճառների ուսումնասիրման համար նախատեսված հարցարան մշակելու միջոցով:

Հարցարանի մշակման համար հիմք է հանդիսացել ամերիկյան հետազոտող Ուիլիամ Մաքգուայերի կողմից մշակված դրդապատճառների տեսությունը [8]: Մաքգուայերը առաջարկել է դրդապատճառների դասակարգման համակարգ, որում ներկայացվում է դրդապատճառների ավելի մանրակրկիտ հավաք՝ սպառողական վարքի տարատեսակ դրսևորումները դիտարկելու համար: Այս մոտեցումը նկարագրում է սպառման հետ կապված

տասնվեց դրդապատճառ, որոնք նախ խմբավորվում են չորս հիմնական կատեգորիաների մեջ՝ ելնելով հետևյալ երկու չափանիշներից՝

- մոտիվացիան կոգնիտիվ է, թե՛ աֆեկտիվ. կոգնիտիվ դրդապատճառները կենտրոնանում են այն պահանջմունքների վրա, որոնց միջոցով անձը փորձում է ապահովել և պահպանել աշխարհի մասին կազմակերպված և կայուն, հաջորդական պատկերացումները: Աֆեկտիվ դրդապատճառները գործ ունեն այն պահանջմունքների հետ, որոնց միջոցով մարդը կրճատում է կամ խուսափում է ցանկացած լարվածությունից՝ բավարարվածության զգացում ձեռք բերելու և նպատակներին հասնելու համար:
- մոտիվացիան կենտրոնանում է անձի կայուն վիճակների պահպանման, թե՛ անձնային աճի վրա. պահպանողական դրդապատճառները ուղղված են բալանսի պահանջմանը: Աճի դրդապատճառները կապված են անձի զարգացման հետ:

Այս չորս խմբերի դրդապատճառները հետագայում ենթաբաժանվում են ըստ մոտիվացիայի աղբյուրի և նպատակի.

- ըստ մոտիվացիայի աղբյուրի՝ ակտիվ և պասիվ. արդյոք վարքը ակտիվորեն (պրոակտիվ) է նախաձեռնված, թե ծագել է միջավայրին ի պատասխան (տարբերությունը այն դրդապատճառների միջև, որոնք առաջացել են ակտիվորեն, ինտերնալ կերպով, և նրանց, որոնք առաջացել են պասիվորեն՝ որպես հանգամանքներին ի պատասխան):
- ըստ մոտիվացիայի նպատակի՝ ներքին և արտաքին: Այսինքն, դրսևորած վարքը օգնում է մարդուն ձեռք բերել նոր ներքին (ինտերնալ) վիճակ, թե նոր արտաքին (էքստերնալ) վիճակի՝ միջավայրի հետ նոր հարաբերության ձեռքբերմանը (արդյունքները անհատական են, թե կենտրոնացած են միջավայրի վրա) [նույն տեղում, էջ 316]:

Աղյուսակ 1-ում ներկայացված են տասնվեց դրդապատճառները՝ ըստ առանձնացված կատեգորիաների.

Աղյուսակ 1. *Ու. Մաքգուայերի կողմից դասակարգված 16 դրդապատճառները*

		Ակտիվ (Active)		Պասիվ (Passive)	
		Ներքին (Internal)	Արտաքին (External)	Ներքին (Internal)	Արտաքին (External)
Գոգնիտիվ (Cognitive)	Պահպանում (Preservation)	Կայունություն (Consistency)	Ատրիբուցիա (Attribution)	Դասակարգում (Categorization)	Օբյեկտիվացիա (Objectification)
	Աճ (Growth)	Ինքնուրու- նություն (Autonomy)	Ստիմուլյացիա (Stimulation)	Թելեոլոգիա- կան (Teleological)	Ուտիլիտար (Utilitarian)
Աֆֆեկտիվ (Affective)	Պահպանում (Preservation)	Լարվածության նվազում (Tension Reduc- tion)	Ինքնարտա- հայտում (Expressive)	Ինքնապաշտ- պանություն (Ego-defensive)	Ամրապնդում (Reinforcement)
	Աճ (Growth)	Ինքնահաս- տատում (Assertion)	Պատկանե- լիություն (Affiliation)	Նույնականա- ցում (Identification)	Մոդելավորում (Modeling)

Մշակված հարցարանը թույլ է տալիս դուրս բերել այդ մոտեցմամբ առանձնացված 16 դրդապատճառների արտահայտվածությունը: Այն բաղկացած է 48 պնդումներից, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանում է 16 դրդապատճառներից որևէ մեկին: Հարցարանի պնդումները մշակվել են յուրաքանչյուր դրդապատճառի բնութագրման վրա հիմնվելով:

Հարցարանի մշական համար անցկացվել է պիլոտային հետազոտություն, որին մասնակցել են 18-ից 30 տարեկան 50 երիտասարդներ: Հարցարանի հուսալիության գնահատումը իրականացվել է Կրոնբախի ալֆայի գործակցի հաշվարկման միջոցով: Տվյալ գործակիցը հանդիսանում է հուսալիության գնահատական, որը հիմնվում է սանդղակի հոմոգենության կամ նույն կոնստրուկտին տրված պատասխանների միջև կորելյացիաների գումարի վրա:

Սովորաբար α Կրոնբախի 0.70 և բարձր գործակիցները համարվում են բավարար՝ սանդղակի հուսալի լինելու մասին խոսելու համար: Այնուամենայնիվ, հետազոտական նպատակներով կիրառվող սանդղակների հուսալիության գործակիցները կարող են լինել ավելի ցածր: Մեր դեպքում, դրդապատճառների որոշ սանդղակների համար ստացված գործակիցները եղել են ցածր 0.70-ից, սակայն շատ մոտ են ընդունված միավորին: Բացի այդ հարկավոր է նշել, որ «ոչ մեծ ընտրանքների դեպքում հուսալիության գնահատումը նշանակալիորեն պայմանավորված է ընտրանքի համասեռության հետ» [6, էջ 148]: Մասնավորապես, որքան տարասեռ է ընտրանքը չափվող կոնստրուկտի նկատմամբ, այնքան ավելի բարձր է հուսալիության գործակիցը: Տվյալ դեպքում ընտրանքը համասեռ էր (կազմված էր միայն երիտասարդներից), ինչը բացատրում է որոշ սանդղակների հուսալիության համեմատաբար ցածր գործակիցները:


Հուսալիության տեսանկյունից ամենբարձր ցուցանիշով օժտված էր ինքնուրույնության դրդապատճառի սանդղակը (0.84): Տվյալ հարցարանի մյուս

սանդղակները ունեն տվյալ ընտրանքի համար թույլատրելի բավարար ցուցանիշներ: Պիլոտային հետազոտության փուլում կրճատվել են նաև որոշ հարցեր (նախնական հարցարանը բաղկացած է եղել 64 պնդումներից): Յուրաքանչյուր դրդապատճառից հանվել է մեկական հարց, որի դեպքում սանդղակների հուսալիությունը ավելի կբարձրանար: Ինչպես նաև խմբագրվել և վերաձևակերպվել են հարցարանի որոշ պնդումներ՝ պիլոտային հետազոտությանը մասնակցած հարցվողների դիտարկումների հիման վրա:

Հետազոտության հիմնական փուլում իրականացվել է երիտասարդների սպառողական վարքի դրդապատճառների ուսումնասիրություն և վերլուծություն:

Հետազոտության ընտրանքը կազմել են ՀՀ 18-ից 30 տարեկան երիտասարդներ: Հետազոտության ընտրանքի ծավալը սահմանվել է 400 անձ (ար.՝ 182, իգ.՝ 218):

Նկար 1-ում ներկայացված են սպառողական վարքի դրդապատճառների միջին ցուցանիշները: Ամբողջ ընտրանքի համար դուրս բերված սպառողական վարքի դրդապատճառների միջին ցուցանիշները ցույց են տալիս երիտասարդների շրջանում տարբեր դրդապատճառների արտահայտվածության մակարդակները: Նկար 1-ից երևում է, որ առաջնահերթությամբ արտահայտված առաջին հինգ դրդապատճառներն են նույնականացման, ինքնապաշտպանության, սփիմույացիայի, ինքնորոշության և թելեղոգիական դրդապատճառները:



Նկար 1. Երիտասարդների սպառողական վարքի դրդապատճառների արտահայտվածությունը

Այսինքն, առաջարկվող 16 դրդապատճառներից երիտասարդներն ավելի հաճախ ամենաբարձրն են գնահատել հենց այս դրդապատճառները: Նույնականացման բարձր ցուցանիշը խոսում է այն մասին, որ իրենց

կատարած գնումների միջոցով երիտասարդները փորձում են ընդլայնել սեփական անձի մասին պատկերացումները և իրենց «Ես»-ը դիտարկել տարբեր կողմերից: Նույնականացման դրդապատճառը դասվում է անձի աճը ապահովող դրդապատճառներին, ինչը հնարավորություն է տալիս երիտասարդ սպառողներին ներկայանալ նորովի, նոր տեսանկյունից, կատարած գնումների միջոցով փորձարկել նոր դերեր: Այստեղ կարևոր է նշել, որ նույնականացումը, ըստ մոտեցման, ներքին դրդապատճառ է, այսինքն, նորովի ներկայանալը և նոր դերեր իրականացնելը ուղղված են առաջին հերթին սեփական անձին, այլ ոչ թե իրականանում են արտաքին միջավայրի համար: Ինքնապաշտպանության դրդապատճառը նույնպես ներքին դրդապատճառ է, որն ուղղված է ապահովելու սպառողի պաշտպանվածության զգացումը՝ ապահով և անվնաս գնումներին նախապատվություն տալու միջոցով: Ստիմուլյացիայի դրդապատճառի բարձր լինելը, կարծում ենք, պայմանավորված է հետազոտվողների տարիքային առանձնահատկություններով: Բազմազանության որոնումը, չփորձարկված ապրանքեր գնելը, ապրանքներն ընտրելու նախասիրությունների հաճախակի փոփոխությունները հանդիսանում են երիտասարդներին բնորոշ վարքային պատերններ, քանի որ այդ տարիքում նրանք դեռ չեն հասցրել ձևավորել համեմատաբար կայուն սպառողական նախասիրություններ: Ինչ վերաբերում է ինքնուրույնության և թելեյոլոգիական դրդապատճառներին, ապա դրանք երկուսն էլ կոգնիտիվ հիմքով դասակարգվող աճի դրդապատճառներ են, կրկին ներքին ուղղվածությամբ: Երիտասարդների սպառողական վարքում ինքնուրույնության դրդապատճառն արտահայտվում է սեփական անկախությունը, յուրահատկությունը և ինքնատիպությունը խորհրդանշող ապրանքներն ընտրելով: Թելեյոլոգիական (կամ նպատակահարմարության) դրդապատճառն արտահայտում է սպառողական վարքի նպատակորեն կազմակերպված լինելու բնույթը: Այսինքն, տվյալ դրդապատճառը օգնում է սպառողներին կազմակերպել իրենց վարքն այնպես, որ սպառման իրավիճակներում այն հնարավոր լինի փոխել և ուղղել առաջացած պահանջմունքների բավարարմանը:

Միջին արտահայտվածություն ունեն ուտիլիտար, դասակարգման, լարվածության նվազման, ատրիբուցիայի և կայունության դրդապատճառները:

Հետաքրքրական է, որ այն դրդապատճառները, որոնք ունեն արտաքին ուղղվածություն (մոդելավորում, պատկանելիություն, օբյեկտիվացիա, ինքնարտահայտում, ամրապնդում և այլն) երիտասարդների սպառողական վարքի հիմքում ընկած դրդապատճառներից ամենաթույլ արտահայտվածներն են: Դրանցից օբյեկտիվացիան, ինքնարտահայտումը, նաև ինքնահաստատումը ուղղված են դրսևորված սպառողական վարքի և կատարած գնումների միջոցով շրջապատող մարդկանց սեփական անձի մասին տեղեկություն հաղորդելուն: Այդ դրդապատճառների միջոցով մարդը փորձում է ցույց տալ իր ինքնությունը, իմիջը, կենսակերպը, ուժը՝ փորձելով նաև հիացմունք առաջաց-

նել շրջապատի մոտ: Իսկ պատկանելիության և մոդելավորման դրդապատճառներն ուղղված են գնումների միջոցով մի կողմից խմբային պատկանելիությունն ամրապնդելուն, խմբի կողմից ընդունված լինելուն, իսկ մյուս կողմից, ընդհանրապես, մարդկանց մեծամասնության կողմից իրականացվող վարքը կրկնելուն:

Այսպիսով, դրդապատճառների արտահայտվածության արդյունքները ցույց են տալիս, որ երիտասարդների կողմից իրականացվող սպառողական վարքի հիմքում կարող են ընկած լինել տարատեսակ դրդապատճառներ: Այնուամենայնիվ, կարող ենք նկատել, որ սպառման արտահայտված դրդապատճառները բնորոշվում են իրենց ներքին ուղղվածությամբ: Դա նշանակում է, որ երիտասարդների կողմից իրականացվող սպառողական վարքի արդյունքները անհատական են, ուղղված են սեփական անձի ներքին վիճակների բավարարմանը: Դրան հակառակ, արտաքին դրդապատճառներով պայմանավորվող սպառողական վարքային բնորոշումները գնահատվել են ավելի ցածր:

Սպառման դրդապատճառների ավելի խորքային վերլուծության համար դիտարկվել է դրդապատճառների պայմանավորվածությունը երիտասարդների տարիքով և սեռով պայմանավորված: Տարիքի ազդեցությունը պարզելու համար կիրառվել է գծային ռեգրեսիայի (linear regression) մեթոդը, որտեղ դրդապատճառները, համապատասխանաբար, դիտարկվել են որպես կախյալ փոփոխականներ, իսկ տարիքը՝ անկախ, կանխորոշիչ փոփոխական: Դուրս բերված ռեգրեսիոն վերլուծության մոդելը ցույց տվեց, որ դրդապատճառներից միայն ինքնահաստատման դրդապատճառն էր փոխվում՝ պայմանավորված տարիքով (ռեգրեսիայի գործակիցը՝ $\beta = -0.34$, $p \leq 0.05$): Ընդ որում, այդ պայմանավորվածությունը կրում է բացասական փոխկապվածության բնույթ, ինչը նշանակում է, որ որքան ավելի մեծ է երիտասարդի տարիքը, այնքան ավելի ցածր է նրա վարքում դրսևորվում ինքնահաստատման դրդապատճառը, և հակառակը:

Հետազոտվողների դրդապատճառների արտահայտվածության t-թեստի համեմատական վերլուծությունը նշանակալի տարբերություններ դուրս չի բերել արական և իգական սեռի երիտասարդների միջև:

Այսպիսով, դրդապատճառների ուսումնասիրման հարցարանը հնարավորություն տվեց ի հայտ բերել երիտասարդների սպառողական վարքի դրդապատճառները: Դրդապատճառների վերլուծությունը ցույց տվեց, որ երիտասարդների վարքը սպառման համատեքստում ուղղորդվում է առաջին հերթին ներքին ուղղվածությամբ և անձի աճն ապահովող դրդապատճառներով (թե՛ կոզնիտիվ, թե՛ աֆեկտիվ): Իսկ արտաքին ուղղվածություն ունեցող դրդապատճառները համեմատաբար ավելի քիչ են մասնակցում սպառման իրավիճակներում անձի վարքային դրսևորումներին:

Իհարկե ներկայացված հետազոտությամբ դուրս ենք բերել սպառողական վարքի դրդապատճառների ընդհանուր պատկերը: Սակայն, նկարագրված

դրդապատճառները կարելի է նաև տարբեր տեսանկյուններից դիտարկել և վերլուծել: Այս իմաստով ներկայացված սպառման յուրաքանչյուր դրդապատճառ առանձին ուսումնասիրման կարիք ունի, ինչն էլ պայմանավորում է այս ուղղությամբ շարունակական հետազոտությունների անհրաժեշտությունը:

Գրականություն

1. **Алешина И. В.** Поведение потребителей. Москва: Экономистъ, 2006, 525 с.
2. **Блэкуэлл Р. Д., Миниард, П. У., Энджел, Д. Ф.** Поведение потребителей-10-е изд. СПб.: Питер, 2007, 944 с.
3. **Дейнека О. С.** Экономическая психология: Учебное пособие. СПб: Изд-во С-Петербурга. ун-та, 2000, 160 с.
4. **Ильин Е. П.** Мотивация и мотивы. — СПб.: Питер, 2002, 512 с.
5. **Лебедев-Любимов А. Н.** Психология рекламы. СПб.: «Питер», 2002, 368с.
6. **Фер Р. М., Бакарак В. Р.** Психометрика: /под ред Н. А. Батурина, Е. В. Эйдмана. Челябинск, ЮурГУ, 2010, 445 с.
7. **Hawkins, D. I., Mothersbaugh, D. L.** Consumer behavior: building marketing strategy. -11th edition, NY, McGraw-Hill Irwin, 2010, 778 p.
8. **McGuire, W. J.** Some internal psychological factors influencing consumer choice. Journal of Consumer research, 2(4), 1976, 302-319 pp.

МОТИВЫ ПОТРЕБИТЕЛЬСКОГО ПОВЕДЕНИЯ АРМЯНСКОЙ МОЛОДЕЖИ

Саргсян Л. С. (ЕГУ, Ереван, Армения)

В статье обсуждаются результаты исследования мотивов потребительского поведения армянской молодежи. Представлен процесс создания опросника для выявления потребительских мотивов. Анализируются и интерпретируются особенности выраженности потребительских мотивов у молодежи. Согласно исследованию, потребительское поведение молодежи в первую очередь направляется внутренне ориентированными мотивами. А в потребительских ситуациях внешне ориентированные мотивы в поведении личности принимают участие относительно мало.

Ключевые слова: *потребительское поведение, мотив, потребительские мотивы.*

MOTIVES OF CONSUMER BEHAVIOR AMONG ARMENIAN YOUNG ADULTS

Sargsyan L. S. (YSU, Yerevan, Armenia)

The article discusses the results of the research of Armenian young adults' motives of consumer behavior. The process of developing a questionnaire for identifying consumer motives is presented. The peculiarities of consumer motives' expression among young people are analyzed and interpreted. According to the study, the consumer behavior of young adults is primarily directed by internally oriented motives. Though, in consumption situations externally oriented motives are less involved in the behavior.

Keywords: *consumer behavior, motive, consumption motives.*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

ԱՎԱՆԵՍՅԱՆ Հ. Մ. «ԱՐԴԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»-Ը՝ ԳԻՏԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԹԱԿ.....3

АВАНЕСЯН Г. М. “АКТУАЛЬНАЯ ПСИХОЛОГИЯ” - СОВРЕМЕННАЯ ПЛАТФОРМА ПУБЛИЧНОГО ПРЕДСТАВЛЕНИЯ НАУЧНЫХ ДОСТИЖЕНИЙ.....

AVANESYAN H. M. “MODERN PSYCHOLOGY” - CURRENT BOARD OF PUBLIC PRESENTATION OF SCIENTIFIC ACHIEVEMENTS

ԼՈԲՅԱՆ Ա. Բ., ԱՂՈՒԶՈՒՄՅԱՆ Ռ. Վ. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՅՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 8

Локян А. Б., Агузумцян Р. В. СТАНОВЛЕНИЕ ПСИХОЛОГИИ УПРАВЛЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

LOKYAN A. B., AGHUZUMTSYAN R. V. THE FORMATION OF PSYCHOLOGY OF MANAGEMENT IN THE REPUBLIC OF ARMENIA.....

ԲԵՐԲԵՐՅԱՆ Ա. Տ. ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ СИСТЕМЫ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ АРМЕНИИ: ГУМАНИЗАЦИЯ ИЛИ ГУМАНИТАРИЗАЦИЯ?..... 19

ԲԵՐԲԵՐՅԱՆ Ա. Ս. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ. ՀՈՒՄԱՆԻԶԱՑԻԱ ԿԱՄ ՀՈՒՄԱՆԻՏԱՐԻԶԱՑԻԱՄ

BERBERYAN A. S. PERSPECTIVES OF DEVELOPMENT OF THE HIGHER EDUCATION SYSTEM OF ARMENIA: HUMANIZATION OR HUMANITARIZATION?.....

ԲԱԲԱՅԱՆ Հ. Ա. ՍՊՈՐՏԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ, ԶԱՐԳԱՅՈՒՄՆ ՈՒ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.....29

БАБАЯН А. А. ИСТОКИ СПОРТИВНОЙ ПСИХОЛОГИИ, РАЗВИТИЕ И НЫНЕШНЕЕ СОСТОЯНИЕ В АРМЕНИИ

BAVAYAN H. A. THE ORIGIN OF SPORTS PSYCHOLOGY ITS DEVELOPMENT AND CURRENT STATE IN ARMENIA

ԴԱՎԻԱՆ Ա. Գ. ԱՆՁԻ ԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ37

Давтян А. Г. ОСОБЕННОСТИ ПСИХОЛОГИЧЕСКИХ ФАКТОРОВ ОБУСЛАВЛИВАЮЩИХ РАБОТОСПОСОБНОСТЬ ЧЕЛОВЕКА.....

DAVTYAN A. G. THE FEATURES OF PSYCHOLOGICAL FACTORS DETERMINING THE WORKABILITY OF HUMAN

ԶԵՅՆԱԼՅԱՆ Ն. Ա. ԱՊՐԻԼՅԱՆ ՔԱՌՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿՈՒՅԹԻ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 46

Зейналян Н. А. ОСОБЕННОСТИ ИНФОРМАЦИИ О ЧЕТЫРЕХДНЕВНОЙ АПРЕЛЬСКОЙ ВОЙНЕ В СМИ

ZEYNALYAN N. A. INFORMATION FEATURES OF FOUR DAY APRIL WAR IN MASS MEDIA

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ն. Ի. ՔՈՓԻՆԳ ՎԱՐՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ57

КАРАПЕТЯН Н. И. ИЗУЧЕНИЕ ОСОБЕННОСТЕЙ СОЦИАЛЬНОГО САМОКОНТРОЛЯ И КОПИНГ ПОВЕДЕНИЯ	
KARAPETYAN N. I. THE STUDY OF PECULIARITIES OF SOCIAL SELF-CONTROL AND COPING BEHAVIOUR	
ՀԱԼԱՋՅԱՆ Վ. Մ. Անձի Հոգեվիճաչի եվ ԱՇխԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԵՐԱԺՇՏԱԹԵՐԱՊԻԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ . 63	
ГЛАДЖЯН В. М. ПРОБЛЕМА ПРИМЕНЕНИЯ МУЗЫКОТЕРАПИИ ДЛЯ РЕГУЛЯЦИИ ПСИХИЧЕСКОГО СОСТОЯНИЯ И РАБОТОСПОСОБНОСТИ ЛИЧНОСТИ	
HALAJYAN W. M. THE PROBLEM OF USE OF MUSICAL THERAPY FOR REGULATION BY MENTAL STATE AND OPERABILITY OF THE PERSON	
ՀԱԿՈՔՋԱՆՅԱՆ Ա. Ռ. Անձի ԻՆՔՆԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԴԻԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԴԵՐԸ ԱՌՈՂՋ ԿԵՆՍԱԿԵՐՊ ՎԱՐԵԼՈՒ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 69	
АКОБДЖАНЯН А. Р. РОЛЬ САМОЭФФЕКТИВНОСТИ И ВНУТРЕННЕЙ МОТИВАЦИИ В ФОРМИРОВАНИИ НАМЕРЕНИЯ ВЕСТИ ЗДОРОВЫЙ ОБРАЗ ЖИЗНИ	
НАКОВJANYAN A. R. THE ROLE OF SELF-EFFICACY AND INTRINSIC MOTIVATION IN PREDICTON OF HEALTHY LIFESTYLE INTENTIONS	
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ն. Ա Անձի ԻՆՔՆԻՐԱՅՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	80
АРУТЮНЯН Н. А. ОСОБЕННОСТИ САМОРЕАЛИЗАЦИИ ЛИЧНОСТИ В СУПРУЖЕСКИХ ОТНОШЕНИЯХ	
HARUTYUNYAN N. A. PECULIARITIES OF PERSON' SELF-REALIZATION IN MARITAL RELATIONS	
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հ. Ռ. ՃԳՆԱԺԱՄ, ԹԵ՞ ԿՐԻԶԻՍ: ԿԵՂԾ ԲԵԿՄԱՆ ԱՊՐՈՒՄՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 88	
ОГАННИСЯН Г. Р. КРИЗИС, ИЛИ КРИЗИСНОЕ СТРАДАНИЕ? ПСИХОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ ПСЕВДОКРИЗИСНЫХ ПЕРЕЖИВАНИЙ	
HOVHANNISYAN H. R. IS IT SUFFERING OR CRISIS? PSYCHOLOGICAL ANALYSIS OF THE PSEUDO CRISIS EXPERIENCES	
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ս. Վ. ՖՈԿՈՒՍ-ԽՄԲԵՐԻ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՐԿՈՒՄԸ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԷՄՊԻՐԻԿ ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	98
ОГАННИСЯН С. В. ПРИМЕНЕНИЕ МЕТОДА ФОКУС-ГРУПП В ПСИХОЛОГИЧЕСКИХ ЭМПИРИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЯХ	
HOVHANNISYAN S. V. APPLICATION OF THE FOCUS GROUP METHOD IN PSYCHOLOGICAL EMPIRICAL RESEARCHES	
ՍԱՐԳՍՅԱՆ Լ. Ս. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐՔԻ ԴԻԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ	109
САРГСЯН Л. С. МОТИВЫ ПОТРЕБИТЕЛЬСКОГО ПОВЕДЕНИЯ АРМЯНСКОЙ МОЛОДЕЖИ	
SARGSYAN L. S. MOTIVES OF CONSUMER BEHAVIOR AMONG ARMENIAN YOUNG ADULTS	

«Արդի հոգեբանություն» գիտական հանդեսի խմբագրական խորհուրդ

1. **Ավանեսյան Հ. Մ.**, գլխավոր խմբագիր, հ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ Ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ, avanesyanh@ysu.am
2. **Բերբերյան Ա. Ս.**, հ.գ.դ., պրոֆեսոր, Հոգեբանության ամբիոնի վարիչ, Ռուս-Հայկական (Սլավոնական) Համալսարան, asya.berberian@rau.am
3. **Մարգարյան Վ. Հ.**, հ.գ.դ., դոցենտ, գնդապետ, ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, margaryanw@mail.ru
4. **Նաղդյան Ռ. Մ.**, հ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ, Գիտակրթական միջազգային կենտրոն (ԳԿՄԿ), հոգեբանության ամբիոն, r.nagdyan@mail.ru
5. **Լոքյան Ա. Բ.**, հ.գ.դ., դոցենտ, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր, alokyandoc@mail.ru
6. **Սեդրակյան Ս. Ա.**, հ.գ.դ., պրոֆեսոր, Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի ռեկտոր, sedraksedrakyanyan@yahoo.com
7. **Հարությունյան Ս. Ֆ.**, հ.գ.դ., ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, hlana68@gmail.com
8. **Գրիգորյան Վ. Հ.**, կ.գ.դ., ընդհանուր հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, ԵՊՀ, vilena.grigoryan@ysu.am
9. **Աղուզումցյան Ռ. Վ.**, հ.գ.թ., պրոֆեսոր, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչ, rvaghuzumtsyan@list.ru
10. **Բաղդասարյան Ա. Ս.**, փ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դեկան, phil_psy@ysu.am
11. **Խաչատրյան Ն. Գ.**, հ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի վարիչ, xnarine@gmail.com
12. **Գասպարյան Խ. Վ.**, հ.գ.թ., դոցենտ, ԵՊԲՀ Բժշկական հոգեբանության ամբիոնի վարիչ, kvgaspar@yahoo.com
13. **Բաբայան Հ. Ա.**, հ.գ.թ., պրոֆեսոր, Ֆիզիկական կուլտուրայի Հայաստանի պետական ինստիտուտի հոգեբանության և մանկավարժության ամբիոնի վարիչ, kafpsy@mail.ru
14. **Պապոյան Վ. Ռ.**, հ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոն vpapoyan63@gmail.com
15. **Հովհաննիսյան Ս. Վ.**, մ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոն, s.hovhannisyanyan@ysu.am
16. **Ասրիյան Է. Վ.**, հ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոն, elina.asriyan@gmail.com

«Արդի հոգեբանություն» գիտական հանդեսի միջազգային գիտական խորհուրդ

17. **Իմեդաձե Ի. Վ.**, հ.գ.դ., Վրաստանի ԳԱԱ թղթակից անդամ, Իվանե Զավախիշվիլի անվ. Թբիլիսիի Պետական Համալսարան, Թբիլիսի, Վրաստան, irimedi@yahoo.com
18. **Բասկո L.**, Գիտությունների դոկտոր, Ավինյոնի համալսարան, Ավինյոն, Ֆրանսիա, louis.basco@univ-avignon.fr
19. **Ալախվերդով Վ. Մ.**, հ.գ.դ., պրոֆեսոր, Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարան, Ռուսաստան, m.allakhverdov@smolny.org
20. **Արյան Ա.** Հոգեբանության դոկտոր, Բուենոս-Այրեսի համալսարան, Արգենտինա, asbed22@gmail.com
21. **Ակոպով Գ. Վ.**, հ.գ.դ., պրոֆեսոր, Պոլվոժսկի պետական սոցիալ-հումանիտար ակադեմիա, Սամարա, Ռուսաստան, akolubov@mail.ru
22. **Երմակով Պ. Ն.**, կ.գ.դ., պրոֆեսոր, Հարավային դաշնային համալսարան, Ռուսաստան, paver@sfnedu.ru

Editorial board of “Modern Psychology” Scientific Bulletin

1. **Avanesyan H. M.**, Chairman of the International Conference, Doctor of Psychology, Prof., Head of Chair of General Psychology, YSU, Yerevan
2. **Berberyan A. S.**, Doctor of Psychology, Prof., Head of Chair of Psychology, RAU (Slavonic), Yerevan
3. **Margaryan V. H.**, Doctor of Psychology, National Institute of Strategic Studies MOD RA, Yerevan
4. **Naghdyan R. M.**, Doctor of Psychology, prof., National Academy of Sciences of the Republic of Armenia, ISEC, Chair of Psychology
5. **Harutyunyan S. F.**, Doctor of Psychology, Professor Chair of Personality Psychology, YSU, Yerevan
6. **Lokyan A. B.**, Doctor of Psychology, ass. prof., Rector of Public Administration Academy of RA
7. **Grigoryan V. H.**, Doctor of Biology, Prof. of Dep. of human and animal physiology, YSU, Yerevan
8. **Sedrakyan S. A.**, PhD, prof., Rector of “Urartu” University of Practical Psychology and Sociology, Yerevan
9. **Aghuzumtsyan R. V.**, PhD, prof., Dep. of Psychology of Management of PAA RA, Yerevan
10. **Baghdasaryan A. S.**, PhD, ass. prof., Dean of Faculty of Philosophy and Psychology, YSU, Yerevan
11. **Khachatryan N. G.**, PhD., ass.prof., Head of Chair of Personality Psychology, YSU, Yerevan

12. **Gasparyan Kh. V.**, PhD, ass.prof., Head of Department of Medical Psychology, YSMU after M.Heratsi, Yerevan
13. **Babayan H. A.**, PhD, Prof., Head of Chair of Psychology and Pedagogy, ASIPhC, Yerevan,
14. **Папоян В. Р.**, PhD, ass.prof., Chair of General Psychology, YSU, Yerevan
15. **Asriyan E. V.**, PhD. ass.prof., Chair of General Psychology, YSU, Yerevan
16. **Hovhannisyan S. V.**, PhD, ass.prof., Chair of General Psychology, YSU, Yerevan

International Scientific Board of “Modern Psychology” Scientific Bulletin

17. **Imedadze I. V.**, Doctor of Psychology, Prof., Corresponding Member of Georgian NAS, Tbilisi State University after Ivane Javakhishvili, Tbilisi, Georgia
18. **Basco L.**, PhD, Universite d'Avignon et des Pays de Vaucluse, Avignon, France
19. **Allakhverdov V. M.**, Doctor of Psychology, prof., SPSU, Saint-Petersburg, Russia
20. **Aryan A.**, Doctor of Psychology, prof., University of Buenos-Aires, Argentina
21. **Akopov G. V.**, Doctor of Psychology, Samara State Academy of Social Sciences and Humanities, Samara, Russia
22. **Yermakov P. N.**, Doctor of Biology, prof., Southern Federal University of Russian Federation, Russia

Редакционный комитет научного вестника «Актуальная психология»

1. **Аванесян Г. М.**, Председатель оргкомитета, д.п.н., профессор, зав. кафедрой общей психологии, ЕГУ, Ереван,
2. **Берберян А. С.**, д.п.с.н., профессор, зав. кафедрой психологии РАУ, Ереван
3. **Маргарян В. Г.**, д.п.с.н., доцент, Национальный Исследовательский Университет Обороны Мо Ра, Ереван
4. **Лосян А. Б.**, д.п.с.н., доцент, ректор АГУ РА, Ереван
5. **Нагдян Р. М.**, д.п.с.н., профессор, Международный научно-образовательный центр НАН РА, Ереван
6. **Седракян С. А.**, д.п.с.н., профессор, ректор Университета Практической Психологии и Социологии Урарту, Ереван,
7. **Арутюнян С. Ф.**, д.п.с.н., профессор кафедры психологии личности ЕГУ, Ереван
8. **Григорян В. Г.**, д.б.н., профессор, кафедра общей психологии, ЕГУ, Ереван
9. **Агузумцян Р. В.**, к.п.с.н., профессор, зав. кафедрой психологии управления, АГУ РА
10. **Багдасарян А. С.**, к.ф.н., доцент, декан факультета философии и психологии ЕГУ, Ереван
11. **Хачатрян Н. Г.**, к.п.с.н., доцент, зав. кафедрой психологии личности ЕГУ, Ереван
12. **Гаспарян Х. В.**, к.п.с.н., профессор, зав. кафедрой медицинской психологии ЕГМУ им. М. Гераци

13. **Бабаян А. А.**, к.п.с.н., профессор, зав. кафедрой психологии и педагогики ГИФКСА, Ереван
14. **Папоян В. Р.**, к.п.с.н., доцент, кафедрья общей психологии, ЕГУ, Ереван
15. **Оганесян С. В.**, к.п.с.н., доцент, кафедрья общей психологии, ЕГУ, Ереван
16. **Асриян Э. В.**, к.п.с.н., доцент, кафедрья общей психологии, ЕГУ, Ереван

Международный научный комитет вестника «Актуальная психология»

17. **Имедадзе И. В.**, д.п.с.н., член-корреспондент Национальной АН Грузии, Тбилисский государственный университет имени Иванэ Джавахишвили, Тбилиси, Грузия
18. **Баско Л.**, доктор педагогических наук, Авиньонский университет, Авиньон, Франция
19. **Аллахвердов В. М.**, д. п.с.н., профессор, Санкт-Петербургский государственный университет, Санкт-Петербург, Россия
20. **Арян А.**, д.п.с.н, Университет Буэнос-Айреса, Аргентина
21. **Акопов Г. В.**, д.п.с.н., профессор, Самарский государственный социально-педагогический университет, Самара, Россия
22. **Ермаков П. Н.**, д.б.н., профессор, Южный федеральный университет РФ

ՀՈՂՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հոդվածները պետք է ձևակերպվեն հետևյալ պահանջներին համապատասխան.

1. Նյութի ծավալը՝ մինչև 10 էջ, ներառյալ գրականության ցանկը և եռալեզու ամփոփումները (էջի ձևաչափը՝ A4, տառատեսակը՝ Sylfaen, տառաչափը՝ 12, տողամիջյան տարածքը՝ 1.15, վերևի, ներքևի, աջ և ձախ լուսանցքները՝ 2.0 սմ, հավասարեցումն ըստ լայնության, առանց տողադարձերի, պարբերության խորությունը՝ 0.75 սմ, էջերը համարակալվում են ներքևից): Հոդվածներում նկարների և աղյուսակների քանակը չպետք է գերազանցի 2-ը, յուրաքանչյուր էջի ¼ -ի չափով, լայնությունը՝ 12.5 սմ (ձևաչափը՝ jpg, png):
2. Հոդվածի վերնագիրը պետք է գրել կենտրոնում՝ 12pt տառաչափով, գլխատառերով և մզեցված (Bold): Աշխատանքի ֆինանսավորման աղբյուրը (եթե առկա է) նշվում է հոդվածի սկզբում՝ վերնագրից հետո, հավասարեցումն ըստ կենտրոնի, տառաչափը՝ 10 (օրինակ՝ «Հետազոտությունն անցկացվել է.....(պրոյեկտ/նախագիծ №.....)-ի ֆինանսական աջակցությամբ»:
3. Վերնագրից հետո նոր տողում շեղատառերով(*italic*) նշվում է հեղինակի ազգանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը, այնուհետև փակագծերում հաստատությունը, քաղաքը, երկիրը: Հաջորդ տողում հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն՝ 10 տառաչափով, հավասարեցումը՝ աջից:
4. Մեկ տող հետո շարադրվում է հոդվածի ամփոփագիրը 12 տառաչափով, հավասարեցումը ըստ երկու կողմերի: Այն պետք է արտացոլի աշխատանքի հիմնական էությունը՝ նպատակ, խնդիրներ, արդյունքներ: Այնուհետև նոր տողում հանգուցային բառերը՝ մինչև 6 բառ, 9 տառաչափով: Հոդվածի տեքստն առանձնանում է դատարկ տողով:
5. Հիմնական տեքստից հետո գրվում է գրականության ցանկն (նշելով՝ Գրականություն) այբբենական կարգով (10-ից ոչ ավել) սկզբում հոդվածի լեզվով աղբյուրները, այնուհետև՝ այլալեզու աղբյուրները: Գրականության ցանկում պետք է նշված լինեն հեղինակ(ներ)ի ազգանունը, անվան առաջին տառը, աշխատության անվանումը, հրատարակման վայրը, թվականը, ընդհանուր էջերի քանակը կամ օգտագործված տեղեկատվության էջերը: Էլեկտրոնային աղբյուրների դեպքում նշվում են հեղինակների ազգանուններն ու անվանատառերը, աշխատանքի վերնագիրը, կայքի հասցեն ամբողջությամբ ([link](#)-ը), հրապարակման (եթե հայտնի է) և վերջին այցելության ամսաթիվը, ամիսը, տարին:
6. Տեքստում գրականության մեջբերումը նշվում է ուղիղ փակագծերում — [...]՝ գրելով համապատասխան գրքի համարը և էջերը: Հոդվածի վերջում բերվում է ամփոփագիր ռուսերեն և անգլերեն լեզվով՝ մինչև 100 բառ, ներառյալ՝ վերնագիրը, հեղինակի ազգանունը, անվան սկզբնատառը և հանգուցային բառերը:
7. Էլեկտրոնային ֆայլի անվանումը գրվում է հոդվածի լեզվով: Այն պետք է բովանդակի հեղինակի ազգանունը և անվան սկզբնատառերը, որից հետո անհրաժեշտ է նշել նյութի ձևը՝ հոդված: Օրինակ՝ «Պետրոսյան Ա.Ա._հոդված», «Петросян А.А_статья», «Petrosyan A.A. _article»:

8. Ուսանողները (մագիստրոսներ, ասպիրանտներ, հայցորդներ) հոդվածին պետք է կցեն նաև գիտական ղեկավարի երաշխավորագիրը, որի օրինակը կարելի է գտնել psyarm.com կայքում:

Շազվկոմիտեն իրավունք ունի մերժելու այն հոդվածները, որոնք չեն համապատասխանում տրված չափանիշներին:

ТРЕБОВАНИЯ К ОФОРМЛЕНИЮ СТАТЕЙ

Статья представляется в электронном виде (высылается на e-mail psyconf@ysu.am в формате MS Word с расширением .doc).

1. Объем статьи не должен превышать 10 страниц, включая библиографию и аннотации на русском и английском (формат страницы А4; шрифт – Sylfaen, кегль шрифта– 12; межстрочный интервал – 1.15; поля: верхнее, нижнее, правое, левое – 2.0 см, выравнивание по ширине; без переносов; абзацный отступ – 0.75см; страницы нумеруются снизу). Число рисунков и таблиц не должно превышать 2-х, размер каждого-1/4 страницы, ширина-12.5см (в формате jpg, png).
2. Заглавие статьи набирается жирным (Bold), шрифтом 12pt заглавными буквами (Caps Lock) по центру. Источник финансирования работы (при наличии) указывается в самом начале статьи, выравнивание по центру, кегль шрифта - 10pt, (например: «Исследование выполнено при финансовой поддержке (проект №.....)»).
3. После заглавия на следующей строке пишется фамилия и инициалы автора/авторов, далее в скобках учреждение, город, страна(стиль-Italic), на следующей строке-адрес электронной почты автора– выравнивание по правому краю, шрифт 10pt.
4. На следующей строке шрифтом 12 pt приводится аннотация статьи, в которой кратко будет представлена основная суть статьи: цель, задачи, результаты. Далее на следующей строке – ключевые слова, не более 6, шрифтом 9. Основной текст статьи отделяется пустой строкой.
5. После основного текста дается список использованной литературы (Литература) в алфавитном порядке, сначала русскоязычные источники, затем иностранные(не более 10). Литература должна включать фамилию, инициалы автора, название работы, место и год публикации, количество страниц или использованные страницы. В случае электронных источников указываются фамилия и инициалы автора, название работы, полный адрес сайта, и дата, месяц, год публикации (если известно) и последнего посещения.
6. Ссылки на литературные сноски в тексте приводятся в квадратных скобках [...] с указанием порядкового номера источника и страницы. В конце статьи приводится аннотация на английском языке до 100 слов, включая название статьи, фамилия, инициалы автора и ключевые слова (key words-не больше 6 слов).

7. Файл с текстом статьи именуется русскими буквами по фамилии и инициалам автора. После ФИО автора в названия необходимо указать тип материалов: статья. Пример: «Պետրոսյան Ա.Ա._հոդված», «Петросян А.А_статья», «Petrosyan A.A._article».
8. Студенты (магистры, аспиранты) должны прикрепить рекомендацию научного руководителя (файл можете найти на сайте psyarm.com).

Оргкомитет имеет право отказать в публикации тех статей, которые не соответствуют требованиям.

REQUIREMENTS FOR ARTICLES

The article will be represented in electronic form and formulated in accordance with the following requirements:

1. The article should not exceed 10 pages / included bibliography and abstract /, page format – A4, font – Sylfaen, font size – 12, line spacing- 1.15, page margins: top, bottom, right, left -2.0 cm, text alignment – justified, paragraph indentation-0.75 cm, pages are numbered from the bottom. The number of tables and figures should not exceed 2, the size of each- ¼ page, width- 12.5cm (format- jpg, png).
2. The title of the article is typed with bold style and CAPS LOCK in the center, font-12. The source of financial funding (if it exists) will be indicated at the beginning of article, alignment on center, size-10 (example: «The research is funded by..... (Project №.....)»).
3. After the title, on the next line the surname and initials of the author/authors are written, then the institution, city, country (in parentheses) with right alignment (*italic* style, 10 font size), then on the next line-the e-mail address of author.
4. On the next line it will be a summary in English of up to 100 words, including the title and keywords (no more than 6), font size-12. The main text of the article is detached by an empty line.
5. After the main text follows the reference list with alphabetical order (maximum 10). The source of reference should include surname and initials of author, title, place and date of publication, number of overall or used pages. Internet sources must include surname and initials of author, title, the internet link (http), the date of publication (if exists) and last update. Links to literature mention in the text (in square brackets, indicating the serial number of the source and pages).
6. Electronic file with the text is named with Latin letters by surname and initials of the author. After the name of author it is required to indicate the type of material: article. Example: “Poghosyan A.A._article”.
7. Students (masters, PhD students) should attach the recommendation of the supervisor (the file can be found on the site psyarm.com).

ԱՐԴԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Խմբագրության հասցեն. Երևան, Աբովյան 52 ա փող., ԵՊՀ, 8^{-րդ} մասնաշենք
Адрес редакции: Ереван, ул. Абовяна 52 а, ЕГУ, 8^{-ое} здание
Address: Yerevan, Abovyan 52 a str., 8th building

Համակարգչային ձևավորում՝
Компьютерная верстка
Computer design

Ս. Պապոյան, Ն. Կարապետյան
С. Папоян, Н. Карапетян
S. Papoyan, N. Karapetyan

Ստորագրված է տպագրության 01. 05. 2018
Տպաքանակը՝ 100: Չափսը՝ 70x100 1/16: Թուղթը՝ օֆսեթ:



Տպագրվել է «Անտարես» հրատարակչատանը
Երևան 0009, Մաշտոցի 50^ա/1
Հեռ.՝ +(374 10) 58 10 59, 56 15 26
Հեռ. /ֆաքս՝ +(374 10) 58 76 69
antares@antares.am
www.antares.am